ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

***ԹԵՄԱ՝*** *Հայաստանի Հանրապետության դատական համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը*

***ԿԱՏԱՐՈՂ՝*** *Պապոյան Ալվարդ*

***ՂԵԿԱՎԱՐ՝*** *Ռուդիկ Վարդանյան*

# Հայաստանի Հանրապետության դատական համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը

**Պապոյան Ալվարդ**

***Հանգուցային բառեր.*** *դատական, բարեփոխումներ, սահմանադրական, ժամանակացույց, իրավական, ինքնակառավարում, բարձրագույն դատական խորհուրդ*

## Նախաբան

Այսօր ցանկացած ժամանակակից պետությունում հատուկ տեղ է զբաղեցնում դատական համակարգը: Դատական համակարգը համարվում է դատական իշխանության կրողը, ի տարբերություն պետական իշխանության այլ առանձին ճյուղերի, որոնք նման իշխանությամբ օժտված չեն: Որպես դատական համակարգերի հիմքում ընկած դատարանակազմական սկզբունքները՝ կարող ենք առանձնացնել արդարադատության մատչելիությունը, արդարադատության խնայողականությունը, արդարադատության արագությունը, ինքնավերահսկողության անթույլատրելիությունը, դատական վերահսկողության առկայությունը, դատական համակարգի տարրերի անկախությունը միմյանցից, միասնականությունը, սահմանադրականութունը:

Դատական իշխանության անկախության էությունը բացահայտելիս առանձին տեսաբաններ այն դիտարկում են որպես իշխանության այս թևի բնութագրական հատկանիշ՝ դատական իշխանությունը բնորոշելով որպես պետական իշխանության անկախ և ինքնուրույն ճյուղ[5, 11-13]:

Դատական իշխանության դերակատարությունը որոշակի իմաստով հակասական է: Մի կողմից դատական իշխանությունը դիտվում է որպես ուժեղ իշխանության ճյուղ, քանզի միայն վերջինս կարող է կիրառել այնպիսի միջոցներ, որպիսիք կապված են մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման, մյուս կողմից այն հարաբերականորեն, թույլ իշխանական ճյուղ է: Դատական իշխանությունը չունի ուժային կառույցներ, ինչպես գործադիր իշխանությունը, իսկ դատական կարգադրիչների ինստիտուտը բավականին թույլ

օղակ է: Իշխանական այս ճյուղի ուժային հենակետ հանդիսանում է արդարադատության իրականացումը:

Հայաստանի Հանրապետության դատական համակարգը կարելի է բնորոշել որպես ՀՀ Սահմանադրությամբ սահմանված բոլոր դատարանների համակցություն, որն օժտված է դատական իշխանություն իրականացնելու լիազորությամբ:

Դատական իշխանության անկախության ապահովումը Հայաստանի Հանրապետության առջև ծառացած կարևորագույն մարտահրավերներից է: Նոր փուլ մտած դատաիրավական բարեփոխումների առանցքային նպատակը կայանում է նրանում, որպեսզի դատական իշխանությունը և դրա կառուցվածքը ոչ միայն ձևականորեն, այլև իրականում նպաստեն լիակատար և արհեստավարժ արդարադատության իրականացմանը՝ զերծ ցանկացած կամայական միջամտություններից: Դատաիրավական բարեփոխումները ՀՀ-ում սկսվել են անկախացման առաջին իսկ տարիներից և հանդիպել են այնպիսի մարտահրավերների, որոնք բնորոշ են ժողովրդավարության ուղին բռնած թերևս բոլոր երկրներին: Անցած ժամանակահատվածում բավականին մեծ աշխատանքներ են կատարվել: Ստեղծվել է եռաստիճան դատական համակարգ, դատարանները դարձել են առավել մատչելի, ներդրվել են նոր մեխանիզմներ դատական իշանության անկախությունն ապահովելու նպատակով, սակայն ժամանակի պահանջներին համապատասխանող դատաիրավական համակարգ ունենալու համար դեռևս կան չլուծված խնդիրներ: Մասնավորապես, դեռևս անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել անկախ և հաշվետու արդարադատության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, արդարադատության հասանելիության, արդյունավետության և թափանցիկության ապահովման ուղղությամբ: Նշվածի գործնական հաջողությունն ու արդյունքի գնահատումը հնարավոր է բացառապես դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության բարձրացման միջոցով:

Իրական ժողովրդավարական և իրավական պետության ձևավորումը անհնար է առանց ուժեղ և անկախ դատական իշխանության: Դատական իշխանության անկախության և ինքնուրույնության սկզբունքի իրացածության աստիճանը իրավական պետության կայացածության և ժողովրդավարական իրավաքաղաքական ռեժիմի ցուցանիշն է [1, 18]:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են դատաիրավական բարեփոխումներ, որոնց առանցքային նպատակը կայանում է նրանում, որ դատական իշխանությունը ոչ միայն ձևականորեն, այլև իրականում նպաստի պրոֆեսիոնալ արդարադատության իրականացմանը և հեռու մնա ցանկացած միջամտություններից: Կարելի է ասել, որ Հայաստանի Հանրապետության առջև ծառացած է կարևոր մարտահրավեր՝ ապահովել դատական իշխանության անկախությունը [2, 44]:

Հանրապետության գործող դատական համակարգը ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ անհրաժեշտ է անցկացնել արմատական դատաիրավական բարեփոխուներ, մշակել ու ներդնել մարդու իրավունքների ու ազատությունների առաջնայնության վրա կառուցված, հանրության պահանջներից բխող դատական համակարգ:

Աշխատանքի նպատակը Հայաստանի Հանրապետության դատական իշխանության համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության դրույթների կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Որպես իրավական հիմք կազմել են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ դատական օրենսգիրքը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, ինչպես նաև ուսումնասիրվող օբյեկտին առնչվող այլ օրենքները և իրավական ակտերը: Կիրառվել են ինչպես ընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական, վերլուծական, այնպես էլ հատուկ մեթոդները, ինչպիսիք են՝ պատմական, իրավահամեմատական, համակարգակառուցվածքային, դոկտրինալ մեկնաբանման և սոցիոլոգիական մեթոդները:

## Բովանդակությունը

1990 թվականի օգոստոսի 23-ին հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, որը ճանաչեց իրավական, ժողովրդավարական, սոցիալական, իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա գործող պետության կառուցման անհրաժեշտությունը: Իրական անկախության ձեռբերմանը հաջորդեց տարբեր տնտեսական, միջազգային խնդիրների առաջացումը, որոնց պայմաններում դատաիրավական բարեփոխումների անցկացումը ուղղակի հնարավոր չէր՝ մանավանդ, սպասվում էր Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության ընդունումը: 1991-1998 թթ. դատարանակազմության մեջ կատարված փոփոխաթյուններից ու լրացումներից էական էին միայն կոլեգիալության սկզբունքից հրաժարվելը, ժողովրդական ատենակալների ինստիտուտի մասնակի վերացումը և Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի քրեական կոլեգիայի՝ օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները վճռաբեկության կարգով Գերագույն դատարանի նախագահությանը գանգատարկելու և բողոքարկելու արգելքի վերացումը: 1995 թվականի հուլիսի 5-ին հանրաքվեի միջոցով հայ ժողովուրդն ընդունեց նոր Սահմանադրություն, որը, ժողովրդավարական և իրավական պետության կառուցման պահանջներին համապատասխան, հռչակեց օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը (ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995թ., հոդված 5)՝ դրանով իսկ դառնալով Հայաստանում դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի իրականացման հիմքը:

Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության ընթացքում դատաիրավական համակարգի զարգացումը մեկնարկել է 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ:

Սահմանադրությունն ամրագրեց իշխանության երեք՝ դատական, օրենսդիր և գործադիր ճյուղերի տարանջատումը, ինչպես նաև ձևավորեց Սահմանադրական դատարան և Արդարադատության խորհուրդ՝ իբրև դատական համակարգի բարձրագույն մարմին:

1996 թվականին ՀՀ նախագահը ձևավորեց դատաիրավական առաջին բարեփոխումները համակարգող պետական հանձնաժողովը՝ տալով Դատական և

իրավական բարեփոխումների ծրագրի հայեցակարգի մշակման գործընթացի մեկնարկը։ 1997 թվականին պատրաստ էր և հաստատվեց ՀՀ դատաիրավական համակարգի բարեփոխման ժամանակացույցը։

Հատկապես Հայաստանի Հանրապետության Սահմանդրության ընդունումից հետո հրատապ դարձավ դատական բարեփոխման նոր հայեցակարգի մշակումն ու դրա կենսագործումը, որը պետք է հանգեցներ լիիրավ, անկախ դատական իշխանության ստեղծման։ Մշակվեց Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների հայեցակարգ, որը նախատեսում էր Հայաստանի Հանրապետությունում դատարանակազմության և դատավարության կատարելագործում։ Այս գործընթացի առաջին փուլում՝ 1998 թ. Ազգային ժողովը ընդունեց դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենքների փաթեթը[3, 158]։ Հաճախ իրավական գաղափարներն ու նորմերը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների մասին դրույթները կրում են ձևական բնույթ, և ամրագրվում են որպես նպատակներ։ Այս պարագայում կարևոր նշանակություն կարող է ունենալ դատական իշխանաությունը, որն իր անկախությամբ, առանձնացվածությամբ ի զորու կլիներ սահմանափակել պետական իշխանության այլ ճյուղերի կամայականությունը, հուսալիորեն պաշտպանել ամեն մի մարդու և քաղաքացիական հասարակության իրավունքները։

Տարբեր երկրների դատական համակարգեր, կախված հանցագործությունների հանրային վտանգավորության աստիճանից, հանցագործի անձից և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներից, կոնկրետ քրեական գործեր քննող դատարանների դատական կազմի հարցում դրսևորվում է տարբերակված մոտեցում։ Ուստի, ժամանակի ընթացքում, հաշվի առնելով բազմաթիվ գործոններ, անընդհատ անհրաժեշտ է լինելու դատական համակարգի բարեփոխումներ [4]։

«Դատավորի կարգավիճակի մասին», «Դատախազության մասին», «Փաստաբանական ծառայության մասին», «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքները, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, քրեական

դատավարության օրենսգրքերը, որոնք ուժի մեջ մտան 1999 թվականի հունվարի 12-ից։

Այսպիսով նոր օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում նախկին ժողդատարաններից և Գերագույն դատարանից բաղկացած երկաստիճան դատական համակարգից անցում կատարվեց առաջին ատյանի դատարաններից, վերաքննիչ դատարաններից և Վճռաբեկ դատարանից կազմված եռաստիճան դատական համակարգի [10]։ Ստեղծված դատական համակարգը, որոշ բացառություններով, համապատասխանում էր դատական համակարգերի կառուցման ու գործունեության ժողովրդավարական ընդհանուր սկզբունքներին։ Դատաիրավական բարեփոխումների ամենամեծ հաջողությունը միասնական, ինտեգրված դատական համակարգի հիմնումն էր։

ՀՀ դատական օրենսգրքով նշվեցին դատական ինքնակառավարման մարմինները, դրանց դերն ու իրավազորության շրջանակը, ստեղծվեց դատական կարգադրիչների ծառայությունը, պարզեցվեց դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ընթացակարգը, ամրագրվեց նրանց վարքագծի հիմնական կանոնները և այլն։

Հասարակության լայն շրջանակների՝ օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկացվածության, իրավագիտակցության բարձրացման, իրավական ակտերի նախագծման փուլում հասարակության կարծիքը հաշվի առնելու տեսանկյունից կարելի է առանձնացնել այս փուլում շահագործման հանձնված ՀՀ օրենսդրական բազայի տեղեկատվական որոնողական «Արլիս» համակարգի գործարկումը

2008 թվականից ի վեր օրենսդրական ակտերի բոլոր նախագծերը հանրային քննարկման էին դրվում ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետային կայքում, ինչն ապահովում էր նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները [11]։

Սահմանադրական բարեփոխումներից և դրա հետևանքը հանդիսացող նոր դատական օրենսգրքի ընդունումից հետո ՀՀ դատական համակարգը ենթարկվել է արմատական փոփոխությունների։

2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով սահմանադրի կողմից նախանշվեց նոր անկախ պետական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի ստեղծումը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առանձին հոդվածով հռչակվեց, որ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 7-րդ գլխի դրույթներով ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ եռաստիճան դատական համակարգի միջոցով, և որպես այդ գործառույթի անարգել իրականացման երաշխավոր հանդես է գալիս Բարձրագույն դատական խորհուրդը:

Բարձրագույն դատական խորհուրդը կազմավորվում է ժողովրդի ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված բարձր մասնագիտական որակներով օժտված հինգ հեղինակավոր իրավաբան գիտնական անդամից, ինչպես նաև դատական իշխանության ներկայացուցչական մարմնի՝ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված հինգ փորձառու դատավոր անդամից, որոնց ընտրության արդյունքում ապահովվում է բոլոր դատական ատյանների ներկայացվածությունը:

2018 թվականի ապրիլի 9-ին Բարձրագույն դատական խորհուրդը ստանձնեց Սահմանադրությամբ և "Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք" Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով պատվիրակված իր լիազորությունները:

Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների կենսագործման նպատակով սահմանված գործիքակազմը կոչված է ապահովելու Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և "Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք" Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով ամրագրված Հայաստանի Հանրապետությունում նոր որակի եռաստիճան դատական համակարգի կայացումը և դատական իշխանության անկախության ամրապնդումը [6]:

Առաջընթաց է նաև դատավորի թեկնածուներին առաջադրվող պահանջները՝ օտար լեզուների որոշակի մակարդակի իմացությունը, հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառության և իրավագիտության բակալավրի ու մագիստրոսի որակավորման աստիճանի անհրաժեշտությունը: [7, 48]:

Պետական համակարգի ցանկացած բարեփոխում, անկախ իր կարգավորման ոլորտից, բացի ներպետական անհրաժեշտությունից, կրում է միջազգային իրավունքի ազդեցությունը ու հանրության պահանջների կատարումը: Հայաստանի Հանրապետությունը, ընտրելով ժողովրդավարության ուղին, փորձում է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները: Անկախությունից ի վեր իշխանության բոլոր ճյուղերում իրականացվել են բազմաթիվ փոփոխություններ, որոնք կրել են «բարեփոխում», «հիմնանորոգում, վերակառուցում» անվանումները և վերջնական արդյունքում նպատակ են ունեցել իրավիճակները լուծելու ժողովրդավարության հանրաճանաչ սկզբունքների տեսանկյունից:

Հասարակական հարաբերությունների հետագա զարգացումը, ժողովրդավարության արմատավորման նոր խնդիրները, Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար ստանձնած իրավական բարեփոխումների պարտավորությունները թելադրեցին սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների իրականացում: Հայաստանի Հանրապետության՝ միջազգային ինտեգրման ցանկությունը և դրա համար գործի դրվող ջանքերը ստիպում էին առավել խորությամբ հաշվի առնել այն հիմնարար արժեքները, որոնք դրվում էին եվրոպական երկրների միջպետական իրավահարաբերությունների հիմքում՝ հատկապես մարդու իրավունքների բնագավառում: Սահմանադրության 2-րդ գլխում մարդու արժանապատվությունն ամրագրված էր ոչ թե որպես բարձրագույն արժեք, այլ որպես քրեաիրավական պաշտպանության առարկա: Հետևողականորեն իրացված չէր իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որի ենթատեքստում էլ նոր մոտեցումներ էին պահանջվում դատական իշխանության անկախության և համակարգային ամբողջականության սահմանադրական երաշխիքներ ապահովելու հարցերում: Անհրաժեշտ էր միջազգային իրավական չափանիշներին համապատասխանող, ինքնակառավարվող և մարդու իրավունքներն արդյունավետ պաշտպանող դատական իշխանություն:

Դատաիրավական բարեփոխումների առաջին փուլում կատարված աշխատանքների ու անցկացված միջոցառումների անհրաժեշտությունը, բացի ազգային դատական համակարգի կատարելագործման նպատակայնությունից, պայմանավորված էր նաև Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային որոշակի պարտավորությունների ստանձնմամբ:

Եվրոպական միության՝ ժողվրդավարական ու իրավական պետության ստեղծման քաղաքականությունը հաստատելով՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց այդ գաղափարների կենսագործմաը նպաստող մի շարք միջոցառումների իրականացման պարտավորություն, ուղենշվում էին հետևյալ հիմնախնդիրները՝

1. ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն, մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ.

2. ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն երաշխավորող ինստիտուտների կայունության ու արդյունավետության ամրապնդում.

3. դատաիրավական համակարգի բարեփոխումներ.

4. դատաիրավական համակարգի աշխատակիցների համար շարունակական վերապատրաստումների համակարգի հիմնում և զարգացում.

5. դատական վարչարարության ժամանակակից համակարգի ներդրում.

6. մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում.

7. կոռուպցիայի դեմ պայքար և այլն

Իսկ արդեն 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներով սկիզբ դրված երկրորդ փուլով կարելի է ասել, որ անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ չէին ստեղծվել իրավունքի գերակայության սկզբունքի առավել հետևողական իրացման համար, իսկ այս հարցում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարումը երաշխավորված չէր [4]:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ դատաիրավական բարեփոխումների գործընթացը շարունակական երևույթ է, դրանցով արտահայտվում են համազգային նպատակներն ու ձգտումները: Հնարավոր չէ ստեղծել մի համակարգ, որը կլինի իդեալական և համահունչ գործող հասարակական հարաբերություններին, քանզի հասարակությունն ինքը դադարի վիճակում չի գտնվում և օր-օրի նկատելի է դրա

զարգացումը: Մեր երկրում ընթացող բարեփոխումներն ընդհանուր առմամբ ներառում են գրեթե բոլոր ոլորտները և պետք չէ առանձնացնել դրանցից մեկի կամ մյուսի անհրաժեշտությունը, սակայն հնարավոր չէ նաև հաշվի չառնել իրավական պետության մեջ հասարակությանը հաշվետու դատական համակարգի կարևորությունը:

Ինչպես նկատեցինք դատահիրավական բարեփոխումների երկրորդ փուլի աշխատանքներն ուղղված էին արդեն ստեղծված համակարգի կատարելագործմանը և կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում՝

1. մանրամասն կարգավորում ստացավ Սահմանադրական դատարանի ինստիտուտը՝ որպես հանրապետությունում սահմանադրական արդարադատություն իրականացող միակ ատյան.

2. փոխվեց Վճռաբեկ դատարանի կարգավիճակը. բացի սահմանադրական արդարադատության հարցերից՝ դրան տրվեց բարձրագույն դատական ատյանի կարգավիճակ.

3. ամրագրվեցին դատավորների անկախության լրացուցիչ երաշխիքներ, նրանց անեռնամխելիության, անփոփոխելիության հետ կապված դրույթներ.

4. վերանայվեց արդարադատության խորհրդի կազմավորման և գործունեության կարգը և այլն: Դատահիրավական բարեփոխումների երկու փուլերում ստեղծված կառույցների գործունեության փորձը և դրանց համադրումը համաշխարհային փորձի հետ ցույց տվեցին, որ ամբողջական, համալիր և գործնականորեն հիմնավորված ցանկացած բարեփոխում պետք է տեղի ունենա հասարակության բոլոր շերտերի՝ դրանցից յուրաքանչյուրին բարոյահոգեբանական իմաստով պատրաստ լինելու պարագայում, ինչը ոչ պակաս կարևոր հանգամանք է երկրի ընդհանուր վիճակը, քաղաքական և տնտեսական կացությունը բարելավելու համար: Այդ իսկ պատճառով փորձ էր արվում ստեղծել անհրաժեշտ երաշխիքների այն արժեհամակարգային նվազագույն պահանջները, որոնք ունակ կլինեին ապահովելու ազգային դատական իշխանության մարմինների համակարգի անկախությունը, ինքնավարությունը, նրանց հեղինակությունն ու բնականոն գործունեությունը:

Բազմաթիվ այլ օրենսդրական բացթողումներ ու հիմնախնդիրներ իրենց արտացոլումը գտան «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի համապատասխան կարգադրության մեջ: Ծրագրում դատաիրավական բարեփոխումների հիմանական նպատակ էր համարվում ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանող իրավական և դատական համակարգի ապահովումը:

Այս ենթատքեստում էլ մի քանի տարի անց մշակվեց ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, որին հետևեց ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական հանձնաժողովի կողմից ՀՀ Սահմանադրության նոր փոփոխությունների նախագիծը: Սահմանադրական բարեփոխումների առաջնահերթ հայեցակարգային խնդիրներից մեկն անկախ, ինքնուրույն և օրենքի առջև հաշվետու դատական իշխանության կայացումն էր: Այս առումով բարեփոխումների արդյունավետությունը կապվում էր ոչ թե նոր ինստիտուտների ստեղծման, այլ արդեն կայացած կառույցների կատարելագործման հետ: Կարևորվում էր դատական ինքնակառավարման մարմինների՝ մասնաավորպես Արդարադատության խորհրդի ու Դատավորների ընդհանուր ժողովի դերի և գործունեության արդյունավետության բարձրացումը: Անհրաժեշտություն համարվեց Արդարադատության խորհրդին օժտել սահմանադրական այնպիսի գործառույթներով, որոնցով այն ի զորու կլինի գործուն դեր կատարել դատական իշխանության անկախության ու ինքնուրույնության ապահովման հարցերում: Ժողովրդավարական և իրավական պետությունում դատական համակարգը պետք է կառուցվի որոշակի օրինաչափություններից բխող հստակ սկզբունքների վրա:

## Եզրակացություն

Այսպիսով, դատական ատյանների տեսակները, քանակը, իրավասությունը կամ դրանց հարաբերակցությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե դրանց ամբողջությունը որքանով կարող է երաշխավորել անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը, դատարանի մատչելիությունը, դատավարության խնայողականությունն ու արագությունը, դատական ակտերի վերանայման արդյունավետությունը, իսկ վերջնարդյունքում՝ նաև երկրում իրականացվող արդարադատության պատշաճ որակը։

Կարելի է հավելել նաև այն, որ Սահմանադրական բարեփոխումների արդյունքում առաջին հերթին սահմանադրորեն ամրագրվեցին դատական իշխանության գործառույթային ամբողջականությունը երաշխավորող անհրաժեշտ ու բավարար նախադրյալները, որոնք հիմք են ծառայում նաև դատական իշխանության մարմինների համակարգի ձևավորման համար, էականորեն փոխվեց դատավորի կարգավիճակը, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, դատավորների ընտրության և նշանակման կարգը, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կարգավիճակը, ամրագրվեցին Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի կազմը, կազմավորման կարգն ու լիազորությունները։

## Գրականություն


1. Салимзянова Р. Р. Независимость судебной власти как гарантия правового государства. Казань, 2007,
2. Ղազինյան Գ., «Դատական իշխանության անկախության ապահովման սահմանադրական հիմքերը։
3. Դիլբանդյան Ս. Ա., Հարությունյան Ա. Ռ., Ղազինյան Գ. Ս., Ղուկասյան Հ. Հ. «ՀՀ Դատարանակազմություն և իրավապահպան մարմիններ». Երևան-2009,
4. ՀՀ Սահմանադրություն, 1995թ.,
5. Гуськова А. П. К вопросу о судебной защите прав и свобод человека, гражданина в российском уголовном судопроизводстве // "Российский судья", 2005, № 6,
6. https://court.am/hy/about-council
7. Խաչատրյան Մ.Գ., Խաչատուրյան Դ.Մ. «Դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» (իրավահամեմատական վերլուծություն) Երևան, 2002:
8. Սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ, http://www.parliament.am/
9. Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության դատահիրավական համակարգի բարեփոխման մասին
10. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշում «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքի նախագծերի մասին
11. www.arlis.am, www.legislation.am, www.laws.am
12. www.justice.am

## Հայաստանի Հանրապետության դատական համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը

**Պապոյան Ալվարդ**

***Հանգուցային բառեր.*** *դատական, բարեփոխումներ, սահմանադրական, ժամանակացույց, իրավական, ինքնակառավարում, բարձրագույն դատական խորհուրդ*

Հանրապետության գործող դատական համակարգը ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ անհրաժեշտ է անցկացնել արմատական դատաիրավական բարեփոխուներ, մշակել ու ներդնել մարդու իրավունքների ու ազատությունների առաջնայնության վրա կառուցված, հանրության պահանջներից բխող դատական համակարգ:

Իրական ժողովրդավարական և իրավական պետության ձևավորումը անհնար է առանց ուժեղ և անկախ դատական իշխանության: Դատական իշխանության անկախության և ինքնուրույնության սկզբունքի իրացածության աստիճանը իրավական պետության կայացածության և ժողովրդավարական իրավաքաղաքական ռեժիմի ցուցանիշն է:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են դատաիրավական բարեփոխումներ, որոնց առանցքային նպատակը կայանում է նրանում, որ դատական իշխանությունը ոչ միայն ձևականորեն, այլև իրականում նպաստի պրոֆեսիոնալ արդարադատության իրականացմանը և հեռու մնա ցանկացած միջամտություններից: Կարելի է ասել, որ Հայաստանի Հանրապետության առջև ծառացած է կարևոր մարտահրավեր՝ ապահովել դատական իշխանության անկախությունը:

## Необходимость реформ в судебной системе Республики Армение

**Папоян Алвард**

*Ключевые слова: судебные реформы, конституционный, расписание уроков, законный, самоуправление, высший судебный совет.*

При изучении действующей судебной системы республики, становится ясно, что нужно провести радикальние судебные реформы, разработать и внедрить судебную систему по требованию обшества, построенная на правач и свободах человека.

Формирование настоящего демократического и реального государства невозможно без сильной и независимой судебной власти. Степень реализации принципа самостоятельности и независимости судебной власти является показателем становление правового и политического режима демократического режима.

В Республики Армение, сегодня реализуются судебные реформы. Главное цель которых состоит в том, чтобы судебная власть не только формально, но и фактически содействовала профессиональной справедливости у не допускала вмешательства. Можно сказать, что перед Республикой Армение стоит важное задача по обеспечению независимости судебной власти.

## The necessity of reforming the judicial system of Armenia

**Alvard Papoyan**

Key words: judicial, reforms, constitutional, schedule, juridical, self-management, Supreme Judical Council While studying the Judicial system of the Republic it becomes clear thet making redical juridical reforms is necessary in order to have judicial system based on peoples rights, remands and priority of liberty.

Its impossible to form a real democratic and juridical republic withouy strong and independent judicial power. The degree of independence of judicial system and realization of the principle of independence are the indicator of the formation of a rule-of-law state and democratic political and legal regime.

Today in the Republic of Armenia judicial reform are being carried out which key points are thet the judicial system promotes to have professional jurisdiction not only

formally but also actually and stay away from any interference. We can say thet the main problem for Armenian is to ensure the independence of judicial system.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

*ԹԵՄԱ՝* Մարդու հիմնախնդիրը

*ԿԱՏԱՐՈՂ՝* Արևիկ Յուրիի Աղաջանյան

*ՂԵԿԱՎԱՐ՝* Ռ. Վարդանյան

# I ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

II. Ներածություն ..... 3
III.Մարդու հիմնախնդիրը..... 4
IV Մարդու ճանաչողության խնդիրները Սոկրատեսի փիլիսոփայության մեջ ..... 9
V. Մարդու հիմնախնդիրը Մոնտենի փիլիսոփայական հայացքներում ..... 11
VI.Եզրակացություն ..... 15
VII.Գրականություն ..... 16

## II. Ներածություն

Երբևէ կարող են պատասխան գտնել կանտյան հարցադրումները՝Ինչ կարող եմ իմանալ, ինչ պետք է անեմ, ինչիվրա կարող եմ հուսալ, և վերջապես՝ով է մարդը: Չնայած գիտատեխնիկական աննախադեպ ձեռքբերումներին, այսօր էլ մարդու համար դեռ ամբողջովին հասկանալի չէ՝ով է ինքը և ինչպես է դարձել աշխարհը և իրեն վերակերտող սուբյեկտ: Մարդուն հետաքրքրող երևույթներից էր առանձնապես իր ծագման, երկրի վրա իր առաջացման վարկածը:Կրոնադիցաբանական զրույցներում, առասպելներում ձևավորված գաղափարների, հասկացությունների շնորհիվ կառուցվել են մարդու հիմնահարցերը քննող առաջին տեսական մեկնությունները:Կարելի է ենթադրել, որ մերօրյա մարդու իրավունքների պահանջների տեսանկյունից այն ոչ միայն բարոյական, այլև իրավական հավասարության հիշեցում է հանրահայտ կարգախոսի «Քո ազատությունն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի ազատությունը»:Մարդու հետ կապված փիլիսոփայական ուսմունքներում հնչած ազատության գաղափարը լեյտմոտիվ դարձավ Ֆոյերբախի հայացքներում:Մարդու հետ կապված հիմնախնդրի լուծումը, ըստ Ֆոյերբախի, պետք է ընթանա հանուն մարդու ազատության նշանաբանով, քանի որ ազատությունը մարդկային արժեքներից ամենանագլխավորն ու բարձրագույնն է:Յուրացնելով նյուրովի զարգացնելով Հին Արևելքի մշակութային ժառանգությունը՝հույները շարունակեցին որոնել մարդ-տիեզերքի հարթության նոր կապեր և ձևեր, որի արդյունքում մարդը հայտարարվեց միկրոկոսմ:Առաջինն այդ մասին խոսեց Սոկրատեսը՝մարդու ինքնաճանաչումը դարձնելով նաև տիեզերքի ճանաչման պայման:

## III.Մարդու հիմնախնդիրը

Ինչ հիասքանչ էակ է մարդը, եթե իրոք մարդ է …

Մենանդրոս [1]

Ինչ է նշանակում լինել մարդ: Մարդ լինելը բնությունից է տրված, թե հասարակությունն է մեզ մարդ դարձնում: Արդյոք մարդը եզակի էակ է բնական մյուս էակների համեմատությամբ: Եթե այո, ապա՝ ինչով. մտածողությամբ,խղճով, հոգատարությամբ, թե մարդու էության ավելի կարևոր բնութագրիչներ կան:Անհիշելի ժամանակներից մարդը եղել է փիլիսոփայական մտորումների առարկա: Այդ մասին են խոսում ամենահին հնդկական, չինական, հունական փիլիսոփայական աղբյուրները: Հենց Հունաստանում էլ ձևավորվեց հայտնի կոչը՝«Մարդ, ճանաչիր քեզ, դու կճանաչես տիեզերքն ու աստվածներին»:Այն արտացոլում է մարդկային խնդրի ողջ բարդությունն ու խորությունը:Ճանաչելով ինքն իրեն՝ մարդն ազատություն է ձեռք բերում:Նրան բացահայտվում են Տիեզերքի գաղտնիքները, և նա դառնում է աստվածներին հավասար:Չնայած նրան, որ մարդկային հասարակությունը զարգացման հազարավոր տարիների պատմություն է անցել, դեռևս մարդն իր համար առեղծված է մնացել:

Հիմքեր կան պնդելու, որ մարդու խնդիրը, ինչպես ցանկացած փիլիսոփայական խնդիր, բաց և անավարտ է: Այդ է պատճառը, որ փիլիսոփաները խոսում են հիմնախնդրի մասին: Ինչու հիմնախնդիր: Բանն այն է, որ հիմնախնդիրը մարդու իմացածն է իր չիմացածի մասին, երբ մարդը կարողանում է առաջ քաշել հարցեր, բայց դժվարանում է դրանց տալ վերջնական պատասխաններ: Եվ դժվարանալու խնդիրը ոչ թե մարդու՝ որպես խնդիրը լուծողի անկատարությունն է, այլ հիմնախնդրի բարդությունը: Մարդու էության վերհանման խնդիրը ամենաառեղծվածային հարցերի շարքին է դասվում: Հնարավոր է, որ խնդրի լուծման դժվարության պատճառներից կարող է լինել այն, որ յուրաքանչյուր նոր սերունդ փորձում է յուրովի լուծել այն: Խնդրի լուծումն ավելի է դժվարանում, երբ հեղեղվում է անմարդկային արարքներով,

[1]«Հասարակակագիտություն» 12-րդդասարանիդասագիրքհանրակրթականավագդպրոցիբոլորհոսքերիհամար, էջ 43, Երևան, ՏիգրանՄեծ, 2011

թշնամանքով: Եվ մտածողները սկսում են որոնել այդպիսի անմարդկային երևույթների պատճառները:Այդ որոնումների արդյունքում փիլիսոփաները կրկին հանգում են մարդու հիմնախնդրին և վերլուծելով եզրակացնում են, որ խնդիրը մարդու աշխարհայացքի մեջ է: Առաջին անգամ աշխարհայացք հասկացությունն օգտագործել է Իմանուիլ Կանտը:

Ինչ է աշխարհայացքը: Աշխարհայացքը մարդու աշխարհին նայելու կերպն է, թե մարդն ինչպես և ինչպիսին է տեսնում իրեն, շրջապատող իրականությունն ու իրեն այդ իրականության մեջ:Մարդ-աշխարհ հարաբերությունները աշխարհայացքի հիմքն է: Կանտի «Ով է մարդը» հարցը այսօր էլ մնում է արդիական: Որոշ փիլիսոփաներ փորձել են և հիմա էլ փորձում են բացահայտել մարդու էությունը, ելնելով այն մտքից որ դրա իմացությունը հնարավորություն կտա բացահայտել մարդկանց մտքերի և արարքների ծագումը, բայց քանի որ նրանցից յուրաքանչյուրը որպես էություն տեսնում է այն , ինչը մյուսը չի տեսնում, առաջանում է հակասություն:Եթե հունահռոմեական մշակույթում բացարձակ արժեք էր թե՛ աստվածը, և թե՛ մարդը , ստացվում է,որ մարդ-աստված կողմերը գրեթե հավասարակշռված էին, ապա միջնադարում բացարձակ, որոշիչ և անհամեմատելի արժեք էր Աստված: Եվ՛ արվեստի, և՛ գիտության, և՛ մշակույթի խնդիրն էր միայն ապացուցել Տիրոջ անուրանալի գոյությունը և միջնորդ դառնալ Աստծո և մարդու միջև: Այլ կերպ՝ մարդու գոյությունն իմաստավորվում էր իր իսկ հավատի չափով. «Դու այնես ինչին հավատում ես » սկզբունքով:

Մարդու հիմնախնդրի քննության առումով անուրանալի է, իհարկե, հույների դերը: Հիշենք նախափիլիսոփա Պրոտագորասի«Մարդը՝բոլոր իրերի չափ» բանաձևը, որը դարձավ ուղեցույց նաև ողջ եվրոպական մշակույթի համար, սակայն հարցը նորովի իմաստավորվեց և առավել ամբողջական քննության առարկա դարձավ միայն վերածնության հումանիզմի մշակույթում: Վերածնունդն ամբողջովին փոխեց անտիկ դիցաբանության և միջնադարյան աստվածաբանության հայացքը մարդու մասին: Եթե հույների համար առաջնային էր բնություն--տիեզերքը, ապա վերածնության

դարաշրջանում մարդ- բնություն-աստված եռաչափության մեջ առաջնայինը մարդն էր: Վերածնության դարաշրջանում անհատի իդեալը ստանում է նոր մեկնություն, ըստ որի մարդուն տրված է մտածել ոչ միայն այն մասին, թե ով է ինքը տիեզերքի անսահմանության մեջ, այլ նաև ինչ տեղ և դեր ունի ինքը հասարակության կյանքում:

Վերածնության դարաշրջանի մարդասիրությունը մարդու երկնքից իջեցնում է գետնին, դարձնում գիտության, փիլիսոփայության և արվեստի միակ գլխավոր առարկան, սրբագործում նրան՝ բարձրացնելու վեր և բազմեցնելու աստվածային գահին:Մարդու այդ նոր ըմբռնումը արմատապես փոխում է Աստծո հիմնախնդրի նկատմամբ փիլիսոփայական մոտեցումը:Այժմ անհատի հիմնահարցը դառնում է իմացության գլխավոր խնդիրը: Այստեղ տեղին է հիշել Դոստոևսկու խոսքերը. «Մարդն ունի գաղտնիք, և ես զբաղված եմ դրա բացահայտմամբ, քանի որ ուզում եմ մարդ լինել»: Մարդկային էության այս մոտեցումը պայմանականորեն կարելի է անվանել պատմական: Այն հիմնված է հեռավոր անցյալի նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների ուսումնասիրության վրա և թույլ է տալիս մարդուն պատկերացնել իրեն իբրև պատմականորենզարգացող էակ:

Լուսավորության դարաշրջանի նշանավոր մտածող Վոլտերի կարծիքով մարդն ամենևին էլ գաղտնիք չէ: Նա ուղղակի բնության մեջ ավելի բարձր տեղ ունի, քան կենդանին. Մարդուն տրված են կրքեր,որպեսզի գործի, տրված է բանականություն՝ որպեսզի բանականության միջոցով կառավարի իր գործունեությունը: Եվ չպետք է վախենալ մարդու բարի ու չար կողմերի երկակիությունից, քանի որ բանականության շնորհիվ մարդն ընդունակ է ազատվել չարից և հաղթահարել իր անկատար էությունը: Իրողությունն այն է, որ մարդու էությունը բազմակերպար է, և հենց այդ պատճառով էլ չի կարող ունենալ միանշանակ սահմանում:Նախ պետք է նկատել, որ մարդը դարձել է ավելի շատ ազատության ձգտող, դրա հետ մեկտեղ դարձել է ավելի շատ տառապող էակ: Երկրորդ՝ մարդն ավելի ու ավելի է ընդլայնել իր իմացության ոլորտները, բայց շատ իմանալով՝ չի դարձել ավելի երջանիկ: Եվ երրորդ՝ մարդն անընդհատ ձգտում է ինչ-որ բանի, մինչդեռ մարդու սահմանը անչափությունն է:

Բերդյանի համոզմամբմարդը ոչ միայն բանական, այլ կամային էակ է, քանի որ գիտակցական գործունեության մեջ կենդանի բանականությունը կամքն է: Հետևաբար, մարդուն տրված է՝ ինքն իր մեջ փնտրել մարդուն: Մարդուն տրված ժամանակն անորոշ է,գուցե այդ անորոշության գիտակցումն է մարդուն դրդում անդադար գործել: Մարդն իր ողջ կյանքում գտնվում է ձևավորման՝դառնալու, դառնալիության գործընթացում: Նույնիսկ ինքն իր հետ մենակ մնալիս մարդը դարձյալ անվերջանալի կայացման մեջ է: Նա անընդհատ վերածվում է ինչ-որ բանի, ձևափոխվում է, փոխակերպվում՝կատարելով տարբեր դերեր: Սակայնմարդ լինել նշանակում է լինել ավելին, քան մեր կատարած դերերն են:

Գործել…Գործել…Ահա այն, հանուն ինչի մենք գոյություն ունենք

Յոհան Ֆիխտե[2]

Մարդը գործող էակ է, և գործունեությունն աշխարհի հետ հարաբերվելու մարդուն բնորոշ ձևն է: Մարդն իր նպատակամղված գործունեության շնորհիվ կարողացել է վերափոխել իրեն տրված միջավայրը և ոչ միայն հարմարվել, այլև միջավայրը հարմարեցնել իրեն: Մարդը պարզապես պետք գտնի ինքն իրեն, հասկանա, թե ինչի համար է այս աշխարհ եկել: Այսինքն, մարդը պետք է պարզապես հարազատ մնա իր անկրկնելիությանը: Մեզնից յուրաքանչյուրն արդեն իր բնական ժառանգական հատկություններով անկրկնելի է, բայց հարց է՝արդյոք այդ անկրկնելիության նախադրյալներով օժտված մարդը կարող է անկրկնելի կյանք վարել: Անկրկնելի կյանքը չի նշանակում լինել հայտնի քաղաքական գործիչ կամ հանրահայտ դերասան: Ըստ ֆրանցիացի փիլիսոփա Միշել Մոնտենի՝հրաշալի է պաշարել թշնամու ամրոցը կամ լինել դեսպանության գլուխ: Բայց հանդիմանել, ծիծաղել, վաճառել, գնել, սիրել, ատել ու զրուցել մտերիմների և ինքդ քեզ հետ մեղմորեն՝ձգտելով լինել արդարացի, ու չտրվել թուլությունների՝ հարազատ մնալով ինքդ քեզ, սա շատ ավելի հազվագյուտ ու ավելի դժվար բան է…Մարդն ի սկզբանե գիտի, որ իրեն տրված կյանքը, առողջությունը, կարողությունը ժամանակավոր են: Հետևաբար՝նա պետք է սովորի գնահատել այն

[2]«Հասարակագիտություն» 12-
դդասարանիդասագիրքհանրակրթականավագդպրոցիբոլորհոսքերիհամարէջ 67, Երևան, ՏիգրանՄեծ, 2011

ժամանակը, որ ունի ապրելու համար, սիրելու, որոնելու, աշխատելու համար:Նա պետք է սովորի գնահատել իրեն շրջապատող մարդկանց, որոնք իր նման անկրկնելի ու ժամանակավոր են:Կյանքն արժեքավոր է, քանի որ այն մեկն է, անկրկնելի ու անցողիկ: Դավիթ Անհաղթի խոսքերի համաձայն՝կյանքն ամեն մեկիս ինքնակատարելագործման հնարավորությունն է:

Մարդու հիմնախնդրի բացահայտման ճանապարհը հանգում է կյանքի իմաստի որոնմանը, պարզվում է, որ  կյանքի իմաստը հենց կյանքն է:Ինչպես ռուս մեծ գրող Բերդյանն է ասում՝մարդուն տրված ազատության ամենամեծ աստիճանն ինքն իրեն և իր կյանքը ստեղծագործելն է:

Հավիտենության լծորդն եմ անդուլ,

Բայց և կարճատև մի ակնթարթ եմ,

Փոթորիկներ են եռում հատակիս,

Թեև երեսից այսպես հանդարտ եմ:

Համո Սահյան[3]

[3] «Հասարակակագիտություն» 12-րդդասարանիդասագիրքհանրակրթականավագդպրոցիբոլորհոսքերիհամարէջ 54, Երևան, ՏիգրանՄեծ, 2011

## IV Մարդու ճանաչողության խնդիրները Սոկրատեսի փիլիսոփայության մեջ



Սոկրատես[4] (մ. թ. ա. 469, Ալոպեկե, Հին Աթենք - փետրվարի 15, մ. թ. ա. 399, Աթենք), Հին Հունաստանի հայտնի փիլիսոփա, համարվում է Արևմտյան փիլիսոփայության հիմնադիրներից մեկը, լինելով բարոյականության առաջին փիլիսոփան՝ արևմտյան էթիկայի փիլիսոփայական մտքի մեջ: Գաղտնիքներով պարուրված կերպար, ով երբեք ոչինչ չի գրել և հայտնի է գլխավորապես այլ դասական հեղինակների միջոցով, ովքեր գրել են նրա մահից հետո,մասնավորապես նրա աշակերտներ՝ Պլատոնը և Քսենոփոնը: Այլ աղբյուները, հիմնականում նրա ժամանակակիցներ Անտիսթենեսը, Արիստիպուսը և Էսքինես Սֆետացին են: Թատերագիր Արիստոփանեսը միակ աղբյուրն է, որ հիշատակություններ է թողել Սոկրատեսի մասին հենց նրա կենդանության օրոք

[4] https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%B8%D5%AF%D6%80%D5%A1%D5%BF%D5%A5%D5%BD

Պլատոնի «Երկխոսությունները» լավագույն աղբյուրն են, որտեղ հիշատակություն կա Սոկրատեսի վերաբերյալ, բայց նրանում պարզ չէ թե «որտեղ է ի հայտ գալիս Սոկրատեսը և որտեղ է Պլատոնը»: Շնորհիվ Պլատոնի «Երկխոսությունների» Սոկրատեսը հայտնի դարձավ էթիկայի և էպիստեմոլոգիայի (իմացաբանություն) բնագավառներում ունեցած իր անգնահատելի ներդրման համար: Նա է, որ Սոկրատյան հեգնանքի և Սոկրատյան մեթոդի՝ էլենխոսի, հիմքն է դրել:

Սոկրատեսը մեծագույն ազդեցություն է թողել անտիկ դարաշրջանի և արդի ժամանակաշրջանի մի շարք փիլիսոփաների վրա: Արվեստի, գրականության և զանգվածային մշակույթի մասին սոկրատյան պատկերացումները նրան դարձնում են արևմտյան փիլիսոփայական ավանդույթի ամենահայտնի դեմքերից մեկը:

Մարդկության հոգևոր մշակույթի պատմության մեջ Սոկրատեսը չխամրող և նորարար փիլիսոփայի հզոր կերպար է: Շնորհիվ Սոկրատեսի՝առաջին անգամ մարդը իր բարոյական արտաքինով դարձավ փիլիսոփայաության ամենակենտրոնական հիմնախնդիրը, իսկ փիլիսոփայական միտքը արմատական շրջադարձ կատարեց բնափիլիսոփայությունից մարդու և սոցիալական փիլիսոփայություն: «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ» դրույթով նա անջրպետեց մարդկային գիտելիքը աստվածային գիտելիքից: Առաջին անգամ Սոկրատեսը համապարփակ փիլիսոփայեց այն հարցի շուրջ, թե է որն մարդու կեցության և գոյության ճշմարիտ իմաստը, ինչու և ինչպես պետք է ապրել: Դրա համար կա միայն մեկ ուղի՝ճշմարտության որոնում և հայտնագործում:Գիտելիքի և միայն գիտելիքի հինքի վրա է հնարավոր թափանցել մարդկային կյանքի գաղտնիքների և իմաստալից ապրելու առեղծվածի մեջ:

## V. Մարդու հիմնախնդիրը Մոնտենի փիլիսոփայական հայացքներում

Միշել դը Մոնտենը[5] ծնվել է 1533 թվականին Սեն Միշել դը Մոնտեն քաղաքում (Դորդոն), Բորդոյի մոտակայքում գտնվող իրենց տոհմական կալվածքում, Էյքեմների վաճառականական ընտանիքում, որն ազնվականի կոչում էր ստացել 15-րդ դարի վերջին[10]: Հայրը՝ Պիեր Էյքեմը, եղել է Բորդոյի քաղաքագլուխը: Մայրը՝ Անտուանետտա դը Լոպեզը, ծագումով հրեական ընտանիքից էր: Մոնտենի փիլիսոփայությունը մեզ է ներկայանում իբրև արգասիք կյանքի մասին ազատ-անկաշկանդ խոհերի, մարդու մեջ հավասարապես կատարյալ են և՛ հոգին, և՛ մարմինը: Գերապատվություն տալ մեկին՝ի հաշիվ մյուսի, միայն թվում է արհեստական, անբնական: Փիլիսոփայության մեջ Մոնտենը փնտրում էր ինքնաճանաչում,նաև ճանաչում այն բանի, ինչը կարող է սովորեցնել հանգիստ մեռնել և հանգիստ ապրել:

5 https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%AB%D5%B7%D5%A5%D5%AC_%D5%A4%D5%A8_%D5%84%D5%B8%D5%B6%D5%BF%D5%A5%D5%B6

Նկատի ունենալով այն եղանակը, որով մեզ կրթում են, զարմանալի չէ, որ աշակերտները, ոչ թե իրենք՝ուսուցիչները, դրանից ավելի իմաստուն չեն դառնում, թեև գիտություն են ձեռք բերում…Մենք տքնում ենք սոսկ այն բանի համար, որպեսզի մեր գլուխը լցնենք գիտելիքներով՝խելքն ու խիղճը մոռացած: Մոնտենը հավատացած էր, որ բնությունը սնունդ է տալիս ոչ միայն բանականությանը: Այն ունակ է սնել մարդու զգացմունքներն ու կրքերը, պարգևել բազմատեսակ ուրախություններ ու վայելքներ: Ինչու հրաժարվել այդ պարգևներից, դրանք բթացնել բանականությամբ:

Մարդը բնության մասնիկն է, և բնության բոլոր ուժերի խաղը արժանի է նրա վստահությանը:Միջնադարյան մետաֆիզիկան ուսուցանում էր Տիեզերքի և նրա երկնային մարմինների շարժման, Երկրի և նրանում բնակվող արարածների, մարդու, նրա ծագման ու կոչման, նրա կեցության կարգի ու կանոնների, զգացմունքների ու բանականության,նրա անցյալի և ապագայի, հասարակական կարգի ու բարոյականության մասին: Թվարկված յուրաքանչյուր բնագավառի վերաբերյալ հաստատված էին անառարկելի, սուրբ գրքով ամրապնդված և եկեղեցական հեղինակությունների կողմից պաշտպանվող ճշմարտություններ: Մոնտենը ոչինչ չի հաստատում, կտրականապես ոչինչ չի պնդում, նա ձգտում է խորտակել քրիստոնեական դոգմաները:Այդ նպատակին էլ հետամուտ է նրա սկեպտիցիզմը: Մոնտենը կողմնակից է անձնավորության, նրա բնատուր տվյալների ու հատկությունների ազատ ու ներդաշնակ զարգացման: Նա համոզված է, որ աշխարհում չի ավելանա խոհեմությունն ու կարգուկանոնը, եթե յուրաքանչյուրն իր վարքով, արարքներով չառաջնորդվի չափ զգացումով: « Պետք է ոչ թե խելոք գրքեր հորինել, այլ առօրյայում խոհեմ վարքագիծ դրսևորել, հարկ է ոչ թե ճակատամարտեր շահել ու հողեր զավթել, այլ բարվոքել ու առօրյա կյանքը: Մեր լավագույն առաքելությունն է՝ապրել համաձայն բանականության: Մնացյալը՝իշխել, հարստություն դիզել,պալատներ գցել,-այս ամենը ամենաշատը լրացյալ ու հավելյալ բաներ են»: Մոնտենը չի ցանկանում , որ «լրացյալն» ու «հավելյալը» մարդուն շեղեն իր բուն առաքելությունից: Նա չի խրախուսում, երբ ապագայի վերաբերյալ հոգածությունը մարդկանց զրկում է ներկայի մասին լրջորեն հոգալու հնարավորությունից ,նրանց հայացքը շեղում է երկրային ուրախություններից ու հոգսերից:

Ժամանակակից պատկերացումների համատեքստում Մոնտենի հիշյալ գաղափարները կարող են երկիմաստորեն ընկալվել իբրև յուրատեսակ եսասիրության հանգող կենսասիրության քարոզ՝ քանի կաս, վայելիր ձեռքդ ընկած բարիքները և մի նոգա քեզնից հետո լինելիքի մասին, այն, միևնույնն է քեզ հետ չի առնչվի:Եկեղեցու հաստատած քրիստոնեական ճգնակեցությունը պահանջում էր աշխարհիկ վայելքների հանդեպ խստիվ ինքնասահմանափակում, քանի որ մարդու երկրային կյանքը համարվում էր երկնային հավերժական կյանքի նախապատրաստություն: Եվ այդ նախապատրաստությունն այնքան հաջող կընթանա, որքան մարդը կկարողանա լավագույն ձևով հոգալ իր անմահ հոգու մասին, ընդդիմանալ երկնային տիրոջ նախասահմանումներին ծառայելուց շեղող գայթակղություններին: Եկեղեցին, ըստ էության, մարդուց խլում էր լիարժեք կյանքը, մղում այն դիտելու իբրև հանդերձյալ կյանքի միջոց, այն զոհաբերում ապագա դրախտային երջանկությանը, որը խոստանում էր իբրև հատուցում երկրային վայելքներից հրաժարվելու դիմաց: Շահախնդրությունը, սնափառությունը, նախանձը, պարգևի և հռչակի հետամտելը, մարդկային մոլորությունների ամբողջ ծանր բեռը, Մոնտենը ենթարկում է առողջ բանականության դատին: Նա չի ձաղկում արատները, այլ ձգտում է ցույց տալ այն դրդապատճառները, որոնք սովորաբար մարդկանց մղում են չափի զգացմանն ու ներդաշնակությանն անհարիր արարքների: Մարդն իր խելքի և արարքների տերն է, միայն դրանք են մարդուն ենթակա, ամենից առաջ դրանց համար է նա պատասխանատու: Եթե նա ի զորու է իր կյանքն ու գործունեությունը, կենցաղը, շրջապատի հետ փոխհարաբերությունները կարգավորել բանականության, արդարության, բարու հիմունքներով, եթե իր խոհերում ու գործերում նա ունկնդիր լինի բնությանը, այդ թվում՝ սեփական բնությանը, այդ սկզբունքները, բնականաբար, կարգասավորվեն նաև կոլեկտիվ կյանքում: « …Ով ի վիճակի է վառ կերպով պատկերացնել մեր սքանչելի բնությունը իր ողջ արքայական վեհությամբ, ով կարող է կարդալ նրա հարափոփոխ ու բազմաբղետ դրսևորումները, ով իրեն, և ոչ միայն , այլև ողջ թագավորությունը, պատկերացնում է որպես նրա ծով ամբողջության հազիվ նշմարելի մի կաթիլը, լոկ նա է իրերը ընդունակ գնահատել ըստ նրանց իսկական արժեքի: Այս մեծ աշխարհն… այն հայելին է, որին պետք է նայենք՝ ինքներս մեզ ճանաչելու համար»:

Մոնտենն առաջիններից մեկն էր, որ դեն նետեց միջնադարյան նախապաշարմունքների ու սնոտիապաշտության սքեմը: Նա համակված էր կեցության հմայքի զգացողությամբ, վայելքների ու հաճույքների բարձր ընկալունակությամբ, որոնցով լի է կյանքը, իսկ անտիկ իմաստությունը նրան պարգևում է չափավորության իմաստուն զգացումը, ներդաշնակության պահանջը և աշխարհընկալման համամարդկային տեսահորիզոնը:

## VI.Եզրակացություն

Այսօր մարդկային չափումը, մարդկայնությունը, որպես ամենատարբեր սոցիալական սուբյեկտների գործունեության բովանդակության և եղանակների արժեորման հատուկ միջոց, դառնում է շատ գիտնականների, քաղաքագետների, սոցիալական աշխատողների ուշադրության առարկա: Մարդը մարդկայնանում է, ստեղծելով գոյության և ապրելակերպի բոլորովին նոր միջավայր ու ձևեր՝ հասարակական կյանքը, որից դուրս նա չի կարող ունենալ: Մարդն իր բնական գոյությանը ավելացրել է հասարակական էությունը և կենդանական աշխարհի մնացած էակներից տարբերվում է նրանով, որ նա հասարակական էակ է: Մարդը գաղտնիք է և այդ գաղտնիքի բացահայտմամբ են հիմնականում զբաղված գիտությունը, աստվածաբանությունը, փիլիսոփայությունը, արվեստ ու բարոյագիտությունը:Մեր ժամանակի անվերապահ մարտահրավերներից մեկը մարդկայնության,մարդու մեջ մարդկայինի արտադրության և վերարտադրության հիմնախնդրի ուղղակի և մասնագիտորեն լուծման պահանջն է: Կրթության զարգացման ժամանակակից ծրագրերի ճնշող մեծամասնության մեջ երևան է գալիս սկզբունքորեն նոր՝հումանիտար մարդաբանական չափումը: Թեման արդիական է և կմնա այդպիսին, քանի դեռ այն մնում է հիմնախնդրի մակարդակի վրա: Ամփոփելով կարելի եզրակացնել, որ մարդու մարդկային էությունը, կյանքի իմաստն ու երջանկությունը նրա բարոյական և գեղարվեստական մաքառումն է «Մարդ» դառնալու և ամբողջ կյանքում «Մարդ» մնալու համար:

## VII.Գրականություն


1. Ս. Պետրոսյան, Հասարակագիտության դասեր ավագ դպրոցի ավարտական դասարանի համար, «Մարդ և հասարակություն» գիտամեթոդական ամսագիր №2. 2011թ.
2. «Հասարակակագիտություն» 12-րդ դասարանի դասագիրք հանրակրթական ավագ դպրոցի բոլոր հոսքերի համար, Երևան, Տիգրան Մեծ, 2011
3. Միշել Մոնտեն, ‹‹Արժանավայել ապրելու արվեստի մասին››, Երևան, Արևիկ, 1988, էջ 8-41
4. https://www.vsu.am/grqer/mijazgayin-gitajoxov-2019/hovhannisyansilva.pdf
5. https://www.km.ru/referats/E3C8F1F1D62E4DA9884405727A72CB
6. http://library.cmsa.am/media/docs/Hakobyan_-pilisopayutyan_tesutyun_%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF.pdf

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# Հետազոտական աշխատանք

**ԹԵՄԱ՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ**

**ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԳԱԳԻԿ ԷՄԻՆՅԱՆ**

**ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈՒԴԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՎԱՆԱՁՈՐ-2023**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
ԳԼՈՒԽ 1 ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ….4
ԳԼՈՒԽ 2 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ……7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……11
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Արդիականությունը.** Պետության կողմից կրթադաստիարակչական աշխատանքներում սովորողների հայրենասիրական և դրա մաս կազմող ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրը մշտապես եղել է կրթական և ռազմական գերատեսչությունների ուշադրության կենտրոնում: Այդ աշխատանքների ճիշտ կազմակերպումը տարբեր ժամանակներում ստացել է տվյալ ժամանակին բնորոշ լուծումներ: Դաստիարակչական աշխատանքը՝ որպես շարունակական և երկարատև գործընթաց, բավական ընդգրկուն է և ոչ համահավասար բոլոր ուսումնական հաստատությունների համար: Պետության հռչակած հայրենասիրական դաստիարակության գործընթացը հիմք է ծառայում կարճաժակետ և երկարաժամկետ կրթադաստիարակչական, ռազմավարական ծրագրեր մշակելու համար: Սակայն, չնայած այդ հանգամանքին՝ պետական պատվերի և այդ պատվերի ակնկալվող արդյունքների միջև առկա ջրբաժանը հեռու է ցանկալիից: Հանրակրթական ուսումնական հաստատության՝ միջնակարգ կրթության չափորոշիչով սահմանված գերխնդիրներից ապագա քաղաքացու ձևավորման համար առանձնակի դեր և նշանակություն ունի նաև սովորողների հայրենասիրական դաստիարակությունը: Պետական պատվերի հիմքում դրված է հասարակության մեջ այնպիսի քաղաքացու ձևավորման խնդիրը, որն իր դրսևորումներով պիտանի կլինի պետությանը և հասարակությանը:

**Հետազոտության նպատակը՝** ուսումնասիրել հայրենասիրության էությունը, կարևորել մասնագիտական կոզմնորոշման անհրաժեշտությունը հանրակրթական ուսումնական հաստատություններում:

**Հետազոտության խնդիրները՝**

1. հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ գրականության ուսումնասիրություն,

2. մասնագիտական կողմնորոշման անհրաժեշտության առանձնահատկությունների բացահայտում:

# ԳԼՈՒԽ 1 ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

«Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ի շահ Հայրենիքի բարօրության» [5]:

Բավական երկար ժամանակ դպրոցներում սովորողների ուսուցման գործընթացն իրականացվում էր ուսուցչակենտրոն սկզբունքով, որտեղ տեղեկատվության հիմնական աղբյուրն ուսուցիչն էր: Ժամանակի ընթացքում փոխվեցին տեխնոլոգիաները, բայց տեսական գիտելիքների հաղորդումը գերնպատակ է դիտվում մինչ օրս: Ուղիղ համեմատական անցկացնելով ճապոնական, ֆիննական, ամերիկյան կրթական հաստատություններում իրականացվող ուսուցման գործընթացի՝ հետ կարող ենք փաստել, որ այդ երկրներում տեսական գիտելիքների փոխանցման և գործնական հմտությունների ձևավորման հարաբերակցությունը գրեթե հավասար հարթության մեջ են դիտվում: Հայաստանում սովորողների հայրենասիրական դաստիարակության համար հիմք են ծառայում հասարակագիտական առարկաների հայեցակարգերն ու առարկայական չափորոշիչները: «Ավագ դպրոցի ուսումնական ծրագրում կերպար ձևավորող կրթությամբ (character education) և արժեքային կրթությամբ զբաղվում է հիմնականում հասարակագիտությունը. կրթության այդ երկու ուղղությունները ժողովրդավարական հասարակության անդամներ դաստիարակելու երկու հիմնական նախապայմաններն են: Յուրացնելով պատմությունը, աշխարհագրությունը, տնտեսագիտությունը, կառավարումը, սոցոլոգիան, մարդաբանությունը և այլն՝ աշակերտները շարունակաբար բարոյական դասեր են քաղում, հայտնվում բարոյական երկընտրանքի առջև, հասու դառնում հակադիր արժեքների (Milson,2002)» [1,56]: Իսկ ահա ռազմահայրենասիրական

դաստիարակության համար դպրոցներում հիմք են ծառայում «ՆԶՊ», «ՀԺՊ» և «Ֆիզկուլտուրա» առարկաները: Դատելով վերոբերյալից՝ կարող ենք կատարել մասնակի եզրահանգում այն մասին, որ սովորողների հայրենասիրական դաստիարակության մասով բեռն ընկնում է այդ առարկաները դասավանդող ուսուցիչների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ դիրքորոշում ունի այդ ուսուցիչը: Խնդիրն ավելի է բարդանում, երբ այդ նույն ուսուցիչն իր մասնագիտական որակներով ոչ միայն չի կարողանում բավարարել պետական պատվերի պահանջը, այլ նաև լրացուցիչ խնդիրներ է առաջացնում այդ ասպարեզում: Անտարակուսելի է այն հանգամանքը, որ խնդիրն աստիճանաբար դառնում է ավելի օրհասական: Մեր կողմից խնդրի առնչությամբ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ: Տեղեկատվության հավաքագրման, օբյեկտիվության պահպանման նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ պարզելու համար սովորողների և ուսուցիչների պատկերացումները հայրենասիրության վերաբերյալ: 2016 թվականին ուսումնասիրություններ են կատարվել մի շարք հանրակրթական ուսումնական հաստատություններում: Ուսումնասիրություններն իրականացվել են քաղաքային հիմնական և ավագ, ինչպես նաև գյուղական միջնակարգ դպրոցներում: Ընդհանուր առմամբ մեր կողմից իրականացված հարցումներին մասնակցել են 200 սովորող, 50 մանկավարժական աշխատող և ուսուցիչ: Մենք մեր առջև խնդիր էինք դրել պարզելու, թե սովորողներն ու ուսուցիչներն ինչպիսի պատկերացում ունեն հայրենասիրության վերաբերյալ: Արդյունքում պարզ դարձավ, որ հարցված սովորողների 90%-ը հայրենասիրություն է համարում հայրենիքի սահմանները պաշտպանելը, իսկ ուսուցիչների ու մանկավարժական աշխատողների 80%-ը հայրենասիրություն է համարել ուղղակի նվիրվածությունը հայրենիքին:

Հատկանշական է, որ թե՛ հայրենասիրության և թե՛ ռազմահայրենասիրության դաստիարակության մեջ ամենակարևորն այն հանգամանքն է, որ «հայրենիքի», «հայրենասեր քաղաքացու» մոդելի բովանդակության և այդ բնորոշմամբ քաղաքացու դաստիարակության

պատվիրատուն պետությունն է: Եթե չկա միանական մոտեցում այս հարցում, կամայական, թեկուզև արդյունավետ աշխատանքի արդյունքում, երկարատև դրական ազդեցություն դժվար թե լինի: Այդ իսկ պատճառով մենք մեր առջև խնդիր էինք դրել՝ ուսումնասիրելու և վերլուծելու հայրենասիրության էությունը, դրա ընկալման բովանդակությունը: Վերլուծելով մեկ տասնյակից ավելի գրականություն՝ մենք ներկայացնել ենք, թե ինչ է հայրենասիրությունը, և ով է հայրենասերը, միաժամանակ առաջ քաշելով գործողությունների այն շրջանակը, որը կապահովի սովորողների հայրենասիրության և ռազմահայրենասիրության դրսևորումների ամրապնդումը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ հանրակրթության մասին օրենքը ենթադրում է, որ սովորողները, ավարտելով հանրակրթական դպրոցը, պետք է ունենան նաև որոշակի պատկերացումներ ապագա մասնագիտության ընտրության վերաբերյալ, կարող ենք արձանագրել, որ այդ ամենն ուղիղ համեմատական կապ ունի սովորողի՝ որպես հայրենասեր քաղաքացու դիտարկմանը: Այդ խնդիրն առնչվում է ինչպես իննամյա, այնպես էլ տասներկուամյա կրթության պարագայում:

## ԳԼՈՒԽ 2 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ

ՀՀ կառավարության կողմից հաստատված միջնակարգ և հիմնական կրթության պետական չափորոշիչը հստակ սահմանում է պետական մոտեցումը կրթության բովանդակությանը, հասարակական և պետական պահանջի՝ ապագա քաղաքացու տեսլականը (տե՛ս ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշումը) [4]: Սովորողների և հատկապես ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման վրա ազդում են են ընտանիքի, շրջապատի, սոցկայքերի, հասարակական պահանջի և մասնագիտությունը որպես ֆինանսական հետագա եկամտի աղբյուր հանդիսանալու գործոնները: «Ավագ դպրոցականների տարիքում ինտենսիվորեն զարգանում են մարդու բարոյական ուժերը, ձևավորվում է նրա հոգեկան կերպարը, որոշակի են դառնում բնավորության գծերը ձևավորվում է աշխարհայացքը» [3, 201]:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սովորողների դաստիարակության ամենակարևոր բաղադրիչը հաղորդակցության միջոցով համապատասխան զգացմունքայնության ապահովումն է, ուստի պետք է նշել, որ սովորողների մասնագիտական կողմնորոշման տեսանկյունից դպրոցներում չեն իրականացվում այդ նպատակով մոտիվացիոն գործողություններ՝ դասախոսություններ, սեմինարներ, մասնագիտական հանդիպումներ: Հաջողված մասնագետների, գործարարների «մաստեր» («վարպետաց») դասախոսությունները և շփումը դեռահասների հետ ընդունված ձևաչափ է բոլոր զարգացած երկրներում: Հանուն արդարության պետք է նշել, որ Հայաստանում այդ ամենը ոչ մի կերպ չի իրականացվում ո՛չ տնտեսվարող սուբյեկտների կողմից՝ որպես շահագրգիռ կողմ, և ո՛չ էլ մասնագիտական կրթական հաստատությունների կողմից, այլ սահմանափակվում են միայն գովազդային տարբեր միջոցառումների կազմակերպմամբ: Այդ ամենն ունի և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ՝ գործազրկությունը, չաշխատող գործարաններն ու արտադրամասերը,

աշխատաշուկայում առկա դոմինանտ պետական և առևտրային հիմնարկների աշխատատեղերը: Չնայած մեր թվարկած պատճառներին՝ սովորողների կողմից որոշակի հետաքրքրվածություն է առկա տեղեկատվական տեխնոլոգիաների և, մասնավորապես, ծրագրավորման, ծրագրավորողի մասնագիտության հանդեպ: Եթե, օրինակ, ԽՍՀՄ տարիներին դեռահասների շրջանում ցանկալի մասնագիտություններ էին դիտվում առավելապես օդաչուն, տիեզերագնացը, տանկիստը, կոնստրուկտորավարը, հաշվապահը, բժիշկն ու ուսուցիչը, ապա այսօր պետական աշխատանքի հանդեպ դեռահասների վերաբերմունքի, ինչպես նաև ապագայի նկատմամբ ունեցած թերահավատության պատճառով նրանցից շատերը չեն կողմնորոշվում մասնագիտության ընտրության հարցում՝ շատ դեպքերում անգամ խուսափելով որևէ պատասխան հնչեցնելուց: Զարգացած, զարգացող շատ երկրներ՝ Ճապոնիան, Իսրայելը, Գերմանիան, Չինաստանը, Միացյալ Նահանգները և այլն, ազգային արտադրանքի՝ որպես բրենդի ճանաչումն ապահովելուն զուգընթաց սեփական երկրում մեծ նշանակություն են տալիս այդ հիմնարկներում աշխատելուն: Քանի որ հեղինակություն են վայելում այդպիսի հիմնարկներում աշխատողները, ուստի մասնագիտության ընտրության հարցում մրցակցային են համարվում համապատասխան մասնագիտություններն ու աշխատատեղերը: Առանձնակի տեղ են գրավում նաև պետական ռազմարդյունաբերական, տեխնոլոգիական, ավիակոնստրուկտորային, նավաշինարարական, արդյունաբերական հիմնարկները: Վերը թվարկված երկրներն ամեն կերպ աջակցում են պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ հետապնդելով առողջ և սահուն սերնդափոխության և, միաժամանակ, այդ հիմնարկներում նորարարական, ստեղծագործական մոտիվացիայով հարուստ աշխատողների ընդգրկման նպատակները, դրանով իսկ ապահովելով պետության և տվյալ հիմնարկի կայուն զարգացման գործընթացը:

Ասվածից պարզ է դառնում, որ մասնագիտական կողմնորոշման և դրա ընտրության խնդիրը սկսվում է դեռ դպրոցական տարիներից: Շարունակելով նախորդ միտքը՝ նշենք, որ այդ ամենը տեղի է ունենում համատեղ գործունեության

շրջանակներում՝ փոխադարձ այցելություններ, թեմատիկ զրույցներ, դասախոսություններ, հաջողության հասած մասնագետների հետ անմիջական շփում, թրեյնինգներ, համատեղ երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր և այլն: Կասկածից վեր է, որ Հայաստանում այս ամենը կամ առհասարակ չի իրականացվում, կամ կատարվում է պարտադրված և շատ անորակ, առանց լուրջ ակնկալիքների: Հաշվի առնելով վերոբերյալը՝ մենք առաջարկում ենք.

1. Կազմակերպել թեմատիկ և փոխադարձ այցելություններ,

2. Պարբերաբար հրավիրել համապատասխան ոլորտների մասնագետների,

3. Կազմակերպել փոխադարձ կարճաժամկետ ծրագրեր, ստեղծել համագործակցային այնպիսի հարթակ, որտեղ սովորողները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց ստեղծագործական մտքերն ու մոտեցումները,

4. Մշակել սովորողների խրախուսման այլընտրանքային ձևեր,

5. Վերանայել հանրակրթական ուսումնական հաստատությունում գործնական պարապմունքների էությունն ու բովանդակությունը,

6. Հնարավորինս ակտիվացնել սովորողների ստեղծագործական հմտություններն ու կարողությունները,

7. Առանձին առարկաների (հասարակագիտական առարկաներ, ՆԶՊ, աշխարհագրություն) դասաժամեր անցկացնել դրսում, այլ պետական և մասնավոր հիմնարկներում (ըստ թեմայի բովանդակության՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, ուժային կառույցներ, հետազոտական ինստիտուտներ և այլն) և ձեռնարկություններում,

8. Սովորողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում,

9. Ներդնել հատուկ ինտեգրված դասընթացներ:

Չափազանց կարևոր, արդիական և անհրաժեշտ է այնպիսի մթնոլորտի ստեղծումը, որտեղ սովորողները հավասար հնարավորություն ունենան մասնակցելու վերը նշված աշխատանքներին: Հենց սրանով էլ պայմանավորված է սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական գործընթացի կազմակերպումը, որի ընթացքում ի հայտ են գալիս

անշահախնդրությունն ու անմնացորդ նվիրումը: «Բացառապես դաստիարակից է կախված, թե դեռահասն ինչպես է տեսնում աշխարհը, ինչն է նրան հուզում, զարմացնում, մտահոգում, անհանգստացնում, առաջացնում համակրանք և հակակրանք, սեր և ատելություն» [2,183]:

Հայաստանի անկախացումից հետո պետական հիմնարկները հետզհետե մասնավորեցվեցին, ինչի հետևանքով էլ այդ հիմնարկները, շատ դեպքերում չունենալով աշխատեցնելու ստեղծագործական մոտիվացիա, աստիճանաբար սկսեցին փակվել: Արդյունքում հասարակության մեջ առաջացավ գործազրկություն ու մշտական աշխատանքի նկատմամաբ թերահավատ և անտարբեր մոտեցումը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հարափոփոխ տնտեսական և քաղաքական իրավիճակների, աշխարհաքաղաքական-տնտեսական և նորարական զարգացումների համատեքստում Հայաստանում շատ թե քիչ զարգացավ և արագորեն զարգանում է SS ոլորտը, որն իր մեջ ընդգրկում է ստեղծագործական կարողություններով օժտված մարդկանց: Ոլորտը հիմնականում զարգանում է՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների արտաքին և ներքին պատվերների կտրուկ աճով: Այստեղ կարելի է կատարել որոշակի եզրակացություն, ըստ որի՝ եթե հստակեցվի պետական պատվերի էությունը՝ սովորողների և մասնավորապես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ, նրանց դաստիարակվածության ցուցանիշը կարելի է ավելի շոշափելի հարթության հասցնել: Մեր թվարկած առաջարկությունները նպատակային և ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է.

1. Փոխադարձ այցելությունների և շփման եզրերն ապահովելու համար նախապես կատարել որոշակի հետազոտական աշխատանք՝ պլանավորելու այցելության և դրանից ակնկալվող արդյունքները: Այդ այցելությունները պետք է ծառայեն կոնկրետ նպատակների. օրինակ՝ տեսնել, ծանոթանալ, ճանաչել, իմանալ, լինել մասնակից, դառնալ ամբողջի մաս և այլն:

2. Կազմակերպել հանդիպումներ ոլորտի առաջատարների հետ՝ նպատակ ունենալով ոգեշնչման առարկա դարձնել այդ մարդկանց գործունեությունը, կարևորել կոնկրետ արդիական օրինակը, սովորողների մոտ առաջացնել մղում դեպի տվյալ ոլորտը. օրինակ՝ SS, ռազմաարդյունաբերական, պետական կառավարչական, ուժային, քաղաքական, մարքեթինգային և այլն:

3. Ներդնել համատեղ կարճաժամկետ ծրագրեր՝ նպատակ ունենալով անմիջական և շղթայական կապ ստեղծել տեսական և գործնական գիտելիքների միջև, ինչպես նաև խթանել սովորողների մոտ ֆիզիկական, մտավոր կարողությունների և հնարավորությունների բացահայտումը, մասնագիտական

կողմնորոշման ձևավորումը, ստեղծել հնարավորություն ինքնարտահայտման և ինքնավստահության ձեռքբերման համար:

4. Ներդնել խրախուսման այնպիսի մեթոդաբանություն, որը հնարավորություն կընձեռի սովորողներին ավելի ճանաչելի դարձնել հասարակության մեջ:

5. Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսպլանով և միջնակարգ կրթության պետական չափորոշչային պահանջով տեսական գիտելիքների և գործնական պարապմունքների համեմատական հավասարությունն ապահովելու նպատակով վերանայել պետական քաղաքականությունը՝ դրանով իսկ ապահովելով սովորողների անմիջական ներգրավվածությունը վերլուծական և հետազոտական աշխատանքների մեջ, ինչը պիտի նպաստի սովորողների մասնագիտական կողմնորոշանը: Հանրակրթական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետական այն մարմիններում, որտեղ ընդգծված համագործակցությունն առկա է հիմնարկի բյուջեի ծախսային մասում, հնարավորության դեպքում, առանձնացնել որոշակի գումար (օրինակ՝ 20-100.000 դրամի սահմաններում), որը կծառայի մրցակցային սկզբունքով սովորողների կողմից որոշակի նորարարական ծրագրերի ստեղծմանն ու իրականացմանը (օրինակ՝ դպրոցի արտաքին տեսքի ձևավորում, մարքեթինգ, գովազդային հոլովակների պատրաստում, լավագույն առաջարկ արդյունաբերության, ծրագրավորման, ռազաարդյունաբերության ոլորտում այլն): Սա սովորողների համար հնարավորություն կստեղծի՝ դեռ դպրոցական տարիներից ներգրավվելու գործնական աշխատանքների մեջ: Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ լուսաբանվի ոչ միայն ծրագրի ճիշտ ընտրությունը, այլ նաև կազմակերպվող աշխատանքների արդիականությունը, պահանջվածությունը, անաչառությունն ու կարևորությունը:

6. Սովորողների դաստիարակվածության աստիճանի չափելիության՝ գնահատման ներդնում դաս-դասարանային, ինչպես նաև գործնական պարապմունքների ժամանակ: Դա հնարավորություն կտա սովորողների մոտ

ձևավորել այնպիսի մթնոլորտ, երբ բացի զուտ տեսական գիտելիքների վերարտադրությունից, սովորողը ստիպված կլինի հետևելու իր գործունեության վարքագծային դրսևորումներին:

7. Անհրաժեշտ հուզակամային զգացմունքներ առաջացնելու նպատակով սովորողներին անմիջականորեն հաղորդակից դարձնել պետական-կառավարչական և ձեռնարկատիրական հիմնարկների գործունեությանը, ինչը լուրջ խթան կհանդիսանա սովորողների մոտ:

8. Սովորողների և հատկապես ավագ դպրոցականների կրթության և դաստիարակության նպատակը, ըստ էության, ազատ, ստեղծագործ, պատրաստակամ և պարտաճանաչ քաղաքացու ձևավորումն է, և այդ ամենին հասնելու լավագույն մեթոդը թերևս դպրոցականների ինքնուրույն աշխատանքների պարբերականության ապահովումն է:

9. Ուսուցողական, կրթադաստիարակչական բնույթի կարճաժամկետ դասընթացների ներդրում ավագ դպրոցներում: Դասընթացի բովանդակային թեմաները պիտի ընդգրկվեն դեռահասների հուզական և ճանաչողական պահանջներին ու տարիքային առանձնահատկություններին համապատասխան: Այդ դասընթացների նպատակը պիտի լինի սովորողներին համակարգված գործընթացի մեջ ներգրավվելը՝ կարևորելով թե՛ անհատական և թե՛ թիմային, համատեղ աշխատանքը: Ցավոք սրտի, մեր օրերում փորձ է արվում դեռահասների ռազմահայրենասիրական դաստիարակությունը դիտարկել առաջնային պլանով՝ դրանով իսկ թյուրըմբռնում առաջացնելով՝ հայրենասիրական դաստիարակությունը նույնացնելով ռազմահայրենասիրական դաստիարակության հետ: Մինչդեռ սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը հայրենասիրական դաստիարակության ընդամենը մի մասն է կազմում:

Այսպիսով՝ ապահովելով պետական գերատեսչական մարմինների, կրթական և հետազոտական հիմնարկների ներգրավվածությունը սովորողների և հատկապես ավագ դպրոցականների կրթադաստիարակչական աշխատանքներում՝ մենք ակնկալում ենք, որ շատ կարճ ժամանակահատվածում,

առանց ֆինանսական մեծ ռեսուրսների ներդրման հնարավոր կլինի լուծել սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցը՝ գիտության, հետազոտական, ՏՏ, արդյունաբերության, ռազմարդյունաբերության ոլորտներում՝ ապահովելով սահուն սերնդափոխությունը, համալրելով այն ժամանակակից ստեղծագործական մտածելակերպով մոտիվացված եռանդուն երիտասարդներով: Վերլուծելով այս ամենը՝ կարող ենք նշել, որ սովորողների և, մասնավորապես, ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ է որպես նպատակ և վերջնարդյունք դիտարկել սովորողների գործունեության նպատակաուղղվածությունը՝ սեփական հայրենիքի շենացման, արտաքին և ներքին սպառնալիքներին դիմագրավելու պատրաստ քաղաքացու ձևավորումը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Խաչատրյան Ս, Պետրոսյան Ս., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Առաքելյան Մ., Խաչատրյան Հ., Վարելլա Գ. «Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր. ձեռնարկ մանկավարժների համար»: Երևան, «Տիգրան Մեծ»: 2005: 408 էջ:
2. Սոխումլինսկի Վ. Ա., Քաղաքացու ծնունդը: Երևան, «Լույս»: 1978: 345 էջ:
3. Կրուտեցկի Վ. Ա. Մանկավարժական հոգեբանության հիմունքներ: Երևան, «Լույս»: 1976: 443 էջ:
4. http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=77183
5. http://www.hayzinvor.am/33565.html

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա հասարակագիտության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Գոհարիկ Հախոյան

Լոռու մարզի Հարթագյուղի միջնակարգ դպրոցի հասարակագիտության ուսուցչուհի

Հետազոտական աշխատանք

Թեմա «Ժողովրդավարություն »

Ղեկավար Ռ. Վարդանյան

Վանաձոր 2023

Բովանդականություն

1. Ի՞նչ է ժողովրդավարությունը:
2. Ժողովրդավարության պատմություն:
3. Կատարյալ ժողովրդավարություն:
4. Ժողովրդավարության ինստիտուտները:
5. Օրենսդրական իշխանության կառուցվածքը:
6. Ներկայացուցչական մարմինների ընտրական համակարգը:
7. Եզրակացություն:
8. Գրականություն:

# Ժողովրդավարություն

Հին հունարեն δημοκρατία ժողովրդի իշխանություն, δῆμος- ժողովուրդ և κράτος իշխանություն, քաղաքական ռեժիմ, որի հիմքում ընկած է գործընթացի կամ նրա որևէ մակարդակի վրա մասնակիցների հավասար մասնակցությամբ խմբային որոշումների կայացման ընթացակարգը: Չնայած այն հանգամանքին, որ տվյալ ընթացակարգն ընդունելի է առկա յուրաքանչյուր հասարակական կառուցվածքի համար, այնուամենայնիվ այսօր վերջինիս գոյության բաղադրիչը հանդիսանում է հենց պետության առկայությունը, քանի որ այն ենթադրում է իշխանության առկայություն: Այս դեպքում ժողովրդավարության սահմանումը հիմնականում սահմանափակվում է հետևյալ հատկանիշներով.

- Առաջնորդների նշանակումն իրենց ընտրողների կողմից տեղի է ունենում ազնիվ և մրցակցային ընտրությունների միջոցով:
- Ժողովուրդը հանդիսանում է լեգիտիմ իշխանության միակ աղբյուրը:
- Հասարակությունը հանուն իր շահերի բավարարման և ընդհանուր բարեկեցության իրականացնում է ինքնակառավարում:

Ժողովրդավարությունը հասարակության յուրաքանչյուր անդամի համար պահանջում է մի շարք իրավունքների ապահովում: Ժողովրդի կառավարման հետ փոխկապակցված են մի շարք այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ օրինականություն, քաղաքական և սոցիալական հավասարություն, ազատություն, ինքնորոշման իրավունք, մարդու հիմնարար իրավունքներ և այլն:

Քանի որ ժողովրդի իշխանության իդեալը դժվարհասանելի է և ենթակա է բազմաթիվ սահմանումների, առաջարկվում էին բազմաթիվ պրակտիկ ընթացկարգեր: Մինչև XVIII դարն ամենատարածված ընթացակարգը եղել է ուղիղ ժողովրդավարությունը, երբ քաղաքացիներն իրենց որոշումների կայացման իրավունքն իրականացրել են ամիջականորեն՝ փոխհամաձայնեցման (կոնսենսուս) կամ փոքրամասնությանը մեծամասնությանը ենթարկվելու ճանապարհով: Ներակայցուցչական ժողովրդավարության պայմաններում նույն իրավունքն իրականացվում է իրենց կողմից ընտրված պատգամավորների կամ այլ

պաշտոնատար անձանց միջոցով, որտեղ ընտրված կառավարողները կայացնում են որոշումներ՝ հաշվի առնելով կառավարվողների նախասիրությունները, վերջիններիս հաշվետու լինելով իրենց գործողությունների համար։

Մի շարք ավտորիտար վարչակարգերն ունեցել են ժողովրդավարական կառավարման արտաքին հատանիշներ, սակայն այնտեղ իշխանության կրողը եղել է միայն մեկ կուսակցություն, իսկ վարվող քաղաքականությունը կախված չի եղել ընտրողների նախասիրություններից։ XXI դարի վերջին քառորդում նկատվել է ժողովրդավարության տարածման միտում, որի խոչընդոտներից են եղել անջատողականությունը, ահաբեկչությունը, բնակչության արտագաղթը, սոցիալական անհավասարության աճը։ Այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ, ՀԱՊԿ և ԵՄ ենթադրում են, որ պետության ներքին գործերի վերահսկումը, այդ թվում նաև ժողովրդավարության հարցերը և մարդու իրավունքների իրականացումը, մասնակիորեն պետք է լինեն միջազգային հանրության ազդեցության ոլորտում։

## Ժողովրդավարության պատմություն

Պատմականորեն առաջինն անվանում են հենց նախնադարյան-համայնական ժողովրդավարությունը։ Ժողովրդավարութունն առաջացել է Հին Հունաստանում և Հին Հռոմում,որի որոշակի տարրերն առկա են եղել միջնադարյան քաղաք-պետությունների ավանդույթներում և Եվրոպայի իշխանական ներկայացուցչական մարմիններում, ինչպես նաև նոր ժամանակի բրիտանական գաղութներում։ Հնագույն քաղաք-պետությունների օրենսդիր, գործադիր և դատական իշխանության կրողը եղել է ժողովը, որի մեջ ընդգրկված են եղել բոլոր քաղաքացիները։ Այն հնարավոր էր, քանի որ այդ քաղաքների բնակչությունը հիմնականում չէր գերազանցում 10000 հոգի, իսկ կանայք և ստրուկները զուրկ էին քաղաքական իրավունքից։ Քաղաքացիներն ունեին գործադիր և դատական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունք, որոնք ընտրվելու սկզբունքով էին, իսկ մյուսները նշանակվում էին վիճակահանության սկզբունքով։ Սակայն Հռոմեական Հանրապետության հնագույն ժողովրդավարական ինստիտուտները դադարեցրեցին իրենց գործունեությունը։

Հարկ է նաև նշել, որ ժողովրդավարությունը հնագույն ժամանակներում համարվել է փիլիսոփայական մտորումների առարկա և հասկացությունը կարող էր ունենալ այնպիսի նշանակություն, որը բավականին տարբեր էր տվյալ բառի ժամանակակից նշանակությունից։ Պլատոնը նշել է, որ ժողովրդավարությունը նախանձող աղքատների իշխանություն է։ Իր ութերորդ «Պետություն» գրքում նա պնդում էր, որ ավելորդ ժողովրդավարությունը հանգեցնում է բռնությանը։ Նմանատիպ կարծիքի էր նաև Արիստոտելը՝ նշելով, որ ժողովրդավարությունը մեծամասնություն կազմող աղքատ քաղաքացիների կառավարում է՝ որոնք ցանկանում էին բավարարել իրենց անձնական շահերը։ Նա նշում էր, որ նմանատիպ կառավարման ձևը հանգեցնում է ժողովրդավարության, քաղաքականության կատարյալ ձևի խեղաթյուրմանը։

Իսկ միջնադարյան Եվրոպայում ժողովրդավարական կառավարման հիմքում ընկած է եղել կրոնի գործոնը, մեծ նշանակություն է ունեցել նաև փորձի փոխանակումը, երբ միապետը փորձում էր արժանանալ տարբեր խավերի կողմից իր հանձնարարականների հավանությանը։ Լուսավորության դարաշրջանը, Ամերիկյան և Ֆրանսիական հեղափոխությունները խթանեցին մտավոր և հասարակական զարգացումը, հատկապես քաղաքացիական և քաղաքական հավասարության մասին պատերացումները։ XIX դարից սկսած, ազատ ընտրությունների ճանապարհով ընտրված պատգամավորների ժողովները դարձան ժողովրդավարական կառավարման կենտրոնական ինստիտուտները։ Մի շարք պետություններում ժողովրդավարությունը սկսեց ընդգրկել նաև ընտրական գործընթացի, խոսքի ազատության և իրավունքի գերակայության ոլորտներում, նշելով, որ այն հաստատում է մրցունակություն այն պետություններում, որտեղ հաստատված էր կոմունիստական կառավարման ձևը, որտեղ և հռչավում էր ժողովրդահավասարության գաղափարը, որը ենթադրում էր դասահավասարություն։ Մինչև XX դարը ժողովրդավարությունը ենթադրում էր, որ լիիրավ քաղաքացիության կրողները կազմում են հասարակության մեծամասնությունը՝ սեփականատիրական արտոնակարգով, ռասայական, գենդերային /սեռական/ և ազգային հատկանիշներով, երբ մյուսները դուրս էին քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացից։ Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում XVIII դարի վերջում ընտրական իրավունքից օգտվողների թիվը կազմում էր ընդհանուր բնակչության 2-5 %-ը, իսկ Մեծ Բրիտանիայում, ժամանակակից ժողովրդավարության հայրենիքում, կանայք միայն

1928 թվականից ունեին տղամարդկանց հետ հավասար ընտրական իրավունք, չեղարվեց բազմակի ընտրությունը, երբ ընտրողը ուներ մի քանի ձայնի իրավունք, իսկ ԱՄՆ-ում ԱՄՆ սեփականատիրական արտոնակարգը հիմնարար վերացավ 1964 թվականին։

Չնայած ժողովրդավարության զարգացման միտմանը, այն այսօր էլ հանդիսանում է բազմաթիվ բանավեճերի առարկա։ Քննարկումները տարվում են լիիրավ քաղաքացիների, ժողովրդավարական ներկայացուցչական ընթացակարգերի, ժողովրդավարության համար անհրաժեշտ պայմանների, ժողովրդավարական քաղաքականության թույլատրելի սահմանների, էթնիկ և մշակութային փոքրամասնությունների պաշտպանությամբ զբաղվող տարբեր հասարակակաան կազմակերպությունների և սոցիալական խմբերի վրա ժողովրդավարական սկզբունքների տարածման, ժողովրդավարության մեթոդաբանության շուրջ։ Այսօր ժողովրդավարական ռեժիմի հրամայականներն են սոցիալական անհավասարությունը, ահաբեկչությունը, անջատողականությունը և բնակչության արտագաղթը։ Այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ, ՀԱՊԿ, ԵՄ և այլն, ենթադրում են մասնակից պետությունների ինքնիշխանության մասնակի սահմանափակում, որպեսզի միջազգային հանրությունը կարողանա ազդեցություն ունենալ առանձին պետությունների կողմից վարվող քաղաքականության վրա, հատկապես մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում, սակայն հարկ է նաև նշել, որ վերոնշյալ միջազգային կազմակերպությունն ունեն համամատաբար ավելի քիչ ժողովրդավարաան ինստիտուտներ։

## Կատարյալ ժողովրդավարություն

«Կատարյալ ժողովրդավարություն» հասկացությունն ունի երկու նշանակություն։ Համաձայն առաջինի՝ գաղափարն ընդունվում է որպես հնարավոր համակարգերից ամենակատարյալը։ Երկրորդ նշնանակությունը ենթադրում է ազատական ժողովրդավարության ինստիտուտների առկայությունը ինչպիսին է այլ կառավարման ձևերի ժողովրդավարությունը։

Այդ բոլոր հարցերը ենթադրում են պատասխանների լայն շրջանակ։ Օրինակ, համաձայն Ռոբերտ Դալի, ժողովրդավարության գաղափարը ենթադրում է որոշակի հանրության առկայություն (դեմոս), որտեղ յուրաքանչյուր անդամ հավասարաչափ իրավասու է լինել մասնակից այդ հասարակության կառավարման գործընթացին, ունի անհրաժեշտ գիտելիքներ այն մասին, թե ինչպիսի քաղաքական ընտրությունն է թույլատրում լավագույնս պաշտպանել իր շահը։ Քաղաքական որոշումների կայացումը՝ ելնելով վերոնշյալ սկզբունքներից, պահանջում է տվյալ հասարակության բոլոր քաղաքացիների հավասար և արդյունավետ հնարավորությունների առկայություն։ Ժողովրդավարական հիմնարար մոդելների խնդիրը քաղաքացիների գործունեության որոշման շրջանակի որոշումն է, որոնց վրա տարածվում է քաղաքական հավասարությունը, բայց նման դեպքում խոսքն այն հասարակության մասին է, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի ունի պետությամբ կառավարելու հավասար հնարավորություններ, սակայն համաձայն ժամանակակից մետեցումների, բոլորը կամ մեծամասնությունը պետք է լինեն լիրավ քաղաքացիներ։ Համաձայն Կարլ Փոփերի, ժողովրդավարությունն իրենից ներկայացնում է բաց հասարակություն, որտեղ բոլոր անդամները քննադատորեն են տրամադրված թաբի հանդեպ՝ հիմնվելով անձնական մտավոր ունակությունների և քննադատական մտածողության վրա, ինչպես նաև ելնելով այն պայմանավորվածություններից, որոնք ձեռք են բերվել համատեղ քննարկումների արդյունքում։

## Ժողովրդավարության ինստիտուտները

Տարբեր պետությունների ժողովրդավարության իրականացման մոտեցումների համեմատությունն ինքնին յուրօրինակ է։ Դրա հետ մեկ տեղ հնարավոր է նաև իրականացնել բազմաթիվ դասակարգումներ՝ ելնելով իշխանության գերիխող ճյուղից, իշխանության տարածքային աստիճանակարգից, գործող կուսակցությունների քանակից և այլն։ Հետագա ընդհանրացումը հնարավորություն է տալից բացահայտել այն հիմնարար քաղաքական ինստիտուտները, որոնք անհրաժեշտ են կատարյալ ժողովրդավարության հաստատման համար։

Ժողովրդավարության պրատիկ իրականացումը կախված է մի շարք պայմաններից, հատկապես բնակչության թվաքանակից և տարածքի չափից։ Օրինակ, խոշոր

վարչական միավորումներն ի տարբերություն փոքր միավորների իրենց կազմով առավել միատարր են և քաղաքաան կյանքին մասնակցելու համար ունենում են լավագույն հնարավորություններ: Առավել սեղմ հանրություններում հնարավոր է կազմակերպել արյունավետ բանավեճեր և ներայացնել այնպիսի հնարավորություններ, որոնց միջոցով քաղաքացին կարող է անմիջականորեն ազդել վարվող քաղաքականության վրա: Դրա համար, իրենց չափերով փոքր կառույցներին առավել հեշտ է բավարարել ժողովրդավարացման չափանիշներով: Սակայն հարկ է նաև նշել, որ բնակչության թվաքանակի նվազմամբ ցածրանում է նաև իշխանության իրական ծավալը և որոշումների կայացման հնարավորությունները, հատկապես այն հարցերի շուրջ, որոնք առնչվում են պաշտպանության և տնտեսական ոլորտների հետ: Այս հակասության լուծման ճանապարհներից մեկի հիմքում ընկած է տարբեր մակարդակների միավորներում վարչական և հասարակական ուղղություններում ազդեցության ոլորտների բաժանման սկզբունքը՝ քաղաքների և շրջանների բաժանման ճանապարհով, որը հնարավոր է հաստատել կառավարման ներկայացուցչական ձևերի ներդրման արդյունքում:

## Օրենսդրական իշխանության կառուցվածքը

Պառլամենտական (խորհրդարանական) ժողովրդավարություն: Կառավարությունը նշանակվում է օրենսդրական մարմնի կողմից: Կառավարությունը և կառավարության ղեկավարը (վարչապետը) նույնպես կարող են հաշվետու լինել պետության ղեկավարին (միապետին, նախագահին կամ որևէ այլ հատուկ մարմնին): Պառլամենտական հանրապետությունում պետության ղեկավարը պարբերաբար ընտրվում է պառլամենտի կողմից կամ այդ պաշտոնը համատեղելիության կարգով զբաղեցնում է կառավարության ղեկավարը: Նախագահական հանրապետության պայմաններում նախագահն ընտրվում է ժողովրդի կողմից և հանդիսանում է գործադիր իշխանության ղեկավարը: Գոյություն ունեն նաև խառը համակարգեր: Միապալատ պառլամենտ: Նորմատիվ ակտերն ընդունվում են հանդիպումների ժամանակ, կառավարության բոլոր անդամների մասնացությամբ: Երկպալատ պառլամենտ: Գործադիր ժողովը կազմված է երկու պալատներից, որոնք ձևավորվում

և գործում են առանձին-առանձին։ Մեկ նորմատիվ ակտը կարող է արժանանալ միայն մեկ պալատի հավակնությանը, իսկ մյուսը՝ երկու պալատների հավակնությանը։

**Ներկայացուցչական մարմինների ընտրական համակարգը**

- Մեծամասնական (մաժորիտար) ընտրական համակարգ։ Տարածքը բաժանված է շրջանների, որոնցից յուրաքանչյուրն օրենսդրական ժողովում ունի մեկ ներկայացուցչի իրավունք։ Այդ պատգամավորը դառնում է այն թեկնածուն, ով հավաքում է ձայների մեծամասնությունը։
- Համամասնական ընտրական համակարգ. Քաղաքական կուսակցություններն օրենսդրական ժողովում ստանում են այնքան տեղեր, որոնք համամասնական են իրենց կողմից հավաքած ձայների քանակին։
- Խմբային ընտրական համակարգ։ Բնակչության որոշակի խմբեր առաջադրում են իրենց պատգամավորներին՝ համաձայն նախօրոք քննարկված քվոտայի։
- Երկկուսացական համակարգ։ Քաղաքական դաշտում գերիշխում են երկու խոշոր կուսակցություններ;
- Բազմակուսակցական համակարգ։ Կառավարության նշանակմանը հիմնականում հաջորդում է իշխող կոալիցիայի (դաշինքի) ձևավորումը՝ երկու կամ ավելի կուսակցություններից, որոնք առաջադրվում են օրենսդրական ժողովին։

Այսօր մի շարք ազատական ժողովրդավարության համար բնորոշ են հետևյալ ինստիտուտների առկայությունը

- Ընտրովի պետական պաշտոններ։ Ժամանակակից ժողովրդավարությունները ներկայացուցչական են, համաձայն հիմնական օրենքի՝ նորմատիվ ակտերի և որոշումներ իրականացման հանդեպ անմիջական վերահսկումն իրականացվում են ժողովրդի կողմից ընտրված անձինք։
- Ազատ, արդար և հաճախակի անցկացվող ընտրություններ, որին իրավունք ունի մասնակցել յուրաքանչյուր քաղաքացի՝ (որպես ընտրող և որպես թեկնածու), համադրելով քաղաքացիների և իրենց միավորումների հետ շարունակական բաց քաղաքական մրցակցությունը։

- Կառավարության պատրաստակամությունը։ Տարվող քաղաքականությունը կախված է ինչպես ընտրությունների արդյունքներից, այնպես էլ ընտրողների նախասիրություններից։
- Խոսքի ազատություն։ Քաղաքացիներն կարող են ազատ արտահայտել իրենց կարծիքը, քննադատել իշխանությանը, քաղաքական կուսակցությանը, հասարակական և տնտեսական կարգը և գերիշխող գաղափարախոսությունը։
- Տեղեկատվության այլընտրանքային և անկախ աղբյուրներից օգտվելու կարողություն։ Քաղաքացիներն ունեն այլ քաղաքացիներից, ԶԼՄ-ներից, գրքերից և այլ աղբյուրներից տեղեկատվություն փնտրելու և ստանալու հնարավորություն։ Տեղեկատվության այլընտրաքային աղբյուրները պետք է հասանելի լինեն և վերահսկողության չենթարկվեն որևէ քաղաքական խմբի կողմից։
- Զարգացած քաղաքացիական հասարակություն, հասարակական կազմակերպությունների ինքնավարություն և վերջիններիս պետական ինստիտուտների վրա ազդելու ունակություն։ Քաղաքացիներն իրավասու են հաստատել հարաբերականորեն անկախ խմբեր, այդ թվում նաև քաղաքական ուսակցություններ։

Այն քաղաքական համակարգերը, որոնք ներառում են վերոնշյալ ինստիտուտներն անվանվում են «Պոլիարխիա»։ Պոլիարխիայի կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն ենթադրում է քաղաքական մրցակցություն, քաղաքականության մեջ մասնակցային իրավունք և դաշնակցային կառավարում (կոալիցիա)։ Նմանօրինակ կառավարումը հակադիր է բռնատիրական կառավրամանը, երբ քաղաքական վեկտորի ընտրության ժամանակ գերիշխող է դառնում միայն մեկ խմբի նախասիրությունը։ Կարևոր է նաև մրցակցող ընտրանու պահանջարկը բնակչության լայն խավերի աջակցությանն արժանանալու համար, ինչը հիմնականում բնորոշ է օլիգարխիային։ Ժան Բոդրիյարը ենթադրում է, որ ժամանակակից ժողովրդավարական հասարակությունն իրենից ներկայացնում է սպառողի հասարակություն, որտեղ հավանական է իրական զգացողությունների, մշակույթի, իրական արժեքների բացակայություն, որտեղ մարդկային կյանքի իմաստավորումը գնում է դեպի յուրաքանչյուր գնով կապիտալիստական տնտեսության աճի որոշմանը և գլոբալացման արդյունքում առաջացած

ժողովրդավարությունը վերածվում է ապրանքի տեսականու, որը որպես խնդիրների լուծման միջոց բարիությամբ փաթեթավորված վաճառվում է այլ մշակույթներին, որի պարտադրված լինելու դեպքում առաջացնում է մերժողական դիրքորոշում: Որոշ հետազոտողներ պնդում են, որ ժողովրդավարության առաջխաղացումը միջազգային տնտեսական գլոբալիզացիայի հետևանք է, որը ևս հանգեցնում է միջազգային մրցացուցյանը, արտագաղթի ուժեղացմանը, ինպչպես նաև զարգացած պետություններում աշխատավորների սոցիալական իրավունքների ուժեղացմանը: Մի շարք հեղինակներ այն կարծիքին են, որ ժողովրդավարական սկզբունքներն անհրաժեշտ է զարգացնել ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական դաշտում: Տնտեսական ժողովրդավարությունն ուսումնասիրվել է Բերնշտեյնի և իր հետևորդների աշխատություններում: Այն որոշում է որպես չափորոշիչների հավաքածու, որոնք անհրաժեշտ են տնտեսական իշխանության բաշխման ժամանակ՝ անորոշությունների շտկման համար: Ժողովրդավարության ժամանակակից տեսության մեջ առկա են երեք հիմնական ուղղություններ՝ ֆենոմենոլոգիական, բացատրական և նորմատիվ: Ֆենոմենոլոգիական տեսությունը բնութագրում և դասակարգում է առա ժողովրդավարական համակարգերը: Բացատրական տեսությունը հաստատման ժամանակ փորձում է հաստատել թե ում նախասիրություններն են ժողովրդավարության հաստատման ժամանակ որևէ դեր խաղալու:, ինչպիսին են լինելու որոշումների կայաման մեխանիզմերը, ինչպես խուսափել անցանալի հետևանքներից: Իսկ նորմատիվ տեսության ժամանակ առարկա է հանդիսանում ժողովրդի իշխանության էթիկական կողմը՝ երբ և ինչու է ժողովրդավարությունը ցանկալի հենց բարոյականության տեսակետից, ինչպիսի սկզբունքներ պետք է լինեն ժողովրդավարության ինստիտուտների հիմքում, ինչպիսիք են ժողովրդավարական հասարակություններում քաղաքացիներից ողջամիտ սպասումները: Այս տեսության մեջ կարևոր ներդրում են ունեցել Արիստոտելը, Ջոն Լոքը, Դեվիդ Յումը, Շառլ Լուի Մոնտեսքյոն, Ժան-Ժակ Ռուսոն, Ջոն Ստյուարդ Միլլը, Ջոն Դյուին, Յուրգեն Հաբերմասը, Ջոն Ռոլզը, Հանա Արենդտը և այլ մտածողները: Ժողովրդավարությունն իրենից ոչ միայն ժողովրդական կառավարում է ներկայացնում, այլ նաև մարդու իրավունքների համակարգ: Այդ իրավունքների խախտումը կասկածի տակ է դնում կառավարման

ժողովրդավարությունը: Ժողովրդավարությունը պահանջում է կայուն պետության առկայություն որպես լեգիտիմ ուժի օգտագործման միակ աղբյուր:

## Եզրակացություն

Այսպիսով ժողովրդավարությանը բնորոշ առանձնահատկություններն են՝

1.Իշխանությունները բաժանված են անկախ թևերի՝ օրենսդիր, գործադիր, դատական, որոնցից յորաքանչյուրը իրականացնում է հստակ ֆունկցիա:

2.Քաղաքացիները օժտվածեն լայն իրավունքներով և ազատություններով՝ Ինչը արգելված չէ օրենքով, թույլատրելի է: Քաղաքացիները ազատ կարող են իրենց կարծիքը արտահայտել իշխանությունների վարած քաղաքականության շուրջ:

3.Ազատ գործում է ընդդիմությունը և օգտվում է քաղաքական բոլոր իրավունքներից և ազատություններից;

4.Գործում է բազմակուսակցական համակարգ:

5.Բանակը և հատուկ ծառայությունները գործում են օրենքի շրջանակներում և ծառայում են պետության ներքին և արտաքին անվտանգությանը:

6.ԶԼՄ-երը ազատ են գրաքննությունից, ազատ քննադատում են իշխանություններին, երբ նրանք վատ են կատարում իրենց սոցիալական պարտականությունները:

7.Տնտեսության մեջ առկա է սեփականության տարբեր ձևեր՝ պետական, մասնավոր, կորպորատիվ:

8.Ժողովրդավարության պայմաններում հնարավոր է ունիտար-միակազմ և ֆեդերատիվ-կոնֆեդերատիվ պետության ձևեր: Ունիտար պետության ժամանակ տեղական իշխանությունները ավելի մեծ իրավունքներով են օժտված:

9.Ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանված են լայն իրավունքներով:

## Գրականություն

1.Խաչատրյան Ս. Պետրոսյան Ս. Արնաուդյան Ա. Զոհրաբյան Ա. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր: Ձեռնարկ մանկավարժների համար: Երևան 2005, Տիգրան Մեծ 396 էջ:

2.Խաչատրյան Ս. Պետրոսյան Ս. Տեր-Մկրտչյան Թ. Խախամյան Տ. Ավանեսյան Վ. Քաղաքացիական կրթություն. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ: Ուսումնական ձեռնարկ 8-9 դասարանների համար: Երևան 2005, Էդիտ պրինտ, 211 էջ:

3.Մասնակցային ժողովրդավարություն: Ձեռնարկ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիա, Երևան 2008

# ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հասարակագիտության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Թեմա- *Բարոյական արժեքներ*

Կատարող – Շիրակամուտի միջնակարգ դպրոցի հասարակագիտության ուսուցիչ Հրաչ Նալբանդյան

Ղեկավար --- Ռուդիկ Վարդանյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

1. Ներածություն:
2. Ի՞նչ է արժեքը:
3. Արժեհամակարգային փոփոխությունները այսօր:
4. Ընտանիքի և դպրոցի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում:
5. Եզրակացություն :
6. Գրականություն :

# Ներածություն

**Թեմայի արդիականությունը.**

Արցախյան շարունակական գոյամարտը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը և քաղաքական արտաքին ու ներքին բազում գործոններն ունեցան իրենց տխուր հետևանքները՝ պարարտ հող ստեղծելով բացասական տարաբնույթ երևույթների աշխույժ գործունեության համար: Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվեցին երկրորդական պլան: Վերջիններս բացասական ազդեցություն ունեցան երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի ու արժեհամակարգի վրա: Ի տարբերություն նախորդ դարաշրջանի՝ մերօրյա ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները:

**Հետազոտական աշխատանքի նպատակն է՝**

**ա.** Որպեսզի կարողանանք պահպանել և զարգացնել պատմականորեն ժառանգություն ստացած ազգային և համամարդկային արժեքներն ու ավանդույթները՝ դիմադրելու օտարամոլությունն ու տարաբնույթ բարքերը, ապազգային մարտահրավերները, ամրապնդելու մեր պետականությունն ու ազգային-մշակութային մտածողությունը՝ չափազանց կարևոր է, որ հայեցի կրթությունն ու դաստիարակությունը լինի գերակայող չափորոշչային և ծրագրային ամբողջություն մեր կրթական համակարգում, ուսումնական հաստատություններում և հասարակական-քաղաքական կյանքում ընդհանրապես:

Անհրաժեշտ է, որ սովորողների արժեհամակարգային հիմնահարցերի լուծման հարցերում մենք ունենանք ազգային ոգու կրող, ազգային բնավորություն ու խառնվածք, հայրենասիրությամբ ու պատվախնդրությամբ օժտված սերունդ:

**Թեմայի խնդիրը.**

Վերոնշյալ նպատակի իրականացման նպատակով անհրաժեշտ է մեծացնել ուսումնական հաստատությունների ու ընտանիքների գիտակրթական, բարոյակամային, պետականաշեն և ազգանպաստ վերաբերմունքը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից նոր սերնդի ազգային ավանդույթների արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության կազմակերպման գործընթացի ընկալումը: Պետական և հասարակական ինստիտուտների գործունեության միջոցով հասանելի դարձնել արժեքային համակարգի՝ որպես սովորողի ուսումնառության, դիրքորոշման և վարքագծի ուղղորդող բաղադրիչի ձևավորումն ու ազգային ավանդութային պահանջմունքների բավարարումը՝ սովորողների մեջ զարգացնելով անձնային, բարոյական որակներ՝ պատասխանատվություն, ազատություն, հանդուրժողականություն, հայրենասիրություն, որոշումներ կայացնելու կարողունակություն և այլն :

# Ի՞նչ է արժեքը

Արժեքը որևէ բանի կարևորությունը, նշանակալիությունը և օգտակարությունն է: Արժեհամակարգը մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր: Մաքս Վեբերն արժեքի կարևոր հատկանիշ էր համարում պատմականությունը՝ ենթադրելով, որ այն միայն ժամանակաշրջանի ընդհանուր դիրքորոշումների արտահայտումն է: Նիկոլայ Ռոզովի կողմից կրթության ոլորտի համար մանրամասնորեն դասակարգվել են նշանակալի արժեքներ, որոնցից են՝

«ա.մարդասիրական արժեքները, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին և արժանապատվությանը,

բ. սոցիալական արժեքները, որոնք վերաբերում են առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեությանը քաղաքական, տնտեսական և իրավական ոլորտում,

գ. մշակութային արժեքները, որոնք վերաբերում են արվեստին, կրոնին, բարոյականությանը, ազգային և էթնիկ ավանդույթներին,

դ. էկոլոգիական արժեքներ, որոնք վերաբերում են շրջապատող բնությանը, շրջակա միջավայրին, կենսական բազմազանությանը» [1,162]:

Անշուշտ, այս գործընթացում կարևորվում է սովորողների պատմական փորձի իմացության և իմաստավորման հիման վրա ճիշտ ճանապարհով առաջ գնալուն և հասարակական առաջընթացին մասնակցություն ունենալուն: Հայոց պատմության դասավանդումը կարևորվում է ազգի հոգեկերտվածքը, նրա նկարագիրը պահպանելու տեսակետից: Ազգային դավանանքը, հոգևոր արժեքները, պատմական և գեղարվեստական գրականությունը վիթխարի դեր են խաղում ազգային ինքնագիտակցության և ազգային ոգու պահպանման գործում. Ինչպես իրավամբ նշում է ֆրանսիացի հոգեբան Գուստավ Լեբոնը, «Ժողովուրդները կործանվում են իրենց ինքնությունը և բնավորությունների որակի փչացմանը համաչափ…ժողովուրդների խաղաղ ոչնչացումը սկսվում է պատմական հիշողության կորստից»[2, 76]:

Արդի մանկավարժական պրակտիկայում իր ուրույն տեղն ունի ազգային ավանդույթներով իրականացվող դաստիարակությունը: Հայ ժողովուրդը պատմական երկարատև զարգացման ճանապարհին մշակել և արմատավորել է

իրեն բնորոշ սովորույթներ, առօրյա կյանքի կանոններ, նորմեր, որոնք, փոխանցվելով սերնդեսերունդ, դարձել են ազգային ավանդույթ և օգտագործվում են որպես նոր սերնդի դաստիարակության կարևոր միջոց: Երեխայի դաստիարակչական աշխատանքում կարևոր է հաշվի առնել ազգային ավանդույթները, սովորույթները, բարքերը, ժողովրդական կենցաղը, յուրաքանչյուր ազգության նկատմամբ ունենալ յուրահատուկ մոտեցում: Երեխայի հետ տարվող դաստիարակչական աշխատանքում անհրաժեշտ է տեղ հատկացնել ազգային առաջադիմական ավանդույթներին: Բարոյական դաստիարակության համար խնդիր է սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով այդ հանգամանքների ներգործությունը և հաղորդակցվելով հասարակական մշակույթին, արժեքաբանական հատկանիշներին, բարոյական հիմնարար արժեքներին, կենցաղավարական կանոններին, սովորողը ուղղակի կամ անուղղակի ձևով ընդօրինակում է ազգային ավանդույթները: Դաստիարակության արդյունավետության բարձրացման նպատակով ազգային ավանդույթների պահպանումը և կիրառումը կարող են մեծապես նպաստել աճող սերնդի կատարելագործմանը, որը պահանջում է ստեղծագործական մոտեցում, անցյալի մշակույթի նկատմամբ բացառիկ նրբազգացություն, արդիականության սուր զգացողություն: Սակայն ավանդույթներից ոչ բոլորն են պահպանել իրենց դաստիարակչական նշանակությունը: Դժվարությունն այն է, որ ազգային ավանդույթներում տեղ են գտել ոչ միայն առաջադիմական, առողջ հայացքներ, այլև հետադիմական: Եթե դրական ավանդույթները դաստիարակության կարևոր գործոն են և նպաստում են հասարակության առաջընթացին, ապա հետադիմական ավանդույթներն, ընդհակառակը, խանգարում են առաջընթացին, ուստի դաստիարակչական աշխատանքը անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի հատուկ ձևերով և մեթոդներով, որ հասարակական հարաբերություններում և ընտանեկան կենցաղում դեռևս պահպանվող վնասակար սովորույթները և ավանդույթները չդառնան տիրապետող նաև ուսումնական գործընթացում:

Նյութական և սոցիալական շատ արժեքներ ժամանակի ընթացքում փոփոխվում են: Որոշ ավանդույթներ, որոնք կարևորվում էին սրանից տասնամյակներ առաջ, այսօր էական արժեք չեն ներկայացնում: Ժամանակի ընթացքում հայացքները,

կարծիքները, արժեքները փոփոխվում են: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, որոնք ունեն իրենց արժեքային կողմնորոշումները, նախասիրությունները և պահանջմունքները: Անշուշտ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, վաղվա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են, և այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել սովորողի առաջընթացի հետևյալ խնդիրները. ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության և ինքնուրույնության զարգացում և այլն:

Քանի որ երեխան դեռևս չունի կայացած արժեհամակարգ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Այս առումով մեծ է ԶԼՄ–ների դերը, որոնցից հաճախ հնչող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, խաթարված մտածելակերպը, սոցիալական կյանքերում հակասոցիալական ու հակազգային արժեքներ քարոզող նյութերը իրենց բացասական ազդեցությունն են ունենում երեխայի արժեհամակարգի վրա: Եթե երեխայի ներկայությամբ ծնողը խրախուսում է դրսից քարոզվող բացասական երևույթները, այդ դեպքում նմանատիպ սոցիալական դիրքորոշումներ ձևավորվելու հավանականությունն ավելի մեծ է լինում, և ընդհակառակը, եթե ծնողը քննադատում է անիմաստ, ոչինչ չտվող հաղորդումները կամ ֆիլմերը, ապա հնարավոր է, որ երեխայի մոտ չձևավորվեն բացասական սոցիալական դիրքորոշումներ: Կարևոր է ծնողների դիրքորոշումը՝ այնքանով, որ խրախուսելով կամ հանդիմանելով՝ նրանք ամրապնդում կամ արգելակում են վարքի տվյալ դրսևորման ձևավորմանը:

Ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման միջոցներ են համարվում ժողովրդական բանահյուսությունը, ազգային խաղերը, ծեսերը, տոները, պարը, տարազը, զրույցը, ծնողի անձնական օրինակը և այլն: Դրանք, որպես մանկավարժական արժեքներ, մեծ նշանակություն ունեն դաստիարակության ողջ համակարգի համար: Օրինակ՝ժողովրդական բանահյուսության մեջ մարդկանց զգացմունքներն ու մտքերը, պահանջմունքներն ու գաղափարները հանգում են նրան, որ ֆիզիկական աշխատանքը մարդու ֆիզիկական, բարոյական և մտավոր

զարգացման հիմքն է և անհրաժեշտ գործոնը: «Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված է ժողովրդի կյանքը, նրա աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդական փիլիսոփայությունը և գեղագիտական ընկալումները: Բանահյուսությունն ունի ճանաչողական մեծ արժեք, հատկապես բոլոր ժողովուրդների նախապատմական շրջանի կյանքի ժամանակահատվածն ընկալելու առումով» [3, 64]:

## Արժեհամակարգային փոփոխությունները այսօր

Այսօր գիտության, կրթության և տեխնիկայի զարգացումը թելադրում է բարոյական արժեքների գլոբալացման գործընթացին բնորոշ երանգավորում: «Գլոբալացումը պայմանավորված է ժամանակակից աշխարհի զարգացմամբ: Այն պետք է դիտարկել ոչ միայն որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, կրթական, էկոլոգիական, այլ նաև միջազգային ինտեգրման գործընթաց, որի արդյունքում մարդկությունը դառնում է միասնական և փոխկապակցված» [4, 12]:

Ժամանակակից գլոբալացումն ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն է ունենում մարդու արժեհամակարգի վրա: Այսօր շատ արժեքային պատկերացումներ հիմնովին փոխվել են: Չնայած նրան, որ սոցիալ–մշակութային արժեքները ենթարկվել են որոշակի կանոնակարգման, այնուամենայնիվ հիմնական շեշտադրումն ուղղված է դեռևս օտարամուտ նորամուծություններին: Ինտեգրվելով եվրոպական համայնքին՝ ներմուծվում են եվրոպական արժեքներ, որոնք շատ հաճախ չեն համապատասխանեցվում ազգային առանձնահատկություններին, որով էլ խանգարում են ընտանեկան հարաբերությունների նորմալ ընթացքին, մասնավորապես երեխայի դաստիարակությանը:

Այսօր հասարակություն են ներթափանցել մեր ազգին ոչ հարիր արժեքներ, որոնք խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, որ այն լինի բնականոն: Եթե փոփոխությունը տեղի է ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է արժեքային համակարգը: Նման իրավիճակում խիստ կարևորվում են ավանդական արժեքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին:

## Ընտանիքի և դպրոցի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում

Ընտանիքը երեխայի ձևավորման, զարգացման, կայացման և ինքնահաստատման, արժեքաբանական որակական դրդապատճառների ձևավորման, հասարակության մեջ ինտեգրվելու կարևոր սոցիալական ինստիտուտներից մեկն է: Սակայն ընտանիքը միշտ չէ, որ համապատասխանության մեջ է գտնվում տվյալ դարաշրջանի սոցիալ–տնտեսական իրականության հետ: Ընտանեկան ավանդույթների կիրառումը այսօր չափազանց կարևոր է ժամանակակից ընտանիքի բարոյական հատկանիշների ամրագրման և երիտասարդ սերնդի առողջ դաստիարակության տեսանկյունից:

Ընտանիքի հիմնական նպատակներից մեկը մշակութային արժեքների փոխանցումն է, որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում վարքագծային նորմեր, իրականացվում երեխայի սոցիալականացման առաջին փուլը, հարմարումը կյանքին: Եվ եթե կան խանգարող հանգամանքներ ընտանիքին լուծելու իր խնդիրները՝ ապա դրանցից առաջնայինը համարվում է ավանդական արժեքների անտեսումը՝ հատկապես ժամանակակից ընտանիքի կողմից :

Ըստ Ղ. Աղայանի բարոյականության ավանդական արժեքային համակարգի ակունքներից մեկը աշխատանքն է, որը նյութական և հոգևոր բոլոր արժեքների աղբյուրն է: Այն անչափ բարերար է ազդում մարդկանց բարոյական դաստիարակության վրա: «Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլորության» [5, 68]: Հետևապես պետք է վաղ հասակից երեխային դաստիարակել աշխատանքային ավանդույթներով, նրան նախապատրաստել աշխատանքային գործունեության համար: Աշխատանքային դաստիարակության, աշխատավոր ժողովրդի լավագույն ավանդույթների մասին Աղայանի հիմնարար դրույթները մարմնավորվել և տեղ են գտել նրա «Մայրենի

լեզվի» դպրոցական դասագրքերում և այսօր էլ՝ հայ անվանի մանկավարժի դրույթները աշխատանքային ավանդույթների մասին մեծապես նպաստում են հայեցի կրթություն տվող դպրոցի աշակերտների բարոյական դաստիարակության գործին:

Հասարակության նորմերը, արժեքները, սովորույթները, ծեսերը շատ մեծ դեր են խաղում սովորողի արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության մեջ: Ընտանիքում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով, վարքագծով, արժեքային կողմնորոշումներով: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողը: Արժեքային համակարգի ձևավորման և պահպանման գործընթացում ոչ միայն ընտանիքը, այլև դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում, են ապագա քաղաքացու բնավորությունը, բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ընդ որում ուսուցչի մարդկային և բարոյական նկարագիրը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, աշխարհայացքային մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: «Ուսուցչի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդհամենը մեկ քայլ է»[6,132]: Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Իհարկե, այստեղ հիմնականում նկատի ունենք դաստիարակվածությունը, որը բովանդակում է հետևյալ որակների առկայությունը, բարությունը և հոգատարությունը շրջապատի նկատմամբ (մարդկանց, բնության, կենդանիների, հոգևոր արժեքների), ճշմարտագործությունը (խոսքի ու գործի), ազնվությունը(վարքի և գիտակցության), պատասխանատվությունը (գործի, մարդկանց, պարտականությունների),

երախտագիտությունը (ծնողի, հարազատի, հայրենիքի նկատմամբ), նվիրվածությունը և այլն: Այս բոլոր որակները միաժամանակ բնութագրվում են որպես բարոյական դաստիարակության խնդիրներ, ուստի պատահական չէ, որ դաստիարակվածության մակարդակը բնութագրելիս օգտագործվում է բարոյական է և առաքինի բառակապակցությունը: Բարոյական դաստիարակությունն արտահայտում է դաստիարակության նպատակների ու բովանդակության ամբողջության կարևորագույն ուղղություններից մեկը:

Ինչպես հայտնի է՝ երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Ակնհայտ է, որ երկրորդի դեպքում արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում ավելի շատ տարերային ձևով: Այն չի կրում կազմակերպված բնույթ: Դժվար է ապացուցել, որ այդ գործընթացը կառավարելի դարձնելով, կարելի է հասնել դրական արդյունքի: Սակայն սովորողների գիտակցության և վարքագծի մեջ «նոր արժեքների» յուրովի ընկալումը կրում է տարասեռ բնույթ, որը կախված է մի շարք գործոններից. այն սոցիալական միջավայրի գաղափարախոսությունից, որտեղ դրանք տարածվում են, տնտեսական և սոցիալական զարգացման օբյեկտիվ գործընթացների բնույթից և այլն:

Այսպիսով՝ հենց ընտանիքում և դպրոցում են ամրագրվում ապագա քաղաքացու բարոյական և կամային արժեքաբանական որակները:

## Եզրակացություն

Ժամանակի բարդ և անհանգիստ իրականության շրջանակներում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է սոցիալական տարբեր ինստիտուտների՝ ընտանիքի, դպրոցի և այլն դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը:

Ելնելով վերը շարադրվածից, կարելի է ընդհանրացնել. հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է գիտելիքների բարձր մակարդակով ու արժեքների պահպանմամբ: Միայն կրթության միջոցով ժամանակակից սերունդը կկարողանա շարունակել պատմամշակութային և ազգային սերնդեսերունդ փոխանցվող լավագույն ավանդույթները:

## Գրականություն

1.Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը Մանկավարժություն, N1-2, 7-14 էջ, 2004:

2.Դոլուխանյան Ա. Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., «Զանգակ–97», 2008, 268 էջ:

3. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Զոն, 2011, 160 էջ:

4.Ղարիբջանյան Օ. Բ., Ժողովրդական ավանդույթները դպրոցականների բարոյական դաստիարակության գործոն, Եր. «Լույս»,1978, 65 էջ:

5. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Ե., 1986թ., 395 էջ:

6.Розов Н. С. „Культура, ценности и развитие образования,”- М, Иследовательный центр, 1992,-154с.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

*ԹԵՄԱ՝* Պատերազմ և քաղաքականություն: Քննադատական մտածողության զարգացում

*ԿԱՏԱՐՈՂ՝* Արմեն Ամիրխանյան

*ՂԵԿԱՎԱՐ՝* Ռուդիկ Վարդանյան

*ՎԱՆԱՁՈՐ 2023*

# Պատերազմ և քաղաքականություն: Քննադատական մտածողության զարգացում

## Ներածություն

Պատերազմը և քաղաքականությունը մարդկային գործունեության երկու փոխկապակցված ոլորտներ են, որոնք ձևավորել են հասարակությունը և ազդել են մարդկային զարգացման վրա: Դպրոցում այս թեմայի ուսումնասիրությունը սովորողներին հնարավորություն է տալիս ավելի խորը պատկերացնել դրանց ազդեցությունը նաև քաղաքակրթությունների վրա: Այս աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել դպրոցում այս թեմայի դասավանդման մոտեցումների հետ կապված հիմնախնդիրները, թեմայի շուրջ քննարկումների օգնությամբ զարգացնել սովորողների մոտ քննադատական մտածողությունը և նպաստել իրազեկման բարձրացմանը, ինչպես նաև օգնել սովորողներին ավելի լավ կողմնորոշվելու այս բարդ ու նուրբ թեմայի յուրացման գործում:

## Պատերազմի ու քաղաքականության հիմնահարցը

Պատերազմը և քաղաքականությունը  երկու փոխկապակցված ոլորտներ են, որոնք դարերի ընթացքում կանխորոշել են մարդկության պատմության ընթացքը, կարևոր դեր են կատարել ազգերի ձևավորման գործում, փոփոխել են մշակութային բաղադրիչը և հասարակության շրջանում ընդունված նորմերը: Այս աշխատանքում կարևորվում է նաև Հայաստանի պատմության հետ աղերսները և ժամանակակից գլոբալ քաղաքական ոլորտը: Թեմայի դասավանդման ժամանակ մի քանի առիթով հիշատակում ենք հայտնի տեսաբան ու ստրատեգ Կառլ ֆոն Կլաուզևիցի մտքերից, որոնցից է օրինակ՝ հետևյալը.  «Պատերազմը գործիք է , որով պետությունները հասնում են քաղաքական նպատակների»: Եվ իսկապես պատմությունից հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ հակամարտությունները նախաձեռնվել կամ շարունակվել են քաղաքական նպատակներին հասնելու համար կամ պետությունների ղեկավարները ազդել են որոշումների կայացման վրա՝ հաշվի առնելով ոչ միայն քաղաքական ձեռքբերումները, այլև կորուստները:

Հայաստանի պատմությունը նույնպես ունի այսպիսի օրինակներ: Իր պատմության ամբողջ ընթացքում գտնվելով կայսրությունների խաչմերուկում՝ այն վեր է ածվել աշխարհաքաղաքական պայքարի կենտրոնի: Պատմությունից կարելի է զուգահեռներ տանել ու սովորողներին հիշեցնել Հռոմի ու պարթևների, Բյուզանդիայի ու Սասանյան կայսրության ու հետո նաև Արաբական խալիֆայության, խաչակիրների ու մահմեդական իշխանությունների, Իրանի ու Օսմանյան կայսրության, Ռուսական կայսրության ու Իրանի կամ Օսմանյան կայսրության, Բոլշևիկյան Ռուսաստանի ու Անտանտի, ինչպես նաև  ժամանակակից Ռուսաստանի ու Արևմուտքի հակամարտության օրինակները:  Առաջին աշխարհամարտի տարիների Մեծ  եղեռնը, որը կազմակերպել էր Օսմանյան կայսրությունը հանդիսանում է ողբերգական օրինակ, թե ինչպես են քաղաքական որոշումները հանգեցնում սարսափելի արդյունքների

Նման օրինակ է նաև Արցախի շուրջը եղած հակամարտությունը, որը քաղաքական որոշումների արդյունքում աստիճանաբար վեր ածվեց զինված հակամարտության: Հայաստանի ու Ադրբեջանի քաղաքական ձգտումները՝ միահյուսված պատմական հավակնությունների հետ, դարձան երկարաժամկետ կոնֆլիկտի պատճառ: Այստեղ նորից արժե մեջբերել թեմայի շուրջ Կլաուզևիցի մեկ այլ մտքերից « Պատերազմը քաղաքականության շարունակությունն է այլ մեթոդներով»: Նա այս մտքով նաև ընդգծում է, որ պատերազմական գործողությունները պետք է համաձայնեցված լինեն գլոբալ քաղաքական նպատակների հետ և պետք է գործիք հանդիսանանա այս նպատակներին հասնելու համար այն ժամանակ , երբ դիվանագիտությունը պարտություն է կրում: Կլաուզևիցի մտքի այս ենթատեքստում լույս է սփռվում նաև այն իրողության վրա, որ պատերազմները նպաստել են մեր տարածաշրջանի վրա այս կամ այն ուժային կենտրոնի կողմից քաղաքական ազդեցություն ձեռք բերելու գործում: Նման մի օրինակ էլ ներկայիս Սիրիան է, որտեղ այս կամ այն ներքին կամ արտաքին խմբավորումը պատերազմը օգտագործում է քաղաքական ազդեցություն ձեռք բերելու համար:

Աշխարհաքաղաքական լարվածությունը, տնտեսական հետաքրքրությունները և գաղափարական տարաձայնությունները շարունակում են հակամարտություններ ծնել նույնքան շատ, որքան նախորդ դարերում: Դրա օրինակ է նաև Ուկրաինական

հակամարտությունը, որտեղ քաղաքական նպատակները բախվում են նաև տարածքային պահանջներին: Այս հակամարտությունը նույնպես քաղաքականության ու պատերազմի շփման գոտում առաջացած կոնֆլիկտի օրինակ է:

Այս վերջին օրինակներում երևում է նաև նոր՝ կիբերպատերազմների ու քաղաքականության միախառնումը: Քանի որ երկրները մասնակցում են նաև թվային դաշտում մղվող պատերազմներին, որպեսզի առավելություն ստանան արդեն իրական տարածքներում: Այս թեմայի դասավանդումը մանավանդ ավագ դպրոցի դասարաններում (իսկ իմ դեպքում նաև Մոնթե Մելքոնյան ռազմամարզական վարժարանում՝ ելնելով վերջինիս յուրահատկությունից) բավականին արդիական է և օգնում է հասկանալ պատմական ժամանակաշրջանները և զարգացնում է քննադատական մտածողություն, ձևավորում է տեղեկացված քաղաքացիներ, որոնք կարող են պատմական օրինակներից ելնելով՝ հասկանալ ժամանակակից իրավիճակները (պատմությունը տալիս է արժեքավոր օրինակներ, որոնք մեր գործունեությունը ուղղորդում են դեպի ապագան): Այս թեմայի քննարկումը օգնում է սովորողներին հասկանալ շատ դրդապատճառներ, հակամարտությունների էթիկակակն կողմերը, քաղաքական որոշումների ազդեցությունը հասարակության, մշակույթի ու բնակչության վրա, նպաստում է որ ձևավորվող քաղաքացին լինի ավելի կարեկցող ու ապրումակցող:

Այս առումով կարևոր է, որ դասերին քննարկվեն նաև օրինակներ, թե ինչպես կարող են քաղաքական որոշումները ազդել անհատների ու նրանց ընտանիքների վրա: Այսօրվա սովորողները ապագա ընտրողներ են. նրանք նաև նման օրինակները հաշվի առնելով պետք է ընտրեն քաղաքական որոշումներ կայացնողներին:

Դասերին նմանատիպ քննարկումը ունի նաև բարոյական կողմ: Դա ապագա որոշում կայացնողներին ու ընտրողներին ստիպում է հաշվի առնել հակամարտությունների բարոյական կողմերը: Ձևավորում է պատասխանատվություն և ստիպում է մտածել դիվանագիտության կարևորության մասին: Նմանատիպ օրինակները օգտակար են նաև հասարակագիտության այլ թեմաները լավ հասկանալու առումով: Դրա օրինակ է իշխանության տարանջատումը կամ կենտրոնացումը մեկ անձի ձեռքում, որը կարող է սխալ որոշումներ կայացնել:

Այս թեմայի ուսումնասիրությունը սովորողներին ծանոթացնում է տարբեր մշակույթների, պատմությունների ու զարգացման հեռանկարներին: Այս թեմայի ուսումնասիրությունը նաև օգնում է հասկանալ մարդկային փորձի դժվարությունները և դուրս է բերում նրանց սեփական մշակութային շրջանակներից, օգնում է նախապատրաստվել բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելուն և նախապատրաստում է այնտեղ ուսումնասիրվող թեմաներին այնպիսի բաժիններում, ինչպիսիք են միջազգային հարաբերությունները, քաղաքագիտությունը, հակամարտությունների պատմությունները և դրանց լուծումները: Այս թեման օգնում է զարգացնել նաև անհատական որակներ՝ քննադատական մտածողություն, կարեկցանք, ավելի արդար աշխարհ կառուցելու ձգտումների դրսևորմանը: Որոշակի չափով նպաստում է այն կարևոր հանգամանքի իրողություն դառնալուն, որի արդյունքում սովորողները ապագայում կկարողանան

լուծել գլոբալ պրոբլեմներ և դրական ներդրում ունենալ սեփական համայնքների զարգացման մեջ:

Ահա մի քանի պատմական ու ժամանակակից թեմաներ, որոնք կարելի է քննարկել այս թեմայի ուսումնասիրության ժամանակ:

**Առաջին**. Դիտարկենք Առաջին համաշխարհային պատերազմի առիթ հադիսացած Ավստրոհունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը, որը 1914 թվականին հանգեցրեց առաջին համաշխարհայինպատերազմին և հետագայում պատճառ դարձավ պատմական իրադարձությունների շարքի: Այս կոնֆլիկտը ցույց տվեց, որ քաղաքական դաշինքները, ազգայնական նկրտումները և կայսերական ամբիցիաները շատ սահուն վերածվում են սարսափելի հետևանքներով պատերազմների:






**Երկրորդ** օրինակը, որ կարելի քննարկել թեմայի շրջանակներում, Վիետնամական պատերազմն է. Կոմունիզմի ու կապիտալիզմի միջև գաղափարախոսական տարբերությունները սառը պատերազմի ժամանակ հանգեցրեցին ԱՄՆ-ի ներքաշման Վիետնամական պատերազմի մեջ: Այս կոնֆլիկտը ցույց տվեց, թե քաղաքական գաղափարախոսությունը ինչպես կարող են պատճառ դառնալ զինված ինտերվենցիայի և միջազգային հարաբերությունների ձևավորման:

**Երրորդ.** Սառը պատերազմ. Երկարատև գաղափարական և քաղաքական մրցակցությունը ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի միջև ձևավորել էին տասնամյակների գլոբալ քաղաքականությունը: Սպառազինությունների մրցավազքը, պրոքսի պատերազմները, Կարիբյան ճգնաժամը և Կուբայում հրթիռների տեղադրմամբ պայմանավորված ճգնաժամը ընդգծեցին, որ քաղաքական լարվածությունը կարող է մոլորակը կանգնեցնել նոր կոնֆլիկտի եզրի:



Չորրորդ. Բոսնիական հակամարտությունը. 1990-ականների Հարավսլավիայի լուծարումը հանգեցրեց բոսնիական պատերազմին: Էթնիկ ու կրոնական լարվածությունը տարածաշրջանում սնուցում էին դաժան կոնֆլիկտը և աշխարն ականատես դարձավ, թե ինչպես պատմական անհամաձայնությունները կարող է հրահրել զինված բախման:

**Հինգերորդ**. Ժամանակակից օրինակներից է սիրիական քաղաքացիական պատերազմը: Սիրիական կոնֆլիկտը սկսվեց 2011 թվականին և իրենից ներկայացնում էր քաղաքական տարբեր բարդ գործոնների միախառնում: Սա ներառում էր բողոքի ակցիաների ճնշումը, տարածաշրջանային պայքար իշխանության համար և միջազգային հետաքրքրություններ: Այս հակամարտությունը ցույց տվեց, թե ինչպես կարող են ներքին քաղաքականությունը և արտաքին ազդեցությունը խթանել և անընդհատ բորբոքված վիճակում պահել հակամարտությունը:

**Վեցերորդ.** Ուկրաինական ճգնաժամը:

Ղրիմի անեկսիան Ռուսաստանի կողմից և Ուկրաինայի արևելքում շարունակվող հակամարտությունը սրեցին հակասությունները այս երկու երկրների միջև տարածքային հավակնություններն ու քաղաքական ձգտումները: Այս իրավիճակը ևս մեկ ապացույց է այն բանի, որ դիվանագիտության և ռազմական գործողությունների միջև կա սերտ առնչություն:



**Յոթերորդ**. Արցախյան հակամարտությունը: Այս հակամարտությունը ձևավորվել է ՀՀ-ի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի շուրջը: Սա օրինակ է, թե ինչպես պատմական տարածքային վեճերը կարող են վեր ածվել լայնամաշտաբ պատերազմի: Այսպիսի հակամարտությունում՝ բացի տարածքային վեճը, դեր են կատարում նաև քաղաքական մոտիվները և էթնիկ լարվածությունը: Իհարկե այս թեման ավելի ծավալուն կարելի է ներկայացնել, քանի որ այս հակամարտության մասնակիցները Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետություններն են, նաև նի շարք հասկանալի պատճառներով սա նաև ցավոտ թեմա է մեր հասարակության համար՝ մանավանդ 2023-ի սեպտեմբերից հետո, երբ Արցախում այլևս հայկական բնակչություն չմնաց: Բայց քանի որ այս թեմային առանձին դաս է նվիրվում կարծում եմ որ այս շրջանակում թռուցիկ քննարկումը բավարար է:

**Ութերորդ**. Կիբերպատերազմներ: ԱՄՆ կառավարության անվտանգության փորձագետ Ռիչարդ Քլարքն իր «Կիբեռպատերազմ» (անգլ.՝ CyberWarfare) գրքում գրել է (լույս է տեսել 2010 թվականին) «Կիբեռպատերազմը մի ազգային պետության գործողություններն են՝ թափանցելու մեկ այլ ազգային պետության համակարգիչների կամ ցանցերի մեջ՝ վնաս հասցնելու կամ ավերելու նպատակով»: Բրիտանական The Economist հանդեսը կիբեռտարածությունը նկարագրում է որպես «պատերազմի հինգերորդ բնագավառ, ցամաքից, ծովից, օդից և տիեզերքից հետո»: Մոտավորապես նույն կերպ հարցի մասնագետներից մեկը՝ Շեյն Հարիսը կիբեռտարածությունում մղվող պատերազմը անվանում է պատերազմի հինգերորդ ռազմաբեմ: Թվային տեխնոլոգիաների դարաշրջանում քաղաքական մոտիվները խթանում են կիբերպատերազմներ, երբ նույնիսկ երկրներն են զբաղվում հաքերությամբ, համակարգչային ու համացնացային լրտեսությամբ և ինֆորմացիոն պատերազմներով: Դրա օրինակներից է Stuxnet վիրուսը, որը թիրախավորել էր Իրանի միջուկային օբյեկտները: Կամ հայկական օգտատերերի հեռախոսների վարակումը հավանաբար ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից:

Իններորդ. Հարավչինական ծովի վեճը: Այս հակամարտությունում խառնված են մի քանի երկրներ, որոնք պաշտպանում են իրենց ինքնիշխանությունը որոշակի քանակով կղզիների ու ծովային տարածքների նկատմամբ: Այս կոնֆլիկտի ուսումնասիրությունը կարող է օգնել սովորողներին հասկանալ, թե ինչպես են հատվում բնական ռեսուրսների, քաղաքական հետաքրքրությունների ու ստրատեգիական կողմնորոշման կողմերը և ստեղծում թնջուկ:

Ինչպես տեսաք, համաշխարհային պատմությունից բերված օրինակները վկայում են, որ իսկապես քաղաքականության և պատերազմների միջև կապը անժխտելի է և խիստ սերտ, ընդ որում բերված օրինակներին կարելի է ավելացնել բազմաթիվ ուրիշները: Այս օրինակները Մոնթե Մելքոնյան ռազմամարզական վարժարանի սաներին կօգնեն հասկանալ քաղաքականության ու պատերազմի փոխհարաբերությունների միջև առկա դժվարությունները, այն լծակները, թե ինչպես են ձևավորվում քաղաքական որոշումները, գաղափարախոսությունը և իշխանության համար պայքարը: Այս թեմաների քննարկումները կօգնեն նաև հասկանալ դրանց մոտիվները, հետևանքները ու նաև ազդեցությունը գլոբալ մասշտաբով:

Այս թեման կարելի կապակցել դպրոցում դասավանդվող մի շարք այլ առարկաների, օրինակ՝ աշխարհագրության, պատմության, ռազմագիտության և գրականության հետ:

Մի քանի հիմնավորումներով ցույց կտանք, թե ինչու է այս թեման ինտեգրված այս առարկաներից յուրաքանչյուրի հետ:

**Աշխարհագրության** հետ մեր քննարկվող թեման կապված է, քանի որ այն քննարկում է նաև ռեսուրսների, իշխանության ու կոնֆլիկտների աշխարհագրական տարածումը: Աշխարհագրական այնպիսի գործոնները, ինչպիսիք են՝ սահմանները, բնական հարստությունները, աշխարհագրական դիրքը հաճախ մեծ դեր են խաղում քաղաքական որոշումների ընդունման գործում, որն էլ իր հերթին հանգեցնում է հակամարտության: Աշխարհաքաղաքական պատկերացումները, ինչպիսիք են՝ ծովային ուղիների կամ կարևոր տարածաշրջանների նկատմամբ վերահսկողությունը, հաճախ է հանդիսանում պատերազմի քաղաքական մոտիվացիա:

**Պատմություն**: Այս առարկան «Պատերազմ ու քաղաքականություն թեմայի ուսումնասիրության բնական արբանյակն է: Պատմական իրադարձությունները, սկսած հին քաղաքակրթություններից մինչև մերօրյա կոֆլիկտները, իրենցից շատ հաճախ ներկայացնում են պատմական փաստեր, իրադարձություններ ու տարեթվեր: Այս թեման ուսումնասիրելիս սաները հասկանում են, թե ինչպես են հակամարտությունները ձևավորում հասարակություններ, մշակույթ ու ազգեր: Պատմական ենթատեքստերի ըմբռնումը կարևոր է ժամանակակից հակամարտությունների արմատները հասկանալու համար:

**Ռազմագիտություն**: Ռազմագիտությունը ուսումնասիրում է պատերազմի վարման ստրատեգիա, տակտիկա և զինված ուժերի կառուցվածք: Այս թեման ընկած է ռազմական գիտության հիմքում, քանի որ խորությամբ է ուսումնասիրում մարտական գործողությունների ու քաղաքական նպատակների եղած կապերը: Սովորողները կարող են ուսումնասիրել և վերլուծել, թե ինչպես են ստրատեգիական մակարդակում ընդունված որոշումների վրա ազդում քաղաքական պատկերացումները, իսկ սա էլ իր հերթին՝ մարտական գործողությունների էֆեկտիվության ու արդյունքների վրա:

**Գրականություն**: Գրականությունը՝ ներառյալ և՝ գեղարվեստական, և՝ գիտահանրամատչելի, ներկայացնում է մարդկության պատերազմական փորձի և դրա ու քաղաքականության կապի բազմաթիվ օրինակներ: Պատերազմը

գրականության մշտական թեմաներից մեկն է, և ուսումնասիրել է մարդկության առանձին հատվածների անհատների վրա դրա թողած հոգեբանական ազդեցությունը: Դրանում քննարկվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ հերոսությունը պատերազմների ժամանակ, բարոյական երկընտրանքները, վախկոտությունը, հայրենասիրությունը և այլն:

Անտիկ շրջանի ամենահանրահայտ ստեղծագործություններից մեկը՝ «Իլիականը», հայկական էպոսը՝ «Սասնա ծռերը», էռ. Հեմինգուեյի «Հրաժեշտ զենքին» և «Ում մահն է գուժում զանգը», Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգություն», Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպերը, Ստ. Զորյանի «Զրհորի մոտ» պատմվածքը և այլ գրական ստեղծագործություններ քննարկում են պատերազմի և՝ բարոյական, և՝ քաղաքական, և՝ հայրենասիրական, և՝ հերոսական դրվագներ ու փորձում հեղինակների ձեռագրով բացատրել այդ ստեղծագործություններում քննարկվող պատերազմների նմանատիպ ու նաև քաղաքական պատճառները: Այս կարգի գրականության ընթերցումը օգնում է հասկանալ հարցի էթիկական և էմոցիոնալ կողմերը:

**Հասարակագիտության** մեջ ներառելով այս թեման՝ մենք զարգացնում ենք միջառարկայական ու ներառարկայական կապերը: Բացի այդ՝ աշխարհագրության, պատմության , ռազմագիտության, գրականության ու հասարակագիտության միջառարկայական կապերի միջոցով մենք նպաստում ենք աշակերտներին վերլուծել, քննադատաբար մտածել, կարեկցել, նրանց տալիս ենք հմտություններ, որոնք կարող են կիրառել տարբեր ակադեմիական ու իրական վիճակներում, բացահայտում ենք այդ առարկանեի միջև եղած կապերը:

## Եզրակացություն

Որպես ամփոփում՝ «Պատերազմ և քաղաքականություն» թեմայի դասավանդումը Մոնթե Մելքոնյան ռազմամարզական վարժարանում ոչ միայն արդիական է, այլև խիստ անհրաժեշտ՝ վարժարանի յուրահատկությունից ելնելով: Մեր վարժարանը կրում է այն ռազմական ու ազգային գործիչի անունը, ով հայտի է եղել իր ստրատեգիական մտածելակերպով, նպատակասլացությամբ, կարողացել է օգուտ քաղել և ի նպաստ հայրենիքի ծառայեցնել իր բազմառարկայական գիտելիքները: Այս թեմայի դասավանդումը կօգնի ապագա սպաներին ավելի լայն տեսանկյունից նայել թեմային, ապագայում ավելի ճիշտ ընտրել նպատակներ ու կայացնել ճիշտ որոշումներ, օպտիմալացնել իրենց ջանքերը դրված նպատակներին հասնելու համար,իսկ որոշումներ կայացնելիս հաշվի առնել հարցերի էթիկական կողմը և միջազգային իրավունքը:

Օգտագործված գրականության ցանկ


1. Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան Հասարակագիտություն 12 էջ 32
2. Ղազինյան Գ. , Վաղարշյան Ա. , Գյուլբուդաղյան Ա. , Հասարակագիտություն 11, էջ 233-261
3. https://drive.google.com/drive/folders/1Yr7E4ojylOKmca0WMG-xggz4a0nB8YCs
4. https://drive.google.com/drive/folders/1uccmAqFXzXKKg7c4uOHCvlEhAz-tfgfJ
5. Clarke, Richard Alan, Cyber War, HarperCollins (2010)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

*ԹԵՄԱ՝* Ի՞ՆՉ Է ԳԵՂԵՑԻԿԸ

*ԿԱՏԱՐՈՂ՝* ԼԻԼԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

*ՂԵԿԱՎԱՐ՝* ՌՈՒԴԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# Բովանդակություն

*Ներածություն..... էջ 3*

*Գաղափար գեղեցիկի մասին..... էջ 4-5*

*Մեզ շրջապատող միջավայրի գեղագիտական ընկալումը..... էջ 6-11*

*Գեղեցիկը մեր ամենօրյա կյանքում..... էջ11-13*

*Գեղեցիկն արվեստում..... էջ 14-18*

# *Ներածություն*

Մարդը գեղեցկության ձգտող էակ է: Նա իր գործունեության բոլոր ոլորտներում (կենցաղում, աշխատանքում, մշակույթում) որոնում է գեղեցիկը, ձգտում ճանաչելու և արարելու այն: Գեղեցիկ է այն ամենը, ինչը գեղագիտական հաճույք է պատճառում: Գեղեցիկն անհատական զգացողություն է և չունի որոշակի սահմանում: Մարդկանց մեջ տարբեր են գեղեցիկի մասին պատկերացումները:

Գեղեցիկի իմացությունը եղել է մարդկային գործունեության հիմնական նպատակներից մեկը: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու ունակությունը անվանում են գեղագիտական ճաշակ: Ինչպես մարդու բազմաթիվ այլ ունակություններ, գեղագիտական ունակությունը ևս մարդուն տրվում է ժառանգաբար: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու բոլոր ընդունակությունները կարիք ունեն շարունակական կատարելագործման, գեղեցիկը ընկալելու ունակությունը նույնպես կարիք ունի զարգացման:

Գեղեցկությունը արդյոք մի հարաբերական գաղափար չէ, որ կախում ունի մեր հոգու բնակազմությունից: Մի բան ինձ համար գեղեցիկ է, մյուսի համար՝ տգեղ, ուրեմն բացարձակ գեղեցկություն կա, թե ոչ: Գեղեցիկ է այն ամենը, ինչ մեզ գեղագիտական ապրում է պատճառում: Սա անհատական զգացողություն է և չի կարելի որոշակիորեն սահմանել:

Արտաքին գրավչության համար բնական գեղեցկությունը բավարար չէ, շատ կարևոր է նաև ներաշխարհի գեղեցկությունը: Գեղեցիկի տեսանկյունից գնահատվում են նաև մարդու արարքները: Օրինակ՝ երբ անօթևան մնացած կենդանուն խնամում ու կերակրում եք, ապա ձեր արարքը գեղեցիկ է, իսկ եթե դուք տեսնում եք, թե ինչպես են բակում վիճաբանող երեխաները վիրավորում, պիտակավորում անօգնական կանգնած երեխային և անտարբերությամբ անցնում եք նրանց կողքով, ապա ձեր արարքը դժվար թե գեղեցիկ համարվի: Գեղեցիկի մասին մարդու պատկերացումները քարացած չեն, դրանք փոփոխվում են ժամանակի ընթացքում, աշխարհընկալման և աշխարհաճանաչողության գործընթացին զուգահեռ: Ներկայումս ժամանակակից տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցների զարգացման շնորհիվ ավելի դյուրին ու սերտ են դարձել մարդկանց շփումները: Այդ շփումների արդյունքում մարդիկ հաղորդակից են դառնում գեղեցիկի բազմամշակութային ընկալումներին և այդ ընկալումների տարբերությունների համադրման արդյունքում ձևավորում են նոր պատկերացումներ:

## *Գաղափար գեղեցիկի մասին*

Շրջապատող աշխարհի երևույթները ընկալելիս մարդիկ ունենում են զգացմունքների մի հատուկ տեսակ, որն անվանում են գեղագիտական զգացմունք: Մարդը գեղեցկության ձգտող էակ է: Նա իր գործունեության բոլոր ոլորտներում (կենցաղում, աշխատանքում, մշակույթում) որոնում է գեղեցիկը, ձգտում ճանաչելու և արարելու այն: Գեղեցիկ է այն ամենը, ինչը գեղագիտական հաճույք է պատճառում: Գեղեցիկն անհատական զգացողություն է և չունի որոշակի սահմանում: Մարդկանց մեջ տարբեր են գեղեցիկի մասին պատկերացումները: Գեղեցիկ է այն ամենը, ինչին սիրով ենք նայում: Հին Հունաստանում ողջ տիեզերքն է համարվել գեղեցիկ. հունարեն «կոսմոսե բառն ունի «ներդաշնակ», «կարգավորված» և «գեղեցիկ» իմաստները: Քանի որ մարդը դիտարկվել է որպես փոքր տիեզերք, հետևաբար մարդը նույնպես համարվել է գեղեցիկ: Այդ տեսակետն ընդունելի է եղել նաև հույն իմաստասեր և գիտնական Պյութագորասի համար: Նրա կարծիքով տիեզերքում հնչում է հրաշալի երաժշտություն, որն այն ընկալելու ունակ մարդուն նույնպես ի վիճակի է գեղեցկացնելու: Սոկրատեսը գեղեցիկ է համարել օգտակարն ու նպատակահարմարը՝ ասելով, որ այն, ինչ օգուտ չունի, չի կարող համարվել գեղեցիկ: Ըստ Պլատոնի՝ գեղեցիկն ունի աստիճաններ: Առաջին աստիճանը ֆիզիկական՝ բնական կամ մարմնական գեղեցկությունն է, որն անցողիկ է: Երկրորդը հոգու գեղեցկությունն է, որը կարող է ավելի երկար մնալ, քան ֆիզիկական գեղեցկությունը, բայց կարող է նաև անցողիկ լինել: Երրորդ աստիճանը գիտության, արվեստի շնորհիվ ստեղծված գեղեցկություններն են: Սակայն այս աստիճանն էլ գեղեցիկի լիարժեք պատկերացում չէ, քանի որ տարբեր գիտությունների ու արվեստների ներկայացուցիչների համար գեղեցիկը կարող է տարբեր լինել: Ըստ նրա՝ կատարյալ գեղեցկությունը կարող է լինել միայն չորրորդ աստիճանում՝ գիտելիքի ու բարիքի ոլորտում: Իրական գեղեցիկը գոյություն ունի միայն գաղափարների աշխարհում՝ ժամանակից ու տարածությունից դուրս: Արիստոտելը գեղեցկության ոլորտը համարել է արվեստը. նրա կարծիքով գեղեցիկ են այն երևույթները, որոնց բնորոշ են չափավորությունն ու կարգավորվածությունը: Միջնադարում գերիշխել են գեղեցկության աստվածային ծագման մասին պատկերացումները: Մինչդեռ Վերածննդի դարաշրջանի արվեստագետները՝ Լեոնարդո դա Վինչին, Շեքսպիրը, գեղեցկության աղբյուրը համարում էին բնությունը: Նրանք արվեստը դիտում էին որպես հայելի, որն արվեստագետը պահում է բնության դիմաց: Նոր ժամանակներում առավել տարածվեց այն կարծիքը, որ գեղեցիկը իրականում գոյություն չունի. բնության երևույթները ինքնին ո՞չ գեղեցիկ են,

ո՞չ տգեղ: Գեղեցիկը գոյություն ունի այն ընկալող մարդու հոգում և միևնույն երևույթը տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում: Յուրաքանչյուր դարաշրջան մշակել է ֆիզիկական գեղեցկության իր չափանիշը՝ իդեալը: Կնոջ գեղեցկության թեման առավել քննարկվածն է եղել բոլոր ժամանակներում, սակայն տարբեր են եղել գեղեցկության չափանիշերը: Հին հույների համար գեղեցկության չափանիշը Աֆրոդիտեն էր՝ գեղեցիկ կազմվածքով, ուղիղ քթով և մեծ աչքերով: Վերածննդի դարաշրջանում գեղեցիկ են համարվել լայն ճակատն ու սափրած ունքերը, ինչպես նաև աներևակայելի սանրվածքները, որոնք պահպանելու համար անգամ շատ հարուստ կանայք տարիներով չէին լվանում իրենց գլուխները: Հին Եգիպտոսում գեղեցիկ էին համարվում ուղիղ քիթ, հատուկ նյութերով կարմրացրած այտեր, հարթ սև մազեր, բարձր ճակատ ու երկար պարանոց ունեցող կանայք: Թաիլանդում պադուանգ ազգի ներկայացուցիչների համար նույնպես կանացի գեղեցկության չափանիշ է համարվել երկար վիզը և այդ նպատակով, հինգ տարեկանից սկսած, աղջիկների վզին հատուկ օղակներ են հագցրել:

Արտաքին գրավչության համար բնական գեղեցկությունը բավարար չէ, շատ կարևոր է նաև ներաշխարհի գեղեցկությունը: Գեղեցիկի տեսանկյունից գնահատվում են նաև մարդու արարքները: Օրինակ՝ երբ անօթևան մնացած կենդանուն խնամում ու կերակրում եք, ապա ձեր արարքը գեղեցիկ է, իսկ եթե դուք տեսնում եք, թե ինչպես են բակում վիճաբանող երեխաները վիրավորում, պիտակավորում անօգնական կանգնած երեխային և անտարբերությամբ անցնում եք նրանց կողքով, ապա ձեր արարքը դժվար թե գեղեցիկ համարվի: Գեղեցիկի մասին մարդու պատկերացումները քարացած չեն, դրանք փոփոխվում են ժամանակի ընթացքում, աշխարհընկալման և աշխարհաճանաչողության գործընթացին զուգահեռ: Ներկայումս ժամանակակից տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցների զարգացման շնորհիվ ավելի դյուրին ու սերտ են դարձել մարդկանց շփումները: Այդ շփումների արդյունքում մարդիկ հաղորդակից են դառնում գեղեցիկի բազմամշակութային ընկալումներին և այդ ընկալումների տարբերությունների համադրման արդյունքում ձևավորում են նոր պատկերացումներ:

## *ՄԵԶ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ*

Բնությունը միշտ եղել է գեղեցիկի իդեալ մարդու համար: Բնության մեջ առկա է չափ, կարգավորվածություն ու ներդաշնակություն: Նկատե՞լ ես, թե որքան համաչափ են դասավորված ծառի ճյուղերը կամ ծաղկի թերթիկները: Ժամանակի ընթացքում մարդը սովորեց նմանակել բնությանը: Օգտագործելով նրանում առկա օրինաչափությունները՝ մարդը կառուցեց կացարաններ, ամրոցներ, տաճարներ, ավելի ուշ՝ նաև պալատներ, պատրաստեց իրեր՝ զարդեր ու զարդարանքներ: Պատահական չէ, որ մարդուն շրջապատող, նրա կողմից ստեղծված միջավայրը անվանում են նաև գեղագիտական միջավայր: Այսօր արդեն մարդն իր մտքի թռիչքով գերազանցում է բնությանը, կարողանում է ստեղծել այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք բնության մեջ առկա չեն: Ձևավորելով իրեն շրջապատող միջավայրը՝ մարդը կերտում է ինքն իրեն, իր վերաբերմունքը այդ ամենի նկատմամբ: Մարդու բարոյական պարտականությունն է հոգատար վերաբերմունք ունենալ իր միջավայրի՝ հայրենիքի, համայնքի, դպրոցի, տան նկատմամբ: Մաքուր, խնամված և կանաչապատ տարածքների առկայությունը համայնքում և դպրոցամերձ տարածքում, կոկիկ ու հարդարված առանձնասենյակն ու դպրոցական պայուսակը լավագույն փաստում են գեղագիտորեն դաստիարակված հասարակության և նրա անդամների մասին:

Գեղեցիկի իմացությունը եղել է մարդկային գործունեության հիմնական նպատակներից մեկը: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու ունակությունը անվանում են գեղագիտական ճաշակ: Ինչպես մարդու բազմաթիվ այլ ունակություններ, գեղագիտական ունակությունը ևս մարդուն տրվում է ժառանգաբար: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու բոլոր ընդունակությունները կարիք ունեն շարունակական կատարելագործման, գեղեցիկը ընկալելու ունակությունը նույնպես կարիք ունի զարգացման: Արվեստն օգնում է ձևավորելու գեղագիտական ճաշակ, պատկերավոր բացահայտում է գեղեցիկի աշխարհը, ազդեցություն է ունենում անհատի համոզմունքների և վարքագծի վրա: Արվեստը մարդու հոգևոր գործունեության ամենավաղ ստեղծված ձևերից է: Արդեն հնադարում նախնադարյան մարդը կերտում էր արվեստ. բնական ներկանյութերով ժայռերի պատերին պատկերում էր որսի տեսարաներ, իրական ու հնարովի կենդանիներ, մարդկանց, կերտում էր փոքր ու մեծ կոթողներ, հորինում էր երգեր ու պարեր, որոնցով ուղեկցվում էին աշխատանքային գործունեությունն ու պաշտամունքային արարողությունները, ասքեր, որոնք արտացոլում էին նրանց

նիստուկացը, աշխարհընկալումը: Արվեստը, հատկապես երաժշտությունը վերացնում է մարդկանց միջև տարբերությունները, սերմանում բարություն, հանդուրժողականություն, հավասարություն, արդարություն և սեր: Արամ Խաչատրյանն իր հանրահայտ «Գայանե» բալետի երաժշտությամբ ունկնդրի մեջ սերմանում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, ժողովուրդների բարեկամությունը, սերը, հարգանքը և ամենակարևորը՝ խաղաղ, համատեղ ապրելու իրավունքը: Իրականության գեղագիտական ընկալումը իրականացվում է արվեստի տարբեր տեսակներով՝ կիրառական դեկորատիվ արվեստ, կերպարվեստ, քանդակագործություն, ճարտարապետություն, թատրոն, պար և երաժշտություն: Երբ գիտատեխնիկական նվաճումները սկսեցին ծառայել նաև արվեստին, ծնվեցին լուսանկարչությունը, կինոն և հեռուստատեսությունը: Արվեստի էության ու օրենքների մասին գիտությունը կոչվում է գեղագիտություն: Բնության գեղեցկությամբ ներշնչվել են բազմաթիվ արվեստագետներ՝ գրողներ ու նկարիչներ: Հայ գրող Ակսել Բակունցի համար ստեղծագործելու լավագույն շարժառիթ է դարձել Սյունյաց աշխարհի գեղեցկությունն ու չնաշխարհիկ բնությունը.

«Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին: Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները: Ոչ մի երկաթյա դուռ և ոչ մի պահակ՝ աշտարակի գլխին:Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հղկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները: Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարե արծիվը՝ կտուցը կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները՝ որպես պողպատե զրահ: Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը՝ կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն: Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին:

Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»:

Գեղեցիկը ոչ թե վերացական գաղափարի կամ աստվածային կամքի արտահայտությունն է, ինչպես կարծում էին իդեալիստները,այլ կենդանի իրականության:Կյանքից դուրս գեղեցիկ չկա: Այդ տեսակետն առանձին հետևողականությամբ հիմնավորել է Չերնիշևսկին,որը գրել է. «Գեղեցիկը կյանքն է, գեղեցիկ է այն էակը, հանձին որի տեսնում ենք այնպիսի կյանք, որպիսին նա պետք է լինի ըստ մեր հասկացողության: Զարգացնելով այդ միտքը, Չերնիշևսկին ցույց է տալիս, որ գեղեցիկը տվյալ երևույթի մեջ կյանքի լիարժեք դրսևորումն է, առողջ և կենդանի զարգացումը»: Այդպես էր մոտենում հարցին նաև Մ.Նալբանդյանը. «Գեղեցկության մոտավոր սահմանը՝ բնության մոտ լինելը կամ բնությանը նմանվելն է»:

Հին Հունաստանում ողջ տիեզերքն համարվել է գեղեցիկ. հունարեն «կոսմոս» բառն ունի «ներդաշնակ», «կարգավորված» և «գեղեցիկ» իմաստները: Քանի որ տիեզերքը համարվել է գեղեցիկ, իսկ մարդը դիտվել է որպես փոքր տիեզերք՝ միկրոկոսմ, հետևաբար մարդը նույնպես համարվել գեղեցիկ:Պյութագորականները գեղեցիկեն համարել տիեզերականը՝ գտնելով, որ տիեզերքում հնչում է հրաշալի երաժշտություն, որն այն ընկնելու ունակ մարդուն նույնպես ի վիճակի է գեղեցկացնել:

Հին Հույն մեծ իմաստասեր Սոկրատեսը գեղեցիկ է դիտել օգտակարն ու նպատակահարմարը՝ նկատելով, որ իրենում օգուտ չպարունակողը չի կարող գեղեցիկ համարվել: Այս տեսակետը վիճարկվել է բազմիցս, քանի որ օգուտի հասկացությունը նույնպես կարող է տարբեր կերպ ընկալվել:



Պլատոնը գեղեցիկը տարբերակում է ըստ աստիճանների: Ըստ նրա գեղեցիկի առաջին աստիճանը ֆիզիկական՝ բնական կամ մարմնական գեղեցկությունն է, որը, ցավոք, խիստ անցողիկ է, քանի որ ժամանակն անզիջում է նրա նկատմամբ:

Որպես գեղեցիկի հաջորդ աստիճան՝ Պլատոնը նշում է հոգու գեղեցկությունը, որն ավելի երկար կարող է պահպանվել, քան մարմնականը, սակայն նույնպես անցողիկ է, քանի որ մարդը փոփոխական է, նրա հոգին կարող է լինել կամակոր, հոգնել, չարանալ, ծերանալ՝ խեղաթյուրելով գեղեցիկի էությունը:

Գեղեցիկի երրորդ աստիճանին այն երևույթներն են, որ ստեղծվում են գիտությունների և արվեստների շնորհիվ: Ըստ Պլատոնի, այս աստիճանին էլ չի տրվում գեղեցիկի լիարժեք պատկերացումը, քանի որ տարբեր գիտությունների ու արվեստների ներկայացուցիչների համար գեղեցիկը կարող է տարբեր լինել:

Հետևապես, կատարյալ գեղեցիկը հնարավոր է միայն չորրորդ մակարդակում՝ իմաստության ու բարիքի գերագույն ոլորտում: Իսկական, անփոփոխ, հարատև գեղեցիկը գոյություն ունի միայն գաղափարների աշխարհում՝ տարածությունից ու ժամանակից դուրս: Այդ անպատճառ գեղեցկությունը հանդես է գալիս որպես սկզբունք և օրինակ, որին պետք է ձգտեն մարդիկ թե ամենօրյա կյանքում, թե ստեղծագործելիս: Պլատոնը գտնում է, որ այդ իդեալական, կատարյալ գեղեցիկը միաժամանակ նաև ճշմարիտ է ու բարի:

Արիստոտելը որպես գեղեցիկի բնագավառ դիտարկում է արվեստը՝ ընդունելով, որ գեղեցիկ է չափավորն ու կարգավորվածը: Ըստ նրա՝ գեղեցիկն ունի մաքրագործող

հատկություն, քանի որ գեղագիտական հաճույքը մարդուն թեթևացնում ու ազատում է կուտակված անկատարություններից: Արիստոտելը գտնում է, որ մարդն ազնիվ ու վեհ սարքեր է գործում հանուն գեղեցիկի:

Միջնադարյան մտածողները գեղեցիկ են համարել աստվածայինը, իսկ բնությունն ու մարդուն՝ ստվերային, անկատար: Նրանք մարմինն ու հոգին հակադրել են միմյանց՝ գեղեցիկ համարելով հոգևոր իրողությունները: Գեղագիտական մտքի պատմության մեջ եղել է մեկ այլ մոտեցում ևս, ըստ որի՝ գեղեցիկն իրականում չկա, այն միայն մարդու ներաշխարհին է բնորոշ: Բնության երևույթներն ինքնին ոչ գեղեցիկ են, ոչ տգեղ: Մարդն է, որ իր ունեցած գեղեցկության չափանիշներով դատողություններ է անում բնության մասին: Սա սուբյեկտիվիստական մոտեցումն է, ըստ որի գեղեցիկը սուբյեկտիվ է, այսինքն՝ մարդու կամքից կախված: Այս տեսակետի հետևորդներ եղել են և՝ անտիկ աշխարհում, և՝ նոր դարաշրջանում, և՝ ժամանակակից գեղագիտության մեջ: Այս տեսակետի ամենահայտնի անգլիացի իմաստասերներ Հյումն ու Բերկլին:

Անգլիացի գրող Օսկար Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» ստեղծագործությունից մի հատված է: Գրքի հերոսը հրապուրված էր իր նկարի գեղեցկությամբ: Նա արտաքին գեղեցկությունը համարում էր ամենակարևոր ու թանկարժեք բանը, որն ուներ կյանքում, և սարսափում էր այն մտքից, որ այն հավերժական չէ. «Ես նախանձում եմ ամեն ինչի, որի գեղեցկությունն անմահ է: Նախանձում եմ նույնիսկ իմ այս դիմանկարին: Ինչո՞ւ նա պետք է պահպանի այն, ինչ ինձ վիճակված է կորցնելու: Յուրաքանչյուր անցնող ակնթարթ խլում է ինձնից ինչ–որ բան և տալիս նրան: Օ՛, եթե լիներ ճիշտ հակառակը, եթե փոխվեր նկարը, իսկ ես մնայի ճիշտ նույնը, ինչպես հիմա: Ինչո՞ւ նկարեցիք, կգա մի օր, երբ այդ նկարը կծաղրի ինձ, կծաղրի դաժանորեն»:

Ըստ Դեյվիդ Հյումի՝ գեղեցիկն այնպիսի հատկություն չէ, որ գոյություն ունի իրերի մեջ ինքնին: Գեղեցիկը գոյություն ունի այն ընկալող մարդու հոգում, և բնության նույն տեսարանը տարբեր մարդիկ կարող են ընկալել տարբեր կերպ: Մեկին այն կթվա գեղեցիկ, մյուսին՝ բնավ ոչ: Կարծես թե նման ձևով է մտածում և XX դարի հայ մեծ նկարիչ ու քանդակագործ Երվանդ Քոչարը՝ գեղեցիկը բացատրելով հետևյալ կերպ. «Ինչ է գեղեցկությունը: Գեղեցկությունը մի ուժ է, ինչպես մագնիսականությունը, էլեկտրականությունը, ջերմությունը. ասում են շատերը: Գեղարվեստն այդ ամենն աշխատում է հավաքել, որսալ, արտահայտել: Բայց

այդպե՞ս է արդյոք, թ՞ե գեղեցկությունը մեր զգայությունն է, որ բխում է մեր վերաբերմունքից դեպի աշխարհը: Գեղեցկությունը արդյոք մի հարաբերական գաղափար չէ, որ կախում ունի մեր հոգու բնակազմությունից: Մի բան ինձ համար գեղեցիկ է, մյուսի համար՝ տգեղ, ուրեմն բացարձակ գեղեցկություն կա, թե ոչ: Գեղեցիկ է այն ամենը, ինչ մեզ գեղագիտական ապրում է պատճառում: Սա անհատական զգացողություն է և չի կարելի որոշակիորեն սահմանել:

### *Գեղեցիկը մեր ամենօրյա կյանքում*

Վաղ անցյալում մարդիկ հիմնականում տեղից տեղ են գնացել ոտքով կամ աստիճանաբար ընտելացվող որոշ կենդանիների (ձիեր, ավանակներ, այծեր և այլն) օգնությամբ: Նրանց տեղաշարժման արագությունը մեծ չի եղել, ու մարդկանց մեծամասնությունն իր ողջ կյանքի ընթացքում այդպես էլ դուրս չի եկել այն տարածաշրջանից, որտեղ ծնվել ու հասունացել է: Մարդիկ իրենց ողջ կյանքն ապրել են մեկ մշակույթի շրջանակներում, ձևավորելով բարու, գեղեցիկի, ճշմարիտի իրենց պատկերացումները: Քանի որ նրանք, ըստ էության, որևէ այլ պատկերացման չեն հանդիպել, այդ դարաշրջանում մարդիկ մտածել են, որ իրենց ունեցած գեղեցիկի, բարու, ճշմարիտի չափանիշները բացարձակ են: Եվ եթե ինչ-որ մի երևույթ գեղեցիկ է համարվել իրենց կողմից, ուրեմն դա պետք է լիներ գեղեցիկն ընդհանրապես՝ անկախ ամեն ինչից: Հայտնի է, որ ճապոնացիները պարսավել են իրենց նկարիչներից մեկին, որն առաջին անգամ նկարել է եվրոպացու դիմանկար, ասելով՝ միթե կարելի էր նկարել այդպիսի այլանդակ մեծ աչքեր: Հասկանալի է, որ ճապոնացու համար աչքի գեղեցկության ընկալումը լրիվ այլ էր, ու եվրոպացու, նաև մեր տարվածությունը խոշոր, արտահայտիչ աչքերով նրա համար անհասկանալի էր: Գիտության, տեխնիկայի ու մասնավորապես տրանսպորտային միջոցների զարգացումը մարդուն հնարավորություն է տվել հաշված ժամերի ընթացքում հասնել երկրագնդի մի ծայրից մյուսը: Տարբեր մշակույթներ, լեզուներ, ավան- դույթներ ու արժեքներ ունեցող մարդիկ սկսել են շփվել միմյանց հետ և երբ գործնականում փորձել են բացահայտել, թե որն է, օրինակ, ամենագեղեցիկ շինությունը, գրվածքը, մարդը, բնության երևույթը, հասկացել են, որ տարբեր վայրերի ու ժամանակների մարդկանց ունեցած գեղեցիկի պատկերացումները ոչ միայն տարբեր են, այլև կարող են նույնիսկ հակասել միմյանց: Օրինակ դասական եվրոպացին գեղեցիկ կենդանիներ էր համարում ձիուն, կարապին: Իսկ կովը կամ օձը եվրոպացու համար գեղեցիկ չեն համարվել, այնինչ Հնդկաստանում կովը, իսկ Թաիլանդում օձը համարվել են գեղեցկագույն կենդանիներ: Այլ օրինակ. ավանդական հայկական

մտածելակերպի համաձայն՝ կնոջ գեղեցկության կարևոր բաղադրիչն են համարվել երկար մազերն ու կամար հոնքերը:

Վերածննդի դարաշրջանի կանայք գեղեցիկ են համարել լայն ճակատն ու սափրել են հոնքերը, իսկ նեղ ճակատ ունեցողները՝ նաև գագաթի մազերը լայն ճակատ ունենալու համար: Եվ պատահական չէ, որ Լեոնարդո դա Վինչիի պատկերած Մոնա Լիզային (որի հոնքերը սափրած են) ժամանակակիցները համարում էին գեղեցկուհի: Տարբեր մշակույթներում գեղեցիկի ընկալման հարաբերականության բազմազան օրինակներ կան: Բերենք ևս մի քանիսը: Այսպես՝ միջնադարյան Չինաստանում կանացի ոտքի գեղեցկությունը նրա փոքրության մեջ էր: Չինացիներն աղջիկ երեխաների ոտքերը կարում էին եզան դեռևս չչորացած մորթով: Մորթին չորանում էր՝ ընդունելով երեխայի ոտքի ձևը և աղջկա մեծանալուն զուգընթաց սեղմում էր նրա ոտքերը՝ չթողնելով, որ դրանք մեծանան: Մորթին հանում էին արդեն հասունացած աղջկա ոտքերից, որոնք արդյունքում մնում էին փոքր ու նրբագեղ՝ չինական պատկերացումների համաձայն:

Հին Պարսկաստանում տղամարդիկ այտերը ծածկում էին կարմրաներկով ու կրում էին երկար մազեր: Հին եգիպտացիները սափրած գլխի վրա մազերի մի գիսակ էին թողնում ձախ ականջից փոքր-ինչ վեր: Բիրմայում աղջիկները ձգտում էին իրենց պարանոցը երկարացնել մետաղյա օղերի միջոցով, և, վերջապես, Մայա մշակույթի աղջիկներն առջևի ատամների մեջ անցքեր էին անում, որտեղ դրվում էին թանկարժեք քարեր: Ներկայումս մարդկությունն ապրում է գլոբալացման դարաշրջանում, այսինքն՝ ավելի ու ավելի սերտ են դառնում տարբեր երկրների ու մշակույթների մարդկանց շփումները: Դրանք իրենց հետ բերում են գեղեցիկի ընկալման նորանոր ելևէջներ, հնարավորություն են տալիս, օրինակ՝ հային հիանալ աֆրիկյան, ամերիկյան երաժշտական ռիթմերով, իսկ ամերիկացուն՝ հայկական դուդուկի թովիչ հնչողությամբ: Հնարավորություն է ստեղծվում նաև համադրել տարբեր գեղեցիկ երևույթներ ու ստանալ գեղեցիկ նոր իրողություններ: Չպետք է մոռանալ, սակայն, որ այս դրական միտումների կողքին գլոբալացումը բերում է նաև վտանգներ: Փոքրաթիվ ազգերի մշակույթները վտանգվում են:

Մարդն ապրում է կարծես երկակի իրականության մեջ: Մի կողմից՝ հոգևոր մշակույթն է, որը ստեղծվում է նվիրյալների ոգեշնչված աշխատանքով, իսկ մյուս կողմից՝ մեր բոլորի ապրած սովորական կյանքն է: Անկախ այն բանից, թե ինչ մասնագիտություն, հասարակության մեջ ինչ դեր, կյանքի ինչ կոչում ունի մարդը, նա գոյատևում է նաև մի ոլորտում, որը կոչվում է կենցաղ: Նախկինում կենցաղի

նշանակությունը մարդու կյանքում թերագնահատվում էր: Տիրապետող մտածելակերպի համաձայն՝ հոգևոր որոնումներ ունեցող մարդը պետք է անտե սեր կենցաղային խնդիրներն իր նպատակներին հասնելու համար: Առօրեականությունը դիտվում էր որպես զուտ կենսաապահովման մշակույթ, որը չէր օժտվում հոգևոր մշակույթին բնորոշ գծերով, օրինակ՝ գեղագիտական նշանակությամբ: Այսօր, սակայն, մարդաբանները բացահայտել են, որ մարդու մշակութայնացման ընթացքում առօրեականության դերը կարող է լինել նշանակալից: Շատ կարևոր է, թե ինչպիսի միջավայրում, ինչ մարդկային հարաբերությունների մեջ է մեծանում մշակույթի հետ առաջին ծանոթությունը հաստատող մանուկը:

Գեղեցկության հանդեպ մարդու ձգտումն արտացոլվել է նրա ունեցած իրերում. հնագետները պեղել են բազմաթիվ գեղեցիկ զարդեր ու կենցաղի իրեր երկրագնդի տարբեր բնակավայրերում: Մարդը հնուց ի վեր ձգտել է գեղեցկացնել նաև իր կացարանը: Հնագույն քարանձավների պատերին օժտված մարդիկ նկարներ են արել՝ գեղեցկացնելով իրենց բնակության վայրը: Հետագայում մարդը սկսել է կառուցել տարատեսակ շինություններ՝ գետնափոր նկուղներից մինչև ժամանակակից երկնաքերները ու միշտ իր առջև, հարմարավետությունից բացի, դրել է նաև գեղեցկության պահանջը: Բոլոր դարաշրջաններում մարդը փորձել է գեղեցկացնել իր կացարանը, ինչպես որ կարողացել է: Այդ ձգտման արդյունքում առաջացել են պերճաշուք պալատներ, հոյակերտ կառույցներ, որոնցից շատերը դարեր շարունակ հիացմունք են պատճառում մարդկանց: Ժամանակակից մարդը նույնպես ձգտում է գեղեցկացնել իր կացարանը՝ դրա համար դիմելով գիտատեխնիկական նորագույն նվաճումներին:

Մարդը ներսույթը գեղեցկացնելու ժամանակ (ինչն ինքնին կարևոր է) մտածում է անձնական շահի (թեկուզ գեղագիտական) մասին, իսկ գեղեցկացնելով դրսույթը՝մարդը մտածում է համահասարակական շահի մասին, ձգտում է բոլորի համար հաճելի դարձնել իրականության այն հատվածը, որտեղ ունի գործելու հնարավորություն: Հետաքրքիր է, բայց մեզանից յուրաքանչյուրի տուն որքան էլ շատ մարդ այցելի, միևնույն է, դա շատ ավելի սահմանափակ թիվ է, քան այն մարդկանց թիվը, ովքեր ուղղակի կարող են անցնել մեր տան մոտով: Մտածելով նրանց մասին, ի վերջո, մենք կմտածենք բոլորիս մասին, որպեսզի մեր հարազատ համայնքներում զբոսնելիս ստանանք դրական լիցքեր ու բավարարվածություն: Իհարկե, մարդիկ միշտ չեն այդ կերպ մտածել: Պատմականորեն քաղաքները սկսել են կառուցվել տարերային կերպով: Մարդիկ միմյանց կից կառույցներ են շարել ու

նույնիսկ« լաբիրինթոսներ  են ստացվել, ինչպես Կրետե կղզու մայրաքաղաք Կնոսոսում: Սակայն ժամանակի ընթացքում, և գործնական, և գեղագիտական նկատառումներից ելնելով, մարդիկ հանգել են քաղաքների կառուցումը վերահսկելու քաղաքաշինության խնդրին: Այսօր ողջ աշխարհում կան բազմաթիվ հաստատություններ, որտեղ նախագծվում են ոչ միայն առանձին շենքեր կամ նույնիսկ շենքերի համալիրներ, այլև ամբողջ թաղամասեր ու քաղաքներ: Հարմարավետության, հուսալիության ու գործառութային այլ նպատակների կողքին նման հաստատությունները մեծ տեղ են տալիս գեղագիտական բաղադրիչին: Երբ ժամանակակից քաղաքներում ցանկանում են կառուցել նոր մեծ շինություն, նախ և առաջ քննարկում են այն հարցը, թե որքանով է տվյալ շինությունը ներդաշնակում արդեն ստեղծված միջավայրին, որքանով է գեղեցկացնում այն:

## *Գեղեցիկն արվեստում*

Գեղեցկությունը բնության մեծագույն գաղտնիքներից մեկն է, որի ազդեցությունը մենք տեսնում  և զգում ենք, իսկ նրա էության մասին հստակ պատկերացում  տալ շատերն են փորձել, բայց անհաջող:  Յոհան Վինկելման

Գեղեցկություն  բառը որտեղ և ինչպես էլ գործածվի, նշանակում է հատկանիշներ, որոնց շնորհիվ մենք սիրում ենք իրը, հիանում դրանով կամ ձգտում դրան: Ռոբին Ձորջ

Ամեն արժեք գեղեցկություն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է…

Երվանդ Քոչար

Ամեն արվեստ արտահայտում է իր ժամանակի իդեալը, ուրեմն այն հասկանալու, ճաշակելու համար պետք է հասկանալ այդ ժամանակի իդեալը և այդ ժամանակի միջոցները, արտահայտչական տեխնիկան: Միջոցները ստեղծում են իդեալ, և իդեալը ստեղծում է միջոցներ: Օրինակներ՝ Եգիպտոս – քարը և հավիտենականությունը. Հունաստան – մարմարը և երկնային գեղեցկությունը: Երվանդ Քոչար

Արվեստը մարդու հոգևոր որոնումների ամենավաղ առաջացած ձևերից է: Դեռևս նախնադարյան հասարակության մարդը, երբ կարողացել է հոգալ իր կենսաապահովման խնդիրը և ունենալ ազատ ժամանակ, փորձել է արտահայտել իր հոգում աստիճանաբար ավելի ու ավելի նրբացող-բյուրեղացող գեղեցկությունները: Նա զգացել է բնության անսահման կատարելությունը և փորձել իրեն հասանելի ձևերով պահպանել այն. կերտել է մայրությունը խորհրդանշող արձանիկներ, քարանձավների պատերին նկարել է կենդանիների, մարդկանց, լուսատուների պատկերներ, աշխատելիս քթի տակ երգի նման ինչ-որ բան է եղանակել ու պարել է... Պարը, որոշ մարդաբանների կարծիքով, եղել է ամենասկզբում: Պարում արտահայտվել են մարդու կյանքի բնական ռիթմերը: Պարն անցյալում, ինչպես և հիմա, նպաստել է, որ ուղղաձիգ քայլող մարդու մարմինը կատարյալ և ուժեղ: Սակայն պարն ունեցել է նաև պաշտամունքային նշանակություն. պարի միջոցով հին մարդիկ նմանակել են կենդանիներին ու թռչուններին, որոնց պաշտել են ու փորձել հաղորդակցվել նրանց հետ շարժումների լեզվով: Արվեստի ծագման վերաբերյալ տեսակետներից մեկի համաձայն՝ արվեստը ծնվել է որպես պաշտամունքն իրականացնելու միջոց, ձև: Իր պաշտամունքի առարկաներին մարդը ձոնել է օրհներգներ, ստեղծել է կուռք քանդակ-հուշարձաններ և այլն: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ արվեստն առաջացել է մարդու կենցաղային պահանջմունքները բավարարելու համար կիրառական նշանակություն ունեցող իրերի ստեղծմամբ: Ասենք, եթե նախամարդն ուտում էր ավելի շատ կենդանու նման, ապա աստիճանաբար զարգացող բանական մարդը ստեղծում էր ամանեղեն, որի մեջ ոչ միայն պատրաստում ու պահում էր կերակուր, այլև ուտում էր: Ըստ այս տեսակետի՝ մարդը, կենցաղային իրերի միջոցով իր պահանջմունքները բավարարելով, աստիճանաբար սկսում է այդ կիրառական իրերը զարդարել, գեղեցկացնել՝ դրանով իսկ ստեղծելով արվեստի նախնական ձևերը: Եվ կա արվեստի առաջացման մասին զուտ գեղագիտական մոտեցում, ըստ որի մարդուն՝ որպես տեսակային հատկանիշ, տրված է գեղեցիկի զգացումը: Այն հասարակության զարգացմանը զուգընթաց աստիճանաբար ավելի ու ավելի է նյութականացել, քանի որ մարդը սովորել է ոչ միայն հիանալ բնության պարգևած գեղեցկությամբ, այլև ստեղծել գեղեցիկ պարագաներ, որոնք անցողիկ չեն բնության երևույթների նման և միշտ կարող են գեղագիտական հաճույք պատճառել: Ճշմարտությունը երևի այս երեք մոտեցումների համադրության մեջ պետք է որոնել, քանի որ մարդն իր զարգացման վաղնջական ժամանակներից ի վեր ստեղծել է հավատք, կրոն, ուրեմն նաև կրոնական արվեստ, ունեցել է կենցաղ, հետևապես՝ դեկորատիվ-կիրառական արվեստ, և մտորել ու

զգացել է գոյավորի ներդաշնակությունը՝ ստեղծելով որևէ այլ օգուտ չպարունակող, զուտ գեղագիտական հաճույք պատճառող իրականություն: Մարդն արվեստում հանդես է գալիս որպես արարիչ Արարչից հետո, քանի որ ձեռք է բերում մեծ ազատություն՝ ստեղծելու մի նոր, թեկուզև պայմանական իրականություն, որտեղ իրականացած է տեսնում իր ձգտումները, հույզերն ու նախապատվությունները: Պատահական չէ, որ դարեր շարունակ մարդկանց ամենահասանելի արվեստի ձևերից է եղել հեքիաթը: Հեքիաթում մարդը խորհրդանշանների միջոցով արտահեղել է իր վիշտն ու ցավը, իրականացրել է բարու, գեղեցիկի հանդեպ իր ունեցած մղումն ու ավելի է մարդկայնացել:

Գեղանկարչությունը հարթության վրա իրական աշխարհի պատկերումն է, որին հասնելու համար նկարիչը լուծում է բազմաթիվ խնդիրներ. հեռանկար, լույս, ստվեր, գույների համադրություն և այլն: Հնագույն նկարներն արվել են՝ ելնելով գործնական նպատակներից: Նախնադարի նկարիչները պատկերել են որսի կենդանուն՝ հույս ունենալով «հմայել» նրան, որպեսզի որսի ժամանակ կենդանին բռնվի: Դիմանկարներ արել են, որպեսզի փոխանցեն հեռվում գտնվող մարդկանց, օրինակ՝ հարսնացու-փեսացուներին: Սակայն գեղանկարչության հիմնական նպատակը գե- ղագիտական հաճույք և մտորում առաջացնելն է: Դա է պատճառը, որ լուսանկարչության հայտնագործումից հետո գեղանկարչությունը չդադարեց գոյություն ունենալ: Գեղանկարչի խնդիրն իրականության պասիվ վերարտադրումը չէ, գեղանկարիչն իր տեսած իրականության մեջ վեր է հանում հոգևոր բովանդակությունն ու այն ներկայացնում է դիտողին խորհրդանշանների, ընդհանրապես գեղարվեստական պատկերի միջոցով: Գեղանկարիչը երբեմն կարող է խեղաթյուրել իրերի իսկական գույները, համամասնությունները, ընդհանրապես ողջ տեսքը: Օրինակ՝ ցույց տալու համար մարդու մեջ եղած տագնապը՝ նկարիչը կարող է պատկերել ոչ թե երկու իրական աչք, այլ երեք կամ ավելի: Գեղանկարչությունը կարծես կառուցում է մի նոր աշխարհ ու հանձնում այն դիտողի դատին: Երաժշտությունը, ըստ որոշ մտածողների, արվեստի տեսակներից բարձրագույնն է, քանի որ այն հնարավորություն է տալիս անմիջականորեն զգալ ներդաշնակությունը, վեհ-գեղեցիկն ու տիեզերական անսահմանությունը՝ չդիմելով տարբեր ազգերի ներկայացուցիչներին միմյանցից բաժանող խոսքի օգնությանը: Ի տարբերություն հոդաբաշխ խոսքն օգտագործող արվեստների՝ երաժշտությունը հասանելի է բոլոր ազգությունների մարդկանց, քանի որ անմիջապես դիմում է մարդու հուզական ապրումների ու զգացմունքայնության աշխարհին: Երաժշտությունն իր նպատակին հասնում է ձայնի միջոցով: Ձայնը կարող է լինել մարդու (վոկալ, օրինակ՝ սոպրանո,

բարիտոն և այլն) և գործիքային (օրինակ՝ դուդուկ, դհոլ, ջութակ և այլն): Երաժշտության միջոցով մարդն արտա- հեղում է իր ներսում եղածը, միաձուլվում է այլ մարդկանց ու ողջ բնությանը, կարծես «գրկում է» աշխարհը: Երաժշտությունը կարող է օգտագործել նաև խոսքը՝ պոեզիան: Այս դեպքում ծնվում է երգը, որի լավագույն օրինակներում կա երաժշտության և խոսքային բովանդակության միաձուլում ու ազդեցության ուժգնացում (օրինակ՝ Կանաչյանի օրորոցայինը, «Հորովելը» և այլն): Պարը երաժշտության «արձագանքն է», ռիթմիկ մեղեդու ազդեցությամբ մարդկային մարմնի շարժումների ամբողջությունը, որը բացահայտում է մարդկանց բնավորությունները, հոգեվիճակները, զգացմունքներն ու մտքերը և այլն: Երաժշտության նման պարը ևս հնագույն ժամանակներում է ծագել: Մարդաբանները գտնում են, որ ամենահին արվեստն է սա, քանի որ ռիթմիկ շարժումներ կատարելու պահանջմունքը մարդու մեջ առկա է բնությունից: Մեր նախնիներն ապրում էին բնության ռիթմերով, որոնց արտացոլումն էին կրակի կամ որսի ակնկալվող զոհի շուրջ կատարվող պարերը: Պարի հնագույն ձևերը եղել են տարբեր կենդանիների կամ թռչունների շարժումների նմանակումները: Պարի շնորհիվ մարդը նույնպես միանում է ողջ տիեզերքին, ինչպես նաև իր նախնիներին: Պահպանելով ու պարելով նախորդ սերունդների ստեղծած պարերը՝ մենք համակվում ենք նրանց զգացումներով, ապագայի հանդեպ հույսով, ապրելու և գործելու վճռականությամբ:

Գրականությունն իրականության գեղարվեստական վերարտադրումն է խոսքի միջոցով: Այս արվեստի անվանումը կապված է «գիր» բառի հետ, և թվում է, թե գրականությունը ծնունդ պետք է առներ գրի առաջացման հետ: Սակայն քանի որ խոսքը եղել է շատ ավելի վաղ, ապա գրականության միջոցով գրված պահպանվածի հիմքը կազմող մի մեծ մաս «խոսվել-ասվել-պահպանվել»՝ բանահյուսվել է շատ ավելի վաղ: Մարդկանց հնագույն առասպելները, ասքերը, ավանդազրույցները սերնդեսերունդ պատմվել փոխանցվել են՝ հասնելով գրավոր մշակույթի դարաշրջան ու գրի առնվել՝ պահպանվելով ընթերցող հասարակության համար: Գրականությունն առանձնանում է արվեստի մյուս տեսակներից մարդու վրա իր ունեցած ազդեցությամբ: Եթե երաժշտական ձայնային կամ գեղանկարչական գունային պատկերները ոմանց համար կարող են անհասկանալի, դժվարընկալելի լինել, ապա գրականության «բջիջը» խոսքն է, որն այս կամ այն չափով հասու է տվյալ լեզվով խոսող բոլոր մարդկանց: Գրականությունն ազդում է խոսքով, բացահայտում է մարդու ներաշխարհը, իրականության հանդեպ վերաբերմունքը, կրթում դաստիարակում է նրան՝ սովորեցնելով հույզ- զգացմունքների նրբություն,

ճաշակ, իրականությունն ընկալելու խորք և այլն: Ներկայումս տեխնիկական նորագույն միջոցների հայտնագործումը, ցավոք, հաճախ հետին պլան է մղում գրականությունը: Սակայն մարդու հոգեկան աշխարհը ձևավորելու իր հզորությամբ այսօրվա նորագույն արվեստները դեռ չեն կարող համեմատվել գրականության հետ: Իհարկե, կինոն, հեռուստատեսությունը օժտված են մարդու ժամանցն իրականացնելու մեծագույն ներուժով, սակայն ընթերցանությունն ունի մի խորք, որին նշված արվեստներն ի վիճակի են հասնել հազվադեպ, միայն իրենց բարձրագույն դրսևորումներում:

# Օգտագործված գրականության ցանկ


- Թերզյան Թ., Գեղեցկագիտություն, Բազմավեպ, Վերնատուն, 1897, էջ 215-21, 479-84, 1898, էջ 142-47, 197-99, 352-56, 390-93, 1899, էջ 173-76, 371-74, 567-71, 1900, էջ 72-76, 131-32, 171-73, 223-25, 373-77, 489-494, 1901, էջ 78-82, 174-77, 223-25:
- Երեմյան Ս., Գեղեցիկը, Վերնատուն, 1915:
- Քալանթար Ա., Գեղեցիկի հարցի շուրջը, Ե., 1964:
- Տովսեփյան Վ. Գեղեցիկի հասարակական էության մասին, Ե., 1967:
- Ձրբաշյան. Իրականության Գեղագիտական Հատկանիշները և Գրականությունը էջ 92

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

***ԹԵՄԱ՝*** *Գաղափար ազգային ավանդույթների մասին*

***ԿԱՏԱՐՈՂ՝*** *Դսեղի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի հասարակագիտության ուսուցչուհի Միլվարդ Հակոբյան*

***ՂԵԿԱՎԱՐ՝*** *Ռուդիկ Վարդանյան*

***ՎԱՆԱՁՈՐ 2023***

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------
2. Ի՞նչ է ավանդույթը----------
3. Ավանդույթային արժեքների փոփոխություններն այսօր----------
4. Ընտանիքի և դպրոցի դերը սովորողի ավանդույթային արժեհամակարգի ձևավորման գործում----------
5. Եզրակացություն ----------
6. Գրականություն ----------

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աճող սերնդի դաստիարակության համակարգում բարձր գնահատելով առաջադիմական ավանդույթների և սովորույթների դերը՝ ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին գրել է. «Մարդու բնավորությունը ձևավորվում է բնական և հոգեկան տարրերից : Բնատուր հատկությունները և կյանքում ձեռք բերած համոզմունքները, սովորույթները միահյուսվելով դառնում են բնավորություն, համոզմունքը բնավորություն է դառնում, երբ փոխակերպվում է սովորույթի, սովորույթն էլ հենց այն պրոցեսն է, որի միջոցով համոզմունքը դառնում է հակում և միտքը փոխակերպվում է գործի»[1,138] :

**Թեմայի խնդիրը.**

Վերոնշյալ նպատակի իրականացման նպատակով անհրաժեշտ է մեծացնել ուսումնական հաստատությունների ու ընտանիքների գիտակրթական, բարոյակամային, պետականաշեն և ազգանպաստ վերաբերմունքը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից նոր սերնդի ազգային ավանդույթների արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության կազմակերպման գործընթացի ընկալումը: Պետական և հասարակական ինստիտուտների գործունեության միջոցով հասանելի դարձնել արժեքային համակարգի՝ որպես սովորողի ուսումնառության, դիրքորոշման և վարքագծի ուղղորդող բաղադրիչի ձևավորումն ու ազգային ավանդութային պահանջմունքների բավարարումը՝ սովորողների մեջ զարգացնելով անձնային, բարոյական որակներ՝ պատասխանատվություն, ազատություն, հանդուրժողականություն, հայրենասիրություն, որոշումներ կայացնելու կարողունակություն և այլն :

# Ի՞ՆՉ Է ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

Դեռևս հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Խ. Աբովյանը գնահատելով ազգային ավանդույթների դաստիարակչական դերը, մատնանշում է, որ ամեն մի ուսուցում ու դաստիարակություն պետք է համապատասխանի ժողովրդի ոգուն, վիճակին և պահանջմունքներին: Հայերը՝ «խաղաղության օրերին աշխատասեր են և հեզ, թշնամիների սրերի դեմ՝ արիասիրտ ու համբերատար, մտքի և բարոյական ուժերի զզարգացման մեջ՛ ճոխ ու քնքուշ, ազգային սրբությունների անձեռնմխելիությունը պահպանելիս՛ հպարտ և անընկճելի»[2, էջ 52]: Մեծ լուսավորչի ամեն մի խոսքի ու տողի մեջ ցայտում է բոցավառ սերը դեպի հայրենիքը, նրա բնությունը, անցյալը, պատմական մեծ դեպքերը, մշակույթը, իր ժողովրդի սովորություններն ու ավանդույթները:

Ավանդույթը այն կարևորագույն կատեգորիաներից է, որն առկա է բոլոր ոլորտներում՝ նյութական, քաղաքական, գեղարվեստական, բարոյական, կրթական և այլն: Ազգային ավանդույթները, որպես հայ ժողովրդի նյութական և հոգևոր արժեքներ, բավականին հարուստ ու ինքնատիպ են: Դրանցից են պատմական զրույցները, ժողովրդական բանահյուսությունը, ազգային ծեսերը, տոները, տարազը, խաղերը և այլն: «Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները: Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ»[3,էջ38]:

Ավանդույթը որպես կարևորագույն մանկավարժական արժեք հիմք է հանդիսանում երեխայի համակողմանի զարգացման համար, ձևավորում է հասունացող սերնդի հոգեկերտվածքը՝ միաժամանակ նրանց ներգրավելով սոցիալ–մշակութային հարաբերությունների ոլորտը: Արդի մանկավարժական պրակտիկայում իր ուրույն տեղն ունի ազգային ավանդույթներով իրականացվող դաստիարակությունը: Հայ ժողովուրդը պատմական երկարատև զարգացման ճանապարհին մշակել և արմատավորել է իրեն բնորոշ սովորույթներ, առօրյա կյանքի կանոններ, նորմեր, որոնք, փոխանցվելով սերնդեսերունդ, դարձել են ազգային ավանդույթ և օգտագործվում են որպես նոր սերնդի դաստիարակության կարևոր միջոց: Երեխայի դաստիարակչական աշխատանքում կարևոր է հաշվի առնել ազգային ավանդույթները, սովորույթները, բարքերը, ժողովրդական կենցաղը, յուրաքանչյուր ազգության նկատմամբ ունենալ յուրահատուկ մոտեցում: Երեխայի հետ տարվող դաստիարակչական աշխատանքում անհրաժեշտ է տեղ հատկացնել ազգային առաջադիմական ավանդույթներին: Դաստիարակության արդյունավետության բարձրացման նպատակով ազգային ավանդույթների պահպանումը և կիրառումը կարող են մեծապես նպաստել աճող սերնդի կատարելագործմանը, որը պահանջում է ստեղծագործական մոտեցում, անցյալի մշակույթի նկատմամբ բացառիկ նրբազգացություն, արդիականության սուր զգացողություն: Սակայն ավանդույթներից ոչ բոլորն են պահպանել իրենց դաստիարակչական նշանակությունը: Դժվարությունն այն է, որ ազգային ավանդույթներում տեղ են գտել ոչ միայն առաջադիմական, առողջ հայացքներ, այլև հետադիմական: Եթե դրական ավանդույթները դաստիարակության կարևոր գործոն են և նպաստում են հասարակության առաջընթացին, ապա հետադիմական ավանդույթներն, ընդհակառակը, խանգարում են առաջընթացին, ուստի դաստիարակչական աշխատանքը անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի հատուկ ձևերով և մեթոդներով, որ հասարակական հարաբերություններում և ընտանեկան կենցաղում դեռևս պահպանվող վնասակար սովորույթները և ավանդույթները չդառնան տիրապետող նաև ուսումնական գործընթացում:

Նյութական և սոցիալական շատ արժեքներ ժամանակի ընթացքում փոփոխվում են: Որոշ ավանդույթներ, որոնք կարևորվում էին սրանից տասնամյակներ առաջ, այսօր էական արժեք չեն ներկայացնում: Ժամանակի ընթացքում հայացքները, կարծիքները, արժեքները փոփոխվում են: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, որոնք ունեն իրենց արժեքային կողմնորոշումները, նախասիրությունները և պահանջմունքները: Անշուշտ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, վաղվա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են, և այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել սովորողի առաջընթացի հետևյալ խնդիրները. ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության և ինքնուրույնության զարգացում և այլն:

Քանի որ երեխան դեռևս չունի կայացած արժեհամակարգ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Այս առումով մեծ է ԶԼՄ–ների դերը, որոնցից հաճախ հնչող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, խաթարված մտածելակերպը, սոցիալական կայքերում հակասոցիալական ու հակազգային արժեքներ քարոզող նյութերը իրենց բացասական ազդեցությունն են ունենում երեխայի արժեհամակարգի վրա: Եթե երեխայի ներկայությամբ ծնողը խրախուսում է դրսից քարոզվող բացասական երևույթները, այդ դեպքում նմանատիպ սոցիալական դիրքորոշումներ ձևավորվելու հավանականությունն ավելի մեծ է լինում, և ընդհակառակը, եթե ծնողը քննադատում է անիմաստ, ոչինչ չտվող հաղորդումները կամ ֆիլմերը, ապա հնարավոր է, որ երեխայի մոտ չձևավորվեն բացասական սոցիալական դիրքորոշումներ: Կարևոր է ծնողների դիրքորոշումը՝ այնքանով, որ խրախուսելով կամ հանդիմանելով՝ նրանք ամրապնդում կամ արգելակում են վարքի տվյալ դրսևորման ձևավորմանը:

Ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման միջոցներ են համարվում ժողովրդական բանահյուսությունը, ազգային խաղերը, ծեսերը, տոները, պարը,

տարազը, զրույցը, ծնողի անձնական օրինակը և այլն: Դրանք, որպես մանկավարժական արժեքներ, մեծ նշանակություն ունեն դաստիարակության ողջ համակարգի համար: Օրինակ՝ ժողովրդական բանահյուսության մեջ մարդկանց զգացմունքներն ու մտքերը, պահանջմունքներն ու գաղափարները հանգում են նրան, որ ֆիզիկական աշխատանքը մարդու ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքն է և անհրաժեշտ գործոնը: «Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված է ժողովրդի կյանքը, նրա աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդական փիլիսոփայությունը և գեղագիտական ընկալումները: Բանահյուսությունն ունի ճանաչողական մեծ արժեք, հատկապես բոլոր ժողովուրդների նախապատմական շրջանի կյանքի ժամանակահատվածն ընկալելու առումով» [4,էջ64]:

Ժողովրդական բանահյուսությունը վկայում է, որ հայ ժողովրդին հատուկ է եղել աշխատասիրությունը, որով էլ պիտի դաստիարակվի երեխան: Ժողովրդական տոների և խաղերի մանկավարժական կարևոր կողմն այն է, որ դրանցում առավել արդյունավետությամբ է գործադրվում դաստիարակության բազմապիսի մեթոդները: Տոների և խաղերի պրոցեսում կրտսեր սերնդի մեջ դաստիարակվում է հարգալից վերաբերմունք աշխատանքային ավանդույթների նկատմամբ: Ազգային ավանդական տոները կարևոր նշանակություն ունեն նաև բարոյական դաստիարակության համար: Ավանդական տոները (Նոր տարին, Վարդավառը և այլն) իրենց արմատներով կապված են հայ ժողովրդի հավատալիքների ու պաշտամունքների հետ: Օրինակ՝ Նոր տարվա տոնակատարությունը կապված է ընտանեկան հարաբերությունների բարելավման, կյանքի նորացման գաղափարի հետ: Ազգային այս գեղեցիկ տոնը հաստատորեն մտել է ընտանեկան կենցաղի մեջ:

# ԱՎԱՆԴՈՒՅԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍՕՐ

Այսօր հասարակություն են ներթափանցել մեր ազգին ոչ հարիր ավանդույթային արժեքներ, որոնք խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, որ այն լինի բնականոն: Եթե փոփոխությունը տեղի է ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է ավանդույթային համակարգը: Նման իրավիճակում խիստ կարևորվում են ավանդական արժեքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին:

# ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ընտանիքը երեխայի ձևավորման, զարգացման, կայացման և ինքնահաստատման, արժեքաբանական որակական դրդապատճառների ձևավորման, հասարակության մեջ ինտեգրվելու կարևոր սոցիալական ինստիտուտներից մեկն է: Սակայն ընտանիքը միշտ չէ, որ համապատասխանության մեջ է գտնվում տվյալ դարաշրջանի սոցիալ–տնտեսական իրականության հետ: Ընտանեկան ավանդույթների կիրառումը այսօր չափազանց կարևոր է ժամանակակից ընտանիքի բարոյական հատկանիշների ամրագրման և երիտասարդ սերնդի առողջ դաստիարակության տեսանկյունից:

Ընտանիքի հիմնական նպատակներից մեկը մշակութային արժեքների փոխանցումն է, որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում վարքագծային նորմեր, իրականացվում երեխայի սոցիալականացման առաջին փուլը, հարմարումը կյանքին: Եվ եթե կան խանգարող հանգամանքներ ընտանիքին լուծելու իր խնդիրները՝ ապա դրանցից առաջնայինը համարվում է ավանդական արժեքների անտեսումը՝ հատկապես ժամանակակից ընտանիքի կողմից :

Ըստ Ղ. Աղայանի բարոյականության ավանդական արժեքային համակարգի ակունքներից մեկը աշխատանքն է, որը նյութական և հոգևոր բոլոր արժեքների աղբյուրն է: Այն անչափ բարերար է ազդում մարդկանց բարոյական դաստիարակության վրա: «Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլորության» [5, 68]: Հետևապես պետք է վաղ հասակից երեխային դաստիարակել աշխատանքային ավանդույթներով, նրան նախապատրաստել աշխատանքային գործունեության համար: Աշխատանքային դաստիարակության, աշխատավոր ժողովրդի լավագույն ավանդույթների մասին Աղայանի հիմնարար դրույթները մարմնավորվել և տեղ են գտել նրա «Մայրենի

լեզվի» դպրոցական դասագրքերում և այսօր էլ՛ հայ անվանի մանկավարժի դրույթները աշխատանքային ավանդույթների մասին մեծապես նպաստում են հայեցի կրթություն տվող դպրոցի աշակերտների բարոյական դաստիարակության գործին:

Հասարակության նորմերը, արժեքները, սովորույթները, ծեսերը շատ մեծ դեր են խաղում սովորողի արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության մեջ: Ընտանիքում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով, վարքագծով, արժեքային կողմնորոշումներով: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողը: Արժեքային համակարգի ձևավորման և պահպանման գործընթացում ոչ միայն ընտանիքը, այլև դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում, են ապագա քաղաքացու բնավորությունը, բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ընդ որում ուսուցչի մարդկային և բարոյական նկարագիրը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, աշխարհայացքային մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: «Ուսուցչի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդհամենը մեկ քայլ է»[6,132]: Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Իհարկե, այստեղ հիմնականում նկատի ունենք դաստիարակվածությունը, որը բովանդակում է հետևյալ որակների առկայությունը, բարությունը և հոգատարությունը շրջապատի նկատմամբ (մարդկանց, բնության, կենդանիների, հոգևոր արժեքների), ճշմարտագործությունը

(խոսքի ու գործի), ազնվությունը(վարքի և գիտակցության), պատասխանատվությունը (գործի, մարդկանց, պարտականությունների), երախտագիտությունը (ծնողի, հարազատի, հայրենիքի նկատմամբ), նվիրվածությունը և այլն: Այս բոլոր որակները միաժամանակ բնութագրվում են որպես բարոյական դաստիարակության խնդիրներ, ուստի պատահական չէ, որ դաստիարակվածության մակարդակը բնութագրելիս օգտագործվում է բարոյական է և առաքինի բառակապակցությունը: Բարոյական դաստիարակությունն արտահայտում է դաստիարակության նպատակների ու բովանդակության ամբողջության կարևորագույն ուղղություններից մեկը:

Ինչպես հայտնի է՝ երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Ակնհայտ է, որ երկրորդի դեպքում արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում ավելի շատ տարերային ձևով: Այն չի կրում կազմակերպված բնույթ: Դժվար է ապացուցել, որ այդ գործընթացը կառավարելի դարձնելով, կարելի է հասնել դրական արդյունքի: Սակայն սովորողների գիտակցության և վարքագծի մեջ «նոր արժեքների» յուրովի ընկալումը կրում է տարասեռ բնույթ, որը կախված է մի շարք գործոններից. այն սոցիալական միջավայրի գաղափարախոսությունից, որտեղ դրանք տարածվում են, տնտեսական և սոցիալական զարգացման օբյեկտիվ գործընթացների բնույթից և այլն:

Այսպիսով՝ հենց ընտանիքում և դպրոցում են ամրագրվում ապագա քաղաքացու բարոյական և կամային արժեքաբանական որակները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի բարդ և անհանգիստ իրականության շրջանակներում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է սոցիալական տարբեր ինստիտուտների՝ ընտանիքի, դպրոցի և այլն դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը:

Ելնելով վերը շարադրվածից, կարելի է ընդհանրացնել. հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է գիտելիքների բարձր մակարդակով ու արժեքների պահպանմամբ: Միայն կրթության միջոցով ժամանակակից սերունդը կկարողանա շարունակել պատմամշակութային և ազգային սերնդեսերունդ փոխանցվող լավագույն ավանդույթները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը Մանկավարժություն, N1-2, 7-14 էջ,2004:

2.Դոլուխանյան Ա. Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., «Զանգակ–97», 2008, 268 էջ:

3. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011, 160 էջ:

4.Ղարիբջանյան Օ. Բ., Ժողովրդական ավանդույթները դպրոցականների բարոյական դաստիարակության գործոն, Եր. «Լույս»,1978, 65 էջ:

5. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Ե., 1986թ., 395 էջ:

6.Розов Н. С. „Культура, ценности и развитие образования,”- М, Иследовательный центр, 1992,-154с.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

***ԹԵՄԱ՝*** <<Քաղաքացիական հասարակություն:Ուսուցումը նոր մեթոդներով նորագույն հարթակի օգնությամբ/<<ԿԱԶԱ >> Էլ.Ուսուցում/:

***ԿԱՏԱՐՈՂ՝*** Ս.ԿՈՒՐՂԻՆՅԱՆ Լոռու մարզ,ք Վանաձոր, թիվ 13 ավագ դպրոց

***ՂԵԿԱՎԱՐ՝*** *Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ*

***ՎԱՆԱՁՈՐ 2023***

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……2

*Գլուխ 1. Քաղաքացիական հասարակությունը որպես քաղաքակրթական երևույթ*

1.1. Քաղաքացիական հասարակության համակարգը……..4

*Գլուխ 2. Քաղաքացիական հասարակությունը անվտանգային ոլորտի կառավարման գործոնների համատեքստում*

2.1. Քաղաքացիական հասարակության գործառման հայեցակարգային հիմքերը ՀՀ-ում…….....9

2.2. ՔՀԿ-ների մասնակցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացում …….....14

2.3. Քաղաքացիական հասարակություն թեմայի ուսուցումը նորագույն մեթոդներով ԿԱԶԱ էլ.ուսուցում հարթակի օգնությամբ……17

**Եզրակացություններ**……...……21

**Օգտագործված գրականության ցանկ**…….....……23

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Արդիականությունն ու հրատապությունը:** Պաշտպանության ներկայացված աշխատանքի արդիականությունն ու հրատապությունը պայմանավորված են ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման, ինչպես նաև դրա հետ կապված հիմնախնդիրների վերհանման և համարժեք լուծումներ գտնելու անհրաժեշտությամբ: Քաղաքացիական հասարկության ձևավորման համար կարևոր նշանակություն ունեն ժողովրդավարության առկայությունը, քաղաքացիական շարժումները, օրենսդրական դաշտը, ինչպես նաև դրանց փոխգործակցությունը:

Հայ հասարակության կողմից ժողովրդավարական նորմերի ընդունման, ժողովրդավարական գործելաոճի անցման պայմաններում հաճախ անհրաժեշտություն է առաջանում պայքարելու սեփական իրավունքների պաշտպանության համար: Ահա հենց այս հիմքի վրա են հաճախ առաջանում քաղաքացիական շարժումները, որոնք միտված են պաշտպանելու մարդու իրավունքներն և հաստատելու հավասար ու հասանելի սոցիալական, կրթական, էկոլոգիական միջավայր: Կախված քաղաքացիական հասարակության փոփոխման աստիճանից անհրաժեշտորեն փոխվում է պետական կարգն ու քաղաքական վարչակարգը: Այս առումով կարևորվում է ցանկացած ժողովրդի մոտ քաղաքացիական հասարակության ձևավորումն ու զարգացումը: Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացումը սկիզբ է առել անկախությունից: 1990-ական թվականներից ի վեր, Հայաստանում քաղաքացիական հասարակության կառուցվածքը ձևավորվել է օտարերկրյա օգնության ազդեցությամբ: Հայաստանյան քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման կարևորագույն դերակատարներից մեկն էլ սփյուռքահայ համայնքն է եղել: Դեպի ժողովրդավարություն աստիճանական անցման ընթացքում զգալի աճեց ՔՀԿ-ների թիվը: Դրանք ստեղծվել էին՝ բավարարելու աճող հասարակական մտահոգությունները, ինչպիսիք էին գործազրկությունը սոցիալական և առողջապահական կարիքները՝ խթանելով ժողովրդավարական արժեքները և մարդու իրավունքները:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ անհրաժեշտ է վեր հանել ՔՀԿ-ների դերը ՀՀ ազգային անվտանգության և կառավարման ոլորտում: Հենց վերը շարադրվածով է պայմանավորված աշխատանքի թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

**Նպատակն ու խնդիրները:** Հետազոտության նպատակն է համակողմանի ուսումնասիրել քաղաքացիական հասարկության մարտահրավերները, կայացման

հիմնախնդիրները ՀՀ-ում: Նպատակին հետամուտ փորձ է արվել վեր հանել հետևյալ խնդիրները.

- վերհանել քաղաքացիական հասարակության տեսական-գաղափարական հիմքերը,
- ներկայացնել քաղաքացիական հասարակության հիմնական մոդելները,
- ներկայացնել քաղաքացիական հասարակության մասնակցության կարևորությունը ազգային անվտանգության ոլորտում:
- անդրադառնալ ՀՀ-ում քաղաքացիական հասարակության գործառման հայեցակարգային հիմքերին,
- անդրադառնալ ՔՀԿ-ների մասնակցությանը հանրային քաղաքականության մշակման գործընթացում,
- ներկայացնել թեմայի ուսուցման մեկ օրինակ նորագույն հարթակի օգնությամբ:

**Աշխատանքի թեմայի մշակվածությունը և նորույթը:** Քաղաքացիական հասարակությունը ծագել և զարգացել է մարդկության պատմությանը զուգահեռ: Վերջինիս հիմնախնդիրներին, մարտահրավերներին, առավելություններին ու թերություններին անդրադարձել են ինչպես ռուս, այնպես էլ արևմտյան տեսաբանները: Այն ունի պատմական խոր արմատներ: Քաղաքացիական հասարկության վերաբերյալ իրենց դիրքորոշումն են հայտնել տեսաբաններ Ա. Կոչետկովը , Ի.Կրավչենկո, Թոմաս Հոբսը, Հեգելը Թովիլը, Լ.Ս. Մամուտը և այլք:

Թեմայի **նորույթն** այն է, որ հայ իրականության մեջ առայժմ ոչ ոք չի անդրադարձել քաղաքացիական հասրակության մասնակցությանը անվտանգության և կառավարման ոլորտներում, մասնավորապես ինտեգրացիոն գործընթացներում դրանց դերին այս ծավալով ու ենթաշերտերով:

## Գլուխ 1. Քաղաքացիական հասաակությունը որպես քաղաքակրթական երևույթ

### 1.1. Քաղաքացիական հասարակության համակարգը

Հասարակության քաղաքական համակարգի տարրերի ակտիվ գործունեության շնորհիվ պատմական որոշակի ժամանակաշրջանում ստեղծվում են նախադրյալներ քաղաքացիական հասարկության ձևավորման համար: Պետությունը և քաղաքացիական հասարակությունը չպետք է հակադրել մեկը մյուսին, քանի որ հասարակության քաղաքական կեցության ինքնակազմակերպման որոշակի մակարդակում պայմաններ են ստեղծվում իրավական պետության ձևավորման համար: Հասարակության ինքնակառավարումը գոյություն ունի պետության քաղաքացիական հասարակության համակարգի շնորհիվ:

Քաղաքացիական հասարակության կոնցեպցիան քննարկման առարկա է եղել քաղաքական մտքի պատմության բոլոր ժամանակաշրջաններում և դիտվել է հասարակության ժողովրդավարական կազմակերպման հիմնական նպատակներից մեկը:

Հասարակության քաղաքական համակարգի տարրերի ակտիվ գործունեության շնորհիվ պատմական որոշակի ժամանակաշրջանում ստեղծվում են նախադրյալներ քաղաքացիական հասարակության ձևավորման համար: Պետությունը և քաղաքացիական հասարակությունը չպետք է հակադրել մեկը մյուսին, քանի որ հասարակության քաղաքական կեցության ինքնակազամակերպման որոշակի մակարդակում պայմաններ են ստեղծվում իրավական պետության ձևավորման համար: Հասարակության ինքնակառավարումը գոյություն ունի պետության և քաղաքացիական հասարակության համակարգի շնորհիվ:

Քաղաքացիական հասարակությունը, ինչպես և պետությունը, մարդկության պատմական զարգացման հետևանք է, որի առաջացման և ձևավորման ահնրաժեշտ պայմանն այն է, որ քաղաքացիներ մասնավոր սեփականության հիմքի վրա ձեռք են բերում տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական ինքնուրույնություն: Այստեղ առաջնայինը մարդկանց անհատականությունն ու իրավունքների համակարգի հավասարությունն է[2]:

Ռուս քաղաղագետ Ա. Կոչետկովը քաղաքացիական հասարակությունը սահմանում է որպես տնտեսական, սոցիալ-քաղաքական, կրոնական, հոգևոր-բարոյական, ընտանեկան, մշակութային և այլ հասարակական հարաբերությունների համակարգ, որն արտահայտում է հասարակության քաղաքացիների կամքը և որոշում է պետության քաղաքականությունը[5]:

Ռուս սոցիոլոգ Ի.Կրավչենկո նշում է, որ քաղաքացիական հասարակությունն անհատների միջև զարգացած տնտեսական, մշակութային, իրավական, քաղաքական հարաբերությունների ամբողջություն է, որոնք միջնորդավորված չեն պետության կողմից: Քաղաքացիական հասարակությունը դեմոկրատական պետություններում ձևավորվող ու զարգացող մարդկային հանրություն է, որը հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում կամավոր ձևավորված ոչ պետական կազմակերպությունների համակարգ է: Քաղաքացիական հասարակության գոյության և ձևավորման հիմնական նպատակը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում անձանց ազատությունների և իրավունքների ապահովումն է[7]:

Այստեղ կարևորն այն է, որ յուրաքանչյուր ոք հստակ իմանա՝ ինչ չափով է ինքը պաշտպանված կողմնակի միջամտությունից և ինչ դեպքերում կարող է պետությունը ազդել իր ծրագրերի իրականացման վրա: Իսկ մյուս կողմից միապետությունը ընդհանրապես անհամատեղելի է քաղաքացիական հասարակության հետ և հետևաբար չի կարող լինել քաղաքացիական կառավարման ձև:

Քաղաքաքացիական հասարակությունը արդարության սկզբունքի վրա հիմնված հանրություն է, որտեղ մարդն իր համար կարող է գտնել բարձրագույն բարիք:

Ըստ Հեգելի քաղաքացիական հասարակության մեջ առանձին անձանց միավո-րումը որպես այդպիսին, վերջնական նպատակ է, որի նշանակությունը համընդհանուր կյանք վարելն է իրենց հետագա վարքի բնույթի, առանձնահատուկ պահանջմունքների բավարարումը, որոնք ունեն իրենց ելակետն ու արդյունքը. դա նրանց համընդհանուր նշանակությունն է: Քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս որպես շերտավորում ընտանիքի և պետության միջև: Եթե պետությունը ներsկայանցվում է որպես տարբեր անձանց միասնություն,որը սոսկ ընդհանրություն է, ապա նկատի է առնվում որոշակի քաղաքացիական հասարակություն: Ըստ Հեգելի քաղաքացիական հասարակության առաջին սկզբունքը կոնկրետ անձն է, որն ինքն իր համար առանձնահատուկ նպատակ է, բայց այնպիսի առանձնահատուկ անձ, որը վերաբերվում է մյուս առանձնահատուկ անձանց նույնպիսի առանձնահատկությամբ:

Քաղաքացիական հասարակության երկրորդ սկզբունքը համընդհանուրն է: Առանձընահատուկ անձը մյուսների հետ փոխհարաբերության միջոցով համընդհանրության ձև է ստեղծում՝ բավարարելով պահանջմունքների իր համակարգը: Համընդհանուրը հանդես է գալիս առանձնահատուկ նպատակի սահմանափակում, որպես առանձնահատուկի գոյության անհրաժեշտ պայման

չափանիշ: Քաղաքացիական հասարակության մեջ յուրաքանչյուրն ինքն իր համար նպատակ է, բոլոր մնացածը նրա համար ոչինչ է: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձը քաղաքացիական հասարակության անդամ է, ապա մյուս բոլոր անդամները դառնում են առանձնահատուկ նպատակի իրագործման անհրաժեշտ պայմաններ: Քաղաքացիական հասարակության մեջ առանձնահատուկն ու փոխկապված են և փոխադարձ պայմանավորված: Յուրաքանչյուր անդամ ինքնուրուն է ազատ և իրավունք ունի զարգանալու և դրսևորելու իր բոլոր կողմերը համընդհանուրի շրջանակներում: Քաղաքացիական հասարակության էությունն այն է, որ համընդհանուրը կապված է առան-ձնահատուկի ազատության և իրավունքի հետ[3]: Ներկայիս պայմաններում քաղաքացիական հասարակությունը բնորոշվում է այն առանձնահատկությամբ, որ դարձել է քաղաքացիների ազատությունների անհրաժեշտ միջոց և պայման: Այստեղ կարելի է տարբերակել կատարյալ և անկատար քաղաքացիական հասարակություններ: Անկատար է այնպիսի քաղաքացիական հասարակությունը, որտեղ համընդհանուրի շրջանակներում մարդը դեռևս չի կարող հասնել իր ազատությունների ու իրավունքների իրականացմանը: Այս հասարակությունը չի ապահովում քաղաքացիների ազատությունների և իրավունքների իրականացման անհրաժեշտ միջոցները և պայմանները: Դա նշանակում է, որ այդպիսի հասարա-կության մեջ բացակայում է կամ նոր են ձևավորվում այդ տարրերը: Այստեղ ընդհանուր համակարգը չի գործում որպես մեկ միասնական ամբողջություն: Եթե քաղաքացիական հասարակության համակարգի տարրերի միջև ծագի որոշակի գործառնական անհամաձայնություն, ապա այդ համակարգը կամ կհայտարարվի ճգնաժամային իրավիճակում, կամ կդադարի որպես այդպիսին գոյություն ունենալ:

Անձի իրավունքներն ու պարտականությունները միաժամանակյա անհրաժեշտություն են: Շնորհիվ այդ իրավունքների ու պարտականությունների, համընդհանուրի ու առանձնահատուկի փոխադարձ կապը պահպանվում է այնքանով, որքանով համընդհանուրը դառնում է առանձնահատուկ նպատակ և ընդհակառակը: Առանձնահատուկ շահերը և ձգտումները պետք է համաձայնեցվեն համընդհանուրի հետ, այսինքն կատարելով իր պարտականությունները, դրա մեջ մարդը տեսնում է անհրաժեշտաբար իր անձի ու սեփականության պահպանումը; Ըստ Հեգելի անձը ընդհանրապես իրավասու է, այստեղից՝ «եղիր անձ և հարգիր մյուսներին որպես անձ»[4]: Եթե քաղաքացիական հասարակությունը գտնվում է իր ձևավորման փուլում կամ անցողիկ ժամանակաշրջանում, ապա այնտեղ անձի պարտականությունների և իրավունքների միջև հակասություն է առաջանում, քանի որ անձի պարտականություններն այս դեպքում գերիշխում են իրավունքներին: Իսկ եթե

քաղաքացիական հասարակությունը գտնվում է զարգացման ժամանակաշրջանում, ապա ընդհակառակը իրավունքները գերիշխում են պարտականություններին: Այս ամենից կարելի է հետևություն անել, որ քաղաքացիական հասարակությունը ավելի շատ տալիս է քան պահանջում:

Յուրաքանչյուր քաղաքացիական հասարակություն ունի այնպիսի պետական կարգ, պետություն, որը նրան համապատասխանում է: Քաղաքացիական հասարակությունը ինքն է որոշում, թե ինչպիսի պետական կարգն է համապատասխանում իր իրավունքին և վիճակին, այլ դեպքում չի ունենա ոչ նշանակություն ոչ էլ արժեք:

Քաղաքացիական հասարակության և պետության հարաբերությունների համա-կարգում վճռորոշ դերը պատկանում է քաղաքացիական հասարակությանը: Եթե խոսքը կատարյալ քաղաքացիական հասարակության մասին է, ապա այն ենթադրում է տարրերի ակտիվ գործունեություն և օբյեկտիվ հասարակական կարծիքի առկայություն, հակառակ դեպքում այն չի կոչվում քաղաքացիական հասարակություն:

Կախված քաղաքացիական հասարակության փոփոխման աստիճանից փոխվում է նաև պետական կարգի բովանդակությունը, պետության էությունը: Այս առումով կարևորվում է ցանկացած ժողովրդի մոտ քաղաքացիական հասարակության ձևավորումն ու զարգացումը, քանի որ դա նրա հոգևոր կյանքի զարգացման հետևանք է, որը որոշում է ցանկացած քաղաքակամ համակարգի գոյության հնարավորություն: Պետության օրգանիզմը քաղաքական համակարգն է, իսկ քաղաքացիական հասարակության օրգանիզմը դա քաղաքական տրամադրվածության, քաղաքական հարաբերությունների ձևավորման ոլորտն է, որից բխում է հենց քաղաքական կարգը՝ պետությունը[8]:

Այսպիսով կարող ենք ասել, որ անձ-ընտանիք-քաղաքացիական հասարակություն-պետություն փոխհարաբերություն է, բարդ համակարգային ամբողջություն: Քաղաքացիական հասարակության նպատակը անձի առանձնահատուկ պահանջմունքների, շահերի գոյությունն է ու անհրաժեշտության ապահովումը: Քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս որպես անձի առանձնահատուկ իրավունք, որը փոխակեպվում է համընդհանուր իրավունքի և հակառակը: Քաղաքացիական հասարակությունը կատարում է իր ֆունկցիաները անձանց հարաբերությամբ՝ նպաստելով և պաշտպանելով նրանց նպատակների և շահերի իրականացմանը: Կարելի է առանձնացնել քաղաքացիական հասարակության հետևյալ բնորոշ գծերը:

1. Քաղաքական հասարակությունը միջնորդավորված պահանջմունքների համակարգ է, որը հենվում է մասնավոր սեփականության և մարդկանց համընդհանուր իրավական հավասարության վրա:

2. Այն ինքնուրույն անդամների միավորում է, որը իրավական կառուցվածքների միջոցով ապահովում է անվտանգությունը և սեփականությունը, իսկ արտաքին կարգ ու կանոնի միջոցով՝ նրանց մասնավոր և ընդհանուր շահերը:

3. Եթե պետությունը իրենից ներկայացնում է որպես տարբեր անձանց միասնություն, որը սոսկ ընդհանրություն է, ապա նկատի է առնվում որոշակի քաղաքացիակն հասարակություն:

4. Քաղաքացիական հասարակության մեջ առանձնահատուկը և համընդհանուրը փոխպայմանավորված են և գոյություն ունեն այդ միասնության մեջ:

5. Պետությունը առաջնային է քաղաքացիական հասարակության նկատմամբ, և նրա հիմքի վրա է ձևավորվում քաղաքացիական հասարակությունը[9]:

## Գլուխ 2. Քաղաքացիական հասարակությունը անվտանգային ոլորտի կառավարման գործոնների համատեքստում

### 2.1. Քաղաքացիական հասարակության գործառման հայեցակարգային հիմքերը ՀՀ-ում

Կախված «քաղաքացիական հասարակություն» հասկացության մեկնաբանություններից, համապատասխան հաստատությունների ու ավանդույթների պատմությունը Հայաստանում կարելի է և՞ հին և՞ նոր համարել:

Լայն իմաստով դիտարկելու դեպքում հարկ է արձանագրել, որ քաղաքացիական հասարակության ավանդույթները Հայաստանում ունեն բավականին հարուստ պատմություն: Առաջին պետական կազմավորումները հայկական քաղաքակրթության մեջ հայտնի են դեռևս Ք.ա. երրորդ հազարամյակից:

Նեղ իմաստով (որպես կամավորության հենքով ձևավորված և ինքնավարության սկզբունքով գործող, իրենց անդամների շահերին և հանրային կարևորություն ունեցող խնդիրների լուծմանը հետամուտ ոչ կառավարական կազմակերպությունների ամբողջություն) քաղաքացիական հասարակության կառույցները ևս նորություն չեն հայ իրականության համար: Դեռևս 14-րդ դարում կորցնելով ինքնիշխանությունը, և պետականության լիարժեք ինստիտուտները (թեև դրանք որոշ չափով պահպանվեցին պատմական Արցախում)՝ հայ հասարակությունը շարունակեց գոյատևել, զարգացնել մշակույթը, գիտությունն ու կրթությունը հենց ինքնակազմակերպման մեխանիզմների, ժամանակակից իմաստով՝ ոչ կառավարական կազմակերպությունների և կառույցների շնորհիվ՝ սկսած համայնքներից, ավանդական ընտանիքից, առաքելական եկեղեցուց մինչև բարեսիրական կազմակերպություններ, ինքնապաշտպանական և ազգային ազատագրական շարժման ջոկատներ: Այս ավանդույթների վերաիմաստավորումն արժեքավոր հենք կարող է լինել քաղաքացիական հասարակության ժամանակակից կառույցների զարգացման առումով:

Խորհրդային իշխանության տարիներին, սակայն, նշված ավանդույթները զգալիորեն խամրեցին: Այդ ժամանակահատվածում ոչ կառավարական կազմակերպությունները գլխավորապես ներկայանում էին որպես պետական հաստատությունների և կառավարող կուսակցության կցորդներ: Իսկ այլընտրանք հանդիսացող ոչ ֆորմալ կազմակերպություններն ու շարժումները որպես կանոն ենթարկվում էին քաղաքական, իրավական ճնշումների ու հալածանքների:

Ներկայումս ՔՀԿ-ների ոլորտը կարգավորվում է ՀՀ մի շարք օրենքներով, մասնավորապես՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով (1998թ.), «Հասարակական կազմակերպությունների մասին» (2001թ.), «Հիմնադրամների մասին» (2002թ.), «Բարե-գործության մասին» (2002թ.), «Զանգվածային լրատվության մասին» (2003թ.), «Տեղե-կատվության ազատության մասին» (2003թ.), «Կուսակցությունների մասին» (2002թ.), «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» (2000թ.), «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» (2001թ.) ՀՀ օրենքներով, պետական մարմինների կողմից ընդունված այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված և գործող հասա-րակական կազմակերպությունների, տպագիր ու էլեկտրոնային զանգվածային լրա-տվամիջոցների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների վերա-բերյալ տվյալների վերլուծությունը, չգրանցված կազմակերպությունների, շարժումների, շահառու խմբերի առկայությունը, հասարակական գործընթացներում դրանց մասնակցության և ազդեցության ցուցանիշների աստիճանական աճը վկայում են Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հատվածի կառուցվածքային առումով բավականաչափ կայացվածության մասին: Թեև, կարևոր խնդիրներ կան լուծելու ինչպես իրավական դաշտի բարելավման, կազմակերպությունների ներքին ենթակառուցվածքների ձևավորման, ֆինանսական կայունության և գործունեության թափանցիկության ապահովման, ցանցային կառույցների, սոցիալական գործընկերության մեխանիզմների զարգացման տեսանկյուններից:

Այս ամենին հասնելու նպատակով 2009 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որը նախատեսում էր նաև ՔՀԿ-ների նկատմամբ մի շարք վերահսկողական գործիքներ: Առաջարկվող լուծումները մտահոգեցին ՔՀԿ-ների ներկայացուցիչներին: Ծագած հարցերը, ինչպես նաև նախագծում չներառված, սակայն լուծում պահանջող խնդի-րները քննարկելու նպատակով ստեղծվեց ՔՀԿ-ի նախաձեռնող խումբ: Համախմբված ավելի քան 300 հասարակական կազմակերպությունների նպատակն էր մասնակցել դաշտը կարգավորող օրենսդրության մշակման աշխատանքներին և ներկայացնել առաջարկություններ:

Հայեցակարգը քաղաքացիական հասարակության գործառման համար ամուր հիմքեր է ստեղծում: Կարևոր է այն հանգամանքը, որ հայեցակարգում առաջ են քա-

շվում ինչպես ոլորտում առկա խնդիրներն, այնպես էլ դրանց լուծումներն: Այն առաջարկում է ՀՀ գործող օրենսդրության վերանայում, ինչի արդյունքում օրենսդրությունը կհամապատասխանեցվի քաղաքացիական հասարակության ներկա պահանջներին և կխթանի քաղաքացիական հասարակության հետագա զարգացմանը: Մաս-նավորապես, առաջարկվում է փոփոխություն կատարել Հայաստանի Հանրապետու-թյան քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխում (Իրավաբանական անձինք)՝ վերանայել ոչ առևտրային կազմակերպությունների տեսակները, ինչպես նաև ընդունել համապատասխան հատուկ օրենսդրություն՝ առանձին կազմակերպական-իրավական տեսակների մասով:

*«Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների»* հայեցակարգը հստակ դասակարգում է ՔՀԿ-ները.

- **Միավորում**՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որումիրենց շահերի ընդհանրության հիման վրա, իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջները բավարարելու, իրենց և այլոց իրավու-նքները և շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործու-նեություն իրականացնելու նպատակներով օրենքով սահմանված կարգով, միավորվում են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և իրավաբանական անձինք:

Այսպես, ոչ առևտրային կազմակերպությունների առկա դասակարգման մեջ բացակայում են այնպիսի կազմակերպական իրավական ձևեր, որոնցում միա-ժամանակ հնարավոր կլինի միավորվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավա-բանական անձանց: Օրենսդրությունը չի նախատեսում սահմանափակ մասնա-կցությամբ ոչ առևտրային կազմակերպության ստեղծման հնարավորություն,

իսկ դա գիտահետազոտական կենտրոնների (tink tank) գործունեության համար ամենահարմար կազմակերպչական-իրավական ձևն է:

- Հիմնադրամ՝ քաղաքացիների և/կամ իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական կամ այլ հանրօգուտ նպատակներ:

- Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների՝ որպես առանձի կազմակերպական-իրավական ձևի նախատեսում և օրենսդրական կարգավորում.

Անհրաժեշտ է մշակել այնպիսի մեխանիզմ, որը ՔՀԿ-ների աշխատանքներում ընդգրկված կամավորները չհամարվեն անօրինական աշխատողներ, մյուս կողմից կբացառի իրավունքի չարաշահումը: Այս նպատակով առաջարկվում է սահմանել կամավորական աշխատանքի մասին հայտարարագրելու կարգը և ժամկետները, կամավորներին գործուղման ուղարկելու, ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև տարվա ավարտին այդ մասին ամփոփ հաշվետվություն ներկայացնելու և տեղեկությունները հրապարակելու կարգը: Համապատասխան իրավական ակտով կարող է կանոնակարգվել նաև այլ հարցեր. մասնավորապես, ինչ ծավալով, ինչ կարգով և որ դեպքերում կամավորները կարող են փոխհատուցում ստանալ ճամփորդական կամ այլ ծախսերի համար, ստանալ օրապահիկ և այլն: Նշված հարցերը կարևոր են ինչպես կամավորականության խթանման, այնպես էլ ՔՀԿ-ի հաշվապահական հաշվառման և հարկերը ճիշտ հաշվարկելու տեսանկյունից:

Առաջարկվող լուծումները կնպաստեն կամավորականության զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում և միտված կլինեն բացառելու գործատուների կողմից աշխատանքային հարաբերությունների չարաշահման, չգրանցված աշխատողներ պահելու և աշխատողների իրավունքների ոտնահարման, հարկերի վճարումից խուսափելու հնարավորությունը:

Ըստ հայցեկարգի ՔՀԿ-ների նման դասակարգման շնորհիվ կլուծվեն առկա մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են հասարակական կազմակերպութ-յունների կառավարման, ինչպես նաև սպորտային ֆեդերացիաների, կրթական հաստատությունների և ստեղծագործական միությունների գործունեության առանձնահատկություններով:

ՔՀԿ-ների գործունեության արդյունավետության առավել կարևոր նախապայմաններից է դրանց ֆինանսական կայունության ապահովումը: Երկարա-ժամկետ ֆինանսական մուտքերի ակնկալիքի պայմաններում ՔՀԿ-ները հնարավորություն կունենան կախված չլինել առանձին դոնորներից, պլանավորել և կյանքի կոչել երկարաժամկետ ծրագրեր, ինչը կհանգեցնի իրենց գործունեության որակական փոփոխության: Նշված խնդրի լուծման համար նախատեսվում են ստորև նշված գործիքները՝

- Քաղաքացիական հասարակության կառույցների պետական ֆինանսավորման և դրամաշնորհների տրամադրման գործընթացների բարելավում,

- Պետական դրամաշնորհների մասին առցանց տվյալների շտեմարան,
- Սեփական անունից առևտրային (ձեռնարկատիրական) գործունեության իրականացման հնարավորություն:

Ուղղակիորեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի և անձեռնմխելի կապիտալի հիմնադրամների իրավական կարգավորման դեպքում ՔՀԿ-ներին հասանելի կլինեն իրենց ֆինանսական ինքնուրույնությունն ու կայունությունը ապահովող գործիքներ, ինչն էլ կերաշխավորի վերջինների գործունեության կանխատեսելիությունը, հնարավորություն կտա իրականացնել երկարաժամկետ պլանավորում և կյանքի կոչել խոշոր ծրագրեր:

## 2. 2 ՔՀԿ-ների մասնակցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացում

Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերություն-ների կարգավորումը հրատապ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ձևավորման, պետական ու հասարակական ինստի-տուտների կայացման գործընթացում:

*Քաղաքացիական հասարակության համակարգը արտացոլում է.*

- քաղաքացիների, հասարակություն և պետական ինստիտուտների միջև տեղի ունեցող փոխհարաբերությունները,
- քաղաքացիների իրավունքների և պարտականությունների իրականաց-ման մեխանիզմները,
- հասարակական ինստիտուտների կառուցվածքը , կազմակերպման ձևերն ու եղանակները, ինչպես նաև՝ նրանց դերը քաղաքացիների գործունեության ու քաղաքական կեցության կազմակերպման գործում, հասարակական հարաբերությունների համակարգի տնտեսական, իրավական, քաղաքական հիմքը: Հասարակական և պետական ինստիտուտների ակտիվ գործառնության պայմանները որոշում են հասարակության ինքնակառավարման ձևերն ու եղանակները: Արդի պայմաններում սոցիալական խմբերի, դասակարգերի, խավերի, ազգերի, հասարակական կազմավորումների հարաբերությամբ պայմանավորված՝ ազատությունը քաղաքական կառույցների իրահավասար գործունեության հիմնական երաշխիքն է[6] : Քաղաքացիական հասարակության ձևը ցույց է տալիս նրա գործառնական և կառուցվածքային առանձհանատկությունները, որի մեջ մտնում են՝
- ինքնակազմակերպման, ինքնակառավարման ձևը, այսինքն՝ հասարակական ինստիտուտների ձևավորման պայմանները, կազմակեր-պվածությունը և մեկը մյուսի հետ փոխհարաբերությունների կարգը,
- կառուցվածքի ձևը, որը բնութագրում է հասարակական ինստիտուտների հիերարխիան, հասարակական կարծիքի ձևավորման մեխանիզմները:

Քաղաքացիական հասարակությունն և ՔՀԿ-ները առանցքային դեր է խաղում ժողովրդավարության և օրենքի գերակայության ամրապնդման գործում, որոնք երկուսն էլ, անկասկած, կայուն զարգացման կարևորագույն հիմնասյուներից են: ՀՀ-ը, նույնպես, իր ջանքերն է ներդնում ժողովրդավարության և օրենքի գերակայության ամրապնդման գործում ուրստի անհրաժեշտություն է դառնում

ՔՀԿ-ների դարձնել մասնակից՝ հանրային քաղաքականության մշակման գործընթացում: Սակայն դրա համար նախևառաջ անհարժեշտ է իշխանության և հասարակության միջև երկխոսության առկայություն:

Հանրային քաղաքականության մշակման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությունը բարդացնում են վառ արտահայտված խմբային շահերը, ներհամայնքային կապերը, որոնք չեն նպաստում թափանցիկ և մասնակցային հանրային քաղաքականությանը, իսկ հանրային մասնակցության մշակույթի բացակայությունը խորհրդային ժառանգության արդյունք է: Որպեսզի իշխանության և հասարկության միջև հաստատվի երկխոսություն անհրաժեշտ է պարզել կողմերի տեսակերտները: Այդ նպատակով քաղաքացիական հասարակության ֆորումի շրջանակներում իրականացվեց «Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը» թեմայով հետազոտություն, որում մասնկիցներն առնձնացրել են իշխանությունների և քաղաքացիների միջև առկա հարաբերություններն բնորոշող հատկանիշներն՝

- «Մենք իշխանությունների հանդեպ հարգանք չունենք, բայց այդուհանդերձ, նրանից ինչ-որ բան ստանալու ակնկալիք ունենք»:
- «Ուժային, ազգային անվտանգության մարմինները բացառիկ իրավունք ունեն իրենց գործունեությունը գաղտնի պահելու, և օրենքները նրանց չեն վերաբերում»:
- «Ազգային կարծրատիպերը խոչընդոտ են քաղաքացիական հասարակության, երկխոսության, ինչպես նաև՝ առհասարակ նորարարության համար»:
- «Հայերի մեծ մասը պատրաստակամորեն իր կարծիքը հայտնում է մասնավոր, նեղ միջավայրերում, իսկ բաց հանրային տիրույթում այն արտահայտելուց խուսափում է, մտածելով, թե դա կարող է օգտագործվել իր դեմ: Քանի որ Հայաստանում իլյուստրացիա տեղի չունեցավ, իսկ նախկին իշխողների ժառանգները մեծ հաշվով այսօր էլ շարունակում են իշխել, մենք մեր պասսիվ վարքը համարում ենք ավանդական, անհիմն «էթնիկացնում ենք» այն»:
- «Հայերի ազգային մրցունակության հիմքը հարմարվելու ունակությունն է՝ իր դրական և բացասական իմաստներով: Մերոնք շատ արագ են հարմարվում նոր, անծանոթ պայմաններին, ինչը լուրջ մրցակցային առավելություն է: Սփյուռքի գոյությունն ինքնին դրա ապացույցն է: Իսկ սեփական երկրում հարմարվում ենք անարդարությանը, այնպիսի հանրային

հարաբերությունների, որոնցից զարգացում, բարեփոխումներ, պայքար իրավունքների համար՝ այս ամենը չի բխում: Հայերի հարմարվելու կոդը պետք է ճիշտ հունի մեջ դրվի՝ օրինակ, հարմարվել օրենքի գերակայությանը, ինչը մեզ մոտ լավ է ստացվում այլ երկրներում, սակայն առայժմ՝ոչ հայրենիքում»[1]:

Այս հետազոտությունից պարզ է դառնում, որ քաղաքացիական հասարակությունը անվստահություն է հայտնում իշխանության նկատմաբ: Մյուս կողմից վերջին 20 տարվա ընթացքում Հայաստանը քաղաքական, տնտեսական և սոցիալական տարբեր զարգացումների դժվարին ճանապարհ է անցել, այդ թվում՝ անցումային շրջան, պատերազմի և երկրաշարժի հետևանքներ, տնտեսական և սոցիալական ճգնաժամ:

ՔՀԿ և պետական իշխանությունների միջև արդյունավետ համագործակցության խոչընդոտներից մեկը փոխադարձ անվստահության գործոնն է: Պետական պաշտոնյաները կարծում են, որ ՔՀԿ-ներն ընդհանուր առմամբ չունեն հետևորդներ և կոնկրետ կապեր այն համայնքների հետ, ում նրանք ներկայացնում են, և ավելի շատ իրականացնում են իրենց սեփական կամ դոնորների օրակարգը, քան ներկայացնում հանրային շահը: Ավելին՝ երբեմն ՔՀԿ-ներն անգամ ընկալվում են որպես շահույթ հետապնդող կառույցներ. առկա է այն կարծրատիպը, որը ՔՀԿ-ները ստեղծվում են զուտ գումար վաստակելու և բարեկամներին աշխատանքով ապահովելու նպատակով: Իշխանությունները նաև կասկածում են ՔՀԿ պրոֆեսիոնալիզմի և տեղեկատվության վերլուծության կարողության ու ոչ կառուցողական քննադատության փոխարեն հիմնավորված առաջարկներ տալու ունակության վրա: Մյուս կողմից՝ ՔՀԿ-ները երկար մտածում են այս կամ այն պետական մարմնի հետ համագործակցային հարաբերություններ նախաձեռնելիս՝ խուսափելով վարչարարական և անարդյունավետ գործընթացից:

ՔՀԿ-ներն ավելի շատ հետաքրքրված են կազմակերպական զարգացման, քան քաղաքականության մշակման ոլորտի դասընթացներով, որն արտացոլում է այն ենթադրությունը, որ շատ ՔՀԿ-ներ իրենց չեն դիտարկում որպես քաղաքականության մշակման գործընթացի դերակատարներ: Որպես կանոն, կոալիցիաներն ու ցանցերը, ինչպես նաև մի շարք խմբեր ու կազմակերպություններ միավորող քաղաքացիական շարժումները ավելի հաջողակ են լինում փոփոխություններ առաջացնելու և շահերի պաշտպանության իրենց ջանքերում հաջողության հասնելու գործում: Այսինքն՝ ՔՀԿ-ների միջև համագործակցության ընդլայնումը կնպաստի քաղաքականության մշակման ոլորտում ՔՀԿ-ների ազդեցության մեծացմանը:

## 2.3.Քաղաքացիական հասարակություն թեմայի ուսուցումը նորագույն մեթոդներով ԿԱԶԱ էլ.ուսուցման հարթակի օգնությամբ

<<ԿԱԶԱ>> հիմնադրամը, երկար տարիներ իրականացնելով քաղաքացիական կրթության ծրագրեր,մշակելով ոլորտի համար ուսուցողական գործիքներ/մեթոդներ և մեծապես կարևորելով քաղաքացիական կրթության խնդիրներով զբաղվող ուսուցանողների զարգացումն ու շարունակական կրթությունը, ստեղծել էր բաց, առցանց դասընթաց դասընթացավարների, ուսուցիչների և երիտասարդական աշխատողների համար[10]: Դասընթացի նպատակն էր ստեղծել հարթակ , որտեղ մենք կարող ենք ուսումնասիրել ոլորտի փորձագետների կողմից մշակված նյութեր, ծանոթանալ թե տեղական, թե միջազգային հետաքրքիր փորձերի,առաջադրանքների և վարժությունների օգնությամբ գործնականում կիրառել ստացած գիտելիքները,մտորել այդ թեմաների շուրջ մեր գործունեության շրջանակներում,կիսվել մեր փորձառնությամբ և կապ հաստատել այլ ուսուցանողների հետ՝ այդ կերպ հարստացնելով միմյանց շարունակական զարգացումն ու աշխատանքը: Ստորև ներկայացնում եմ դասապլանի մեկ օրինակ:

<< Կապերի հաստատում>>

Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը, ո՞վ և ի՞նչ է անում, ու՞մ համար:

**Թեմաները՝** << Քաղաքացիություն, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ>>

**Խմբի անդամների թիվը՝** 8-20

**Ժամանակը՝** 90 րոպե

**Համառոտ նկարագիրը՝** Այս վարժությունն ընդգրկում է բանակցություններ ժողովրդավարական հասարակարգերում քաղաքացիների,իշխանությունների,ՀԿ-ների և լրատվամիջոցների իրավունքների և պարտականությունների շուրջ:

**Նպատակները՝** .Նպաստել իրավունքների և պարտականությունների միջև առկա կապի ըմբռնանը:

.Զարգացնել ըմբռնումներ ՝ ժողովրդավարական հասարակարակարգում տարբեր հատվածների միջև առկաբարդ հարաբերությունների վերաբերյալ:

.Խրախուսել համագործակցությունն ու քաղաքացիական պատասխանատվության զգացումը:

**Նյութեր՝** .Թղթի մեծ թերթեր/Ա3 չափի/ կամ գրատախտակ յուրաքանչյուր խմբին

.Երկու տարբեր գույնի նշագրիչներ յուրաքանչյուր խմբին

.Լարերի կամ բրդյա թելի կծիկներ, նախընտրելի է կանաչ

.Կպչուն ժապավենների փաթույթ յուրաքանչյուր խմբին

.Մկրատ

**Նախապատրաստում՝** կտրել թելի 24 կտոր՝1,5մ երկարությամբ:

**Ցուցումներ**

1. Բացատրեք, որ վարժության նպատակը ժողովրդավարական հասարակարգում 4 հատվածների միջև տարբեր հարաբերությունների <<քարտեզ>> կազմելն է:
2. Մասնակիցներին բաժանեք 4 հավասար խմբերի՝ համապատասխանաբար ներկայացնելու ժաղովրդավարական հասարակարգի չորս դերակատարների՝ կառավարությանը, ՀԿ հատվածը,լրատվամիջոցներին և քաղաքացիներին:
3. յուրաքանչյուր խմբին փոխանցել թղթերը և նշագրիչները,խնդրեք, որ մտքերի գրոհ կազմակերպելու համար 10րոպե տրամադրեն այն դերին, ժողովրդավարական հասարակությունում խաղում են իրենք , այն է որոնք են այն հիմնական գործառույթները,որոնք նա կատարում է:Նրանք պետք է թղթի մեծ թերթին կարմիր նշագրիչով շարադրեն իրենց հինգ ամենակարևոր գործառույթները
4. Խմբերին ժողովեք մեկ տեղ՝ ներկայացնելու իրենց գաղափարները:Թույլ տվեք ներկայացնելնաև արձագանքները: Հարցրեք՝ արդյոք նրանք համաձայն են այս չորս դերակատարների հիմնանական գործառույթներին:Հնարավորություն տվեք խմբերին՝ փոփոխություններ կատարել իրենց ցուցակներու, եթե նրանք այդպիսի ցանկություն կունենան:
5. Այժմ կրկին առանձնացրեք խմբերին և խնդրեք մտքեր փոխանակել այն հարցի շուրջ, թե ինչ են ակնկալումմյուս յուրաքանչյուր դերակատարից: Նրանք պետք է թվարկենայս պահանջներն առանձին գլխագրերի տակ՝օգտագործելով կանաչ նշագրիչներ:Այս առաջադրանքի համար կարելի էհատկացնել 15 րոպե ժամանակ:
6. Երբ հատկացված ժամանակը մոտենա ավարտին, խնդրեք, որ խմբերն ըստ առաջնահերթության առանձնացնեն 6 ամենակարևոր պահանջները, և յուրաքանչյուր խմբի այդ պահանջները ներկայացնելու համար փոխանցեք կպչուն փաթույթն ու բրդյա թելերը:

7. Փոխանցեք <<Խաղի կանոնների>>-ի օրինակները,կարդացեք դրանք և հավաստիացեք, որ բոլորն ըմբռնեցին, թե այնուհետև ինչ պետք է անեն: Խնդրեք, որ խմբերն իրենց թղթի թերթերը բերեն սենյակի կենտրոն և քառանկյունաձև տեղավորեն հատակին՝ միմյանցից մոտ 1մ հեռավորությամբ:Խնդրեք, որ յուրաքանչյուր խմբի անդամները տեղավորեն իրենց անկյան մոտ:
8. Այժմ սկսվում են բանակցությունների շրջափուլերը: Յուրաքանչյուր շրջափուլին պետք է 10 րոպե հատկացնել: Հիշեցրեք մասնակիցներին,որ յուրաքանչյուր պահանջի ընդունմամբ մեկական կտոր բրդյա թելով կապվում են երկու համապատասխան թերթերը՝նշանավորելով պարտավորության ընդունումը:
9. Խաղավարտին չորս դերակատարները պետք է փոխկապակցված լինեն բրդյա թելերի բարդ ցանցով:Անցեք վերլուծության և գնահատման՝ մինչ մասնակիցները դեռևս նստած են քարտեզի վրա:

**Վերլուծություն և գնահատում**

- Խնդրեք մասնակիցներին, որ նայեն իրենց ստեղծած ցանցին և վերլուծեն վարժությունը: Արդյոք դժվար էր կռահել այն գործառույթները, որ ժողովրդավարության պայմաններում իրականացնում են իշխանությունները,ՀԿ-ները, լրատվամիջոցներն ու քաղաքացիները:
- Արդյոք խմբերի ներսում ինչ-ինչ տարաձայնություններ կային այս կամ այն պահանջն ընդունելու կամ մերժելու կապակցությամբ:
- Այլ խմբերի ներկայացրած որ պահանջը նրանք չընդունեցին: Որն է պատճառը:
- Կային արդյոք պարտավորություններ ,որոնք խմբերն ընդունեցին,չնայած մինչ այդ չէին ընդունել: Այժմ նրանք ինչ կարծիք ունեն:
- Արդյոք վարժությունը մասնակիցների համար ի հայտ բերեց ինչ-որ նորույթ ժողովրդավարական հասարակության մասին, որ նրանք նախկինում չգիտեին: Արդյոք եղան անակնկալներ:

**Տարբերակներ**

Վարժությունը կարելի է ավելի կամ պակաս չափով բարդացնել՝ օգտագործելով հասարակությունում առկա <<դերակատարների>> տարբեր թվաքանակ.օրինակ՝ հնարավոր է ավելացնել <<գործարարներին>>,<<փոքրամասնություններին>> կամ խոցելի խմբերին: Սակայն դա բանակցային գործընթացը ավելի կբարդացնի :

Կարող եք օգտագործել նաև երիտասարդների կյանքին ավելի անմիջականորեն առնչվող խմբեր ,օրինակ փոխարինել <<երիտասարդներով>> և <<դպրոցով>>: Վարժությունը կարող է պարզեցվել խմբերից մեկին կամ մի քանիսին հեռացնելու միջոցով, օրինակ՝ աշխատելով միայն <<քաղաքացիների>> և <<կառավարության>> հետ: Հնարավոր է՝ ցանկանաք վարժությունը փորձել առանց աղյուսակ օգտագործելու.բանակցային գործընթացի ժամանակ առաջին խմբից որևէ մեկը պետք է պահի բրդյա թելի մի ծայրը, իսկ մյուս ծայրն առաջարկի երկրորդ խմբից որևէ մեկին: Եթե մասնակիցները բռնած պահեն թելերի ծայրերը, վարժության ավարտին ամբողջ <<հասարակությունը>> պետք է որ փոխադարձաբար կապված լինի:

**Հետագա քայլերի առաջարկներ**

Խումբը կարող է շարունակել լրացնել աղյուսակը՝ ներգրավելով հասարակության տարբեր խմբերի: Հնարավոր է՝ ավելի համար նրանք աղյուսակը ցանկանան փոխադրել թղթի մեկ այլ թերթի վրա, այնուհետև տարբեր գույներով ներկեն կապերը. օրինակ կառավարությունը՝ կարմիր, լրատվամիջոցները ՝ դեղին,ՀԿ-ները՝ կանաչ և այլն: Մտածեք. թե ձեր սեփական հասարակությունում որ կապերը լավ զարգացած չեն, և թե ինչ կարելի է անել՝ իրավիճակը շտկելու համար:Եթե խումբը ցանկանա աշխատել ավելի գործնական նախագծի վրա, որն ընդգրկում է առնչություններ և համագործակցություն կառավարման տեղական մարմինների, տեղական համայնքի ՀԿ-ների և լրատվամիջոցների միջև, կարող են կատարել <<Զբոսայգի ՝ մեկ գիշերում>> վարժությունները:

**Խաղի կանոնները**

Վարժության նպատակն այն է, որ յուրաքանչյուր <<դերակատար>> հասնի իր պահանջների ընդունմանը մյուս դերակատարներից յուրաքանչյուրի կողմից: Բանակցությունները ընթանում են դերակատար զույգերի միջև՝ 3 շրջափուլով.

Շրջափուլ 1.բանակցում են քաղաքացիներն ու ՀԿ-ները, լրատվամիջոցներն ու կառավարությունը: 2.բանակցում են քաղաքացիներն ու լրատվամիջոցները, ՀԿ-ներն ու կառավարությունը:3.բանակցում են քաղաքացիներն ու կառավարությունը, լրատվամիջոցները և ՀԿ-ները: Զույգերն իրենք են որոշում, թե ով պետք է սկսի, և հերթականությամբ պահանջներ են ներկայացնում միմյանց: Պահանջ ներկայացնելիս պետք է այն ձևակերպեն հստակ և համառոտ: Շարունակեք բանակցություններն այնքան ժամանակ, մինչև որ կքննարկվեն բոլոր պահանջները: Շարունակեք բանակցությունները յուրաքանչյուր շրջափուլում, մինչև որ կապեր կհաստատվեն չորս դերակատարների միջև:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիական հասարակությունը, ինչպես և պետությունը, մարդկության պատմական զարգացման հետևանք է, որի առաջացման և ձևավորման ահնրաժեշտ պայմանն այն է, որ քաղաքացիները մասնավոր սեփականության հիմքի վրա ձեռք են բերում տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական ինքնուրույնություն: Այստեղ առաջնայինը մարդկանց անհատականությունն ու իրավունքների համակարգի հավասարությունն է:

Քաղաքաքացիական հասարակությունը արդարության սկզբունքի վրա հիմնված հանրություն է, որտեղ մարդն իր համար կարող է գտնել բարձրագույն բարիք: Անհատ, պետություն, քաղաքացիական հասարակություն ներդաշնակ փոխհարաբերությունները կարևոր նշանակություն ունեն ազգային անվտանգության ապահովման գործում: Անհատը՝ որպես ազգային անվտանգության համակարգի բարձրագույն նպատակ, իր անվտանգության հետ կապված խնդիրների լուծումը լիազորում է քաղաքացիական հասարակությանը, հասարակությունն էլ, իր հերթին՝ պետությանը:

Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման և մոբիլիզացման ձևերից է սոցիալական ցանցը, որտեղ իրականանում է քաղաքացիական սուր արձագանք առաջացնող տեղեկատվական նյութերի տեղադրման պրակտիկան: Ամենատարբեր մասշտաբների քաղաքացիական նախաձեռնությունների համար սոցիալական ցանցերի ձգողականության աճը վկայում է որոշակի մշակույթի ձևավորման մասին (օրինակ պետական պաշտոնյաներին ուղղված բաց նամակներ տեղադրելը): Հայաստանում Facebook-ը քաղաքացիական ակտիվության կարևոր շարժիչ ուժ է: Սոցիալական ցանցերում ստեղծված խմբերի գործունեությունը նպատակամիտված է հասարակական հնչեղության մակարդակի հասցնելու քաղաքացիական տարբեր հիմնախնդիրներ, որոնց մի մասը լուծում է ստացել կառավարական մակարդակով: Սակայն այս ամենի զուգահեռ ՔՀԿ-ների մասնակցությունը կառավարման ոլորտում ցածր մակարդակի վրա է գտնվում, ինչ էլ տանում է պետություն-անձ կապերի թուլացման:

Այսպիոսվ ամփոփելով վերոհիշյալ մոտեցումները կցանկանայի ներկայացնել հետևյալ եզրակացությունները՝

- Նույնիսկ ամբողջատիրական, միապետական ռեժիմների պայմաններում կարող են գոյություն ունենալ քաղաքացիական հասարակության ձևավորման տարրերը, սակայն անհրաժեշտ պայմանների բացակայությունը, որը ապահովում է պետական իշխանությունից այդ

տարրերի ինքնուրույնությունը՝ ինքնակազմակերպման և ինքնա-գործունեության իրավունքը, զրկում է հասարակությանը քաղաքացիական հասարակություն լինելու հնարավորությունից: Այստեղ կարևորն այն է, որ յուրաքանչյուր ոք հստակ իմանա՝ ինչ չափով է ինքը պաշտպանված կողմնակի միջամտությունից և ինչ դեպքերում կարող է պետությունը ազդել իր ծրագրերի իրականացման վրա:

- Ազգային անվտանգության ապահովման համար պետական հաստատությունների վրա քաղաքացիական հասարակության ազդեցության այնպիսի տեխնոլոգիաներ են անհրաժեշտ, որոնք կապահովեն սոցիալական հիմնախնդիրների լուծումը և կնպաստեն պետության, հասարակության, անհատի կայուն զարգացմանը:
- Քաղաքացիական հասարակությունն ազդում է ինչպես առանձին անհատի անվտանգության, այնպես էլ պետության անվտանգության վրա: Ժամանակակից աշխարհում այն հանդիսանում է անվտանգության սուբյեկտ և իր շուրջ ձևավորում է նոր սոցիալ-քաղաքական տարածություն՝ պաշտպանելով իր շահերը և բավարարելով իր պահանջմունքները:
- Պետության և ՔՀԿ-ների փոխհարաբերությունների նախընտրելի տարբերակը համագործակցությունն է, փոխադարձ վերահսկողությունը և փոխներթափանցվածությունը՝ երբ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն ընդգրկվում են պետական իշխանության տարբեր օղակներում, իսկ պետական իշխանության ներկայացուցիչները մասնակցում են քաղաքացիական կազմակերպությունների գործունեությունը: Դա թույլ է տալիս հաղթահարել քաղաքացիական հասարակության կազմակերպություններ-պետություն հարաբերություններում օտարվածությունն ու բևեռացումը՝ նպաստելով արդյունավետ երկխոսությանն ու համագործակցությանը:

Շատ կարևոր է, որ սովորողները դեռևս 9-րդ դասարանից պատկերացում ունենան և ապա 11-րդ դասարանում հստակ ձևավորվի գիտակցություն հասարակության, քաղաքացիների կարևոր դերը ընթացող բոլոր գործընթացներում: Հասկանան, որ իրենցից յուրաքանչյուրը կարևոր արժեք են և որքան գիտակից, իրազեկ և ակտիվ լինեն, այդքան կնպաստեն իրենց երկրի զարգացմանը:

## Գրականության ցանկ

1. Քաղաքացիական հասարակության ֆորում, «Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը» հետազոտություն, 2015թ.

2. Easton D. A. Framework for Political Analysis. London; Sydney; Toronto; New Delhi; Tokyo, 1965

3. Jaeger H., Hegel's reluctant realism and the transnationalisation of civil society, Review of International Studies. 2002. T. 28. № 3

4. Waszek N., [book review] The scottish enlightenment and Hegel's account of 'civil society', Science and Society. 1990

5. Губайдулина А.С., Проблема понимания гражданского общества в современной российской общественной науке, Теории и проблемы политических исследований. 2012

6. Давидович Б. Е., М. С. Коган , Диалектика необхомодимости и свобода, «Философские науки», М. 1985 стр. 53

7. Кравченко Н.Ю., Кризис концепта гражданской идентичности, Известия Саратовского университета. Новая серия. Серия: Социология. Политология. 2015. Т. 15. № 3. С. 14-18.

8. Купцов В.А., Правовое государство и гражданское общество: некоторые аспекты взаимодействия, В сборнике: Актуальные проблемы российской государственности и права Сборник материалов Международной научно-практической конференции.. 2015

9. Марченко М.Н. Гражданское общество: проблемы определения понятия и основные характеристики, Вестник Московского государственного областного университета. Серия: Юриспруденция. 2007

10. https://elearning.kasa.am/course/view.php?id=58